Հայաստանի Հանրապետությունում դեռևս ձևավորված չեն պաշտպանական կրթության համակարգի գործարկման ու կառավարման մասին հստակ պատկերացումներ, որոնք համահունչ լինեին այդ ոլորտում գոյություն ունեցող առաջավոր միջազգային մշակույթին: Միևնույն ժամանակ, պաշտպանական կրթության համակարգը, լինելով ՀՀ ընդհանուր կրթական համակարգի մաս, պետք է հիմնվի նույն սկզբունքների վրա: Ուստի պաշտպանական կրթության համակարգի զարգացումը ևս պետք է խարսխվի Բոլոնիայի գործընթացի վրա, որի նպատակն է ստեղծել եվրոպական բարձրագույն կրթության տարածք և աջակցել բարձրագույն կրթության եվրոպական մոդելների տարածմանը ամբողջ աշխարհում<sup>6</sup>:

Քանի որ պաշտպանական անվտանգությունն ապահովվում է պաշտպանական-անվտանգային ու ռազմական չափումներում, ապա պաշտպանական կրթությունը ևս պետք է իրականացվի դրան համապատասխան՝ ներառելով «պաշտպանական-անվտանգային քաղաքագիտական» և «ռազմական-գորային» բաղադրիչները:

**Պաշտպանական-անվտանգային քաղաքագիտական կրթությունը** անվտանգության պաշտպանական ոլորտի վերաբերյալ մասնագիտական ու քաղաքագիտական գիտելիքների ուսուցման և խաղաղ ու պատերազմական պայմաններում այդ գիտելիքները կիրառելու հմտությունների ձևավորման կարգավորված գործընթաց է: Այն նպատակաուղղված է արտաքին զինված հարձակումից պետության ամբողջ պաշտպանական ներուժի կիրառմամբ պետության, նրա բնակչության, տարածքային ամբողջականության և ինքնիշխանության պաշտպանության ղեկավարման ու կառավարման համար կադրային ռեսուրսի պատրաստմանը: Պաշտպանական-անվտանգային կրթությունը

<sup>2</sup> Տես Հ. Ս. Քոթանջյան, Լ. Ա. Մարտիրոսով, Տ. Ռ. Մարտիրոսյան, Դ. Ս. Չիլինգարյան, Նշ. աշխ.:

<sup>3</sup> Տես «Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարար Մեյրան Օհանյանի 2009 թվականի տարեմուտի ուղերձը ՀՀ ՁՈՒ-ի անձնակազմին»: «ՀԲ», 2008, հմ. 4:

<sup>4</sup> Տես Վ. Հ. Մարգարյան, Անձնակազմի բարոյահոգեբանական վիճակը և մարտական ոգին՝ որպես ՀՀ ՁՈՒ-ի բարձր մակարդակի մարտունակության ապահովման նախադրյալ. տեսական առումներ: «ՀԲ», 2009, հմ. 1–2:

<sup>5</sup> Տես Հ. Ս. Քոթանջյան, Լ. Ա. Մարտիրոսով, Տ. Ռ. Մարտիրոսյան, Դ. Ս. Չիլինգարյան, Նշ. աշխ.:

<sup>6</sup> Տես Յու. Լ. Մարգարյան, Ա. Ս. Բուդաղյան, Բոլոնիայի գործընթացը Հայաստանում: Ե., 2008, էջ 7:

պաշտպանական կրթության բաղկացուցիչ մասն է և պաշտպանական քաղաքականության արդյունավետության ապահովման գրավականը:

**Ռ-ազմական կրթությունը** ռազմական անվտանգության վերաբերյալ մասնագիտական գիտելիքների ուսուցման և խաղաղ ու պատերազմական պայմաններում այդ գիտելիքները կիրառելու հմտության ձևավորման կարգավորված գործընթաց է: Այն նպատակաուղղված է այլ պետության զինված հարձակումից յուրային պետության, նրա բնակչության, տարածքային ամբողջականության և ինքնիշխանության զինված պաշտպանությանը, զինված ուժերի մասնակցությամբ ազգային ու պետական շահերի, ինչպես նաև միջազգային խաղաղության ու անվտանգության ապահովման համար կադրային ռեսուրսի պատրաստմանը: Ռ-ազմական կրթությունը պաշտպանական կրթության բաղկացուցիչ մասն է և ռազմական քաղաքականության արդյունավետության ապահովման գրավականը:

Ընդամին կարևոր է որպես մեկ ամբողջություն դիտել պաշտպանական կրթության և կադրերի պաշտոնեական առաջխաղացման համակարգերը, որոնք կադրային քաղաքականության հիմնասյուներն են: Այդ միասնական համակարգի հիմքում «ուսուցում ծառայության մնացած ժամանակահատվածի համար» սկզբունքի փոխարեն պետք է դրվի «ուսուցում ամբողջ ծառայության ընթացքում» սկզբունքը, որը, մեր կարծիքով, պետք է դառնա պաշտպանական ոլորտի կրթական բաղադրիչի բարեփոխման կարգախոսը:

Ներկայումս միջգերատեսչական ձևաչափով մշակվում է ՀՀ ռազմական կրթության համակարգի բարեփոխումների հայեցակարգի նախագիծ: Մեր կարծիքով՝ նշված ոլորտում նպատակների և ձեռնարկվելիք գործողությունների հստակեցման համար անհրաժեշտ է մշակել ՀՀ պաշտպանական կրթության և կադրերի տեղաբաշխման համակարգի զարգացման ռազմավարություն (այսուհետև՝ Ռ-ազմավարություն): Ի դեպ, պաշտպանական համակարգի ղեկավարությանը առաջարկություններով սնուցող մասնագիտական խումբը արդեն մշակել է բարեփոխումների ճանապարհային քարտեզը:

Որպես Ռ-ազմավարության նպատակներ կարող են սահմանվել.

– ՀՀ պաշտպանության խնդիրների լուծումն ապահովելու ունակ կադրերի պատրաստումն ու ճիշտ տեղաբաշխումը,

– կրթության (վերապատրաստման) միջոցով կադրերի պաշտոնեական առաջխաղացման օպտիմալ մեխանիզմների մշակումը և գործարկումը:

Որպես Ռ-ազմավարության խնդիրներ առաջարկում ենք սահմանել.

– պաշտպանական կրթության վերածումը անընդհատ և ըստ փուլերի ու աստիճանների փոխհամաձայնեցված գործընթացի,

– պաշտպանական կրթության համակարգի ինտեգրումը հանրապետության ընդհանուր կրթական համակարգին՝ Բոլոնիայի սկզբունքներին համապատասխանությամբ,

– երիտասարդ սերնդի նախնական զինվորական պատրաստման ու ռազմա-

հայրենասիրական դաստիարակության կազմակերպումը պատշաճ մակարդակով,

– Ձինված ուժերի կրտսեր սպայական ու հրամանատարական կազմերի համար համապատասխան աստիճանի ռազմական կրթության և վերապատրաստման (որակավորման բարձրացման) կազմակերպումը,

– պարտադիր զինվորական ծառայության գորակոչված բարձրագույն կրթությամբ զինծառայողների զինվորական մասնագիտական պատրաստման կազմակերպումը,

– Ձինված ուժերի համար նեղ մասնագետներ պատրաստելու նպատակով քաղաքացիական բուհերի ուսանողների ռազմական կրթության կազմակերպումը,

– ավագ և բարձրագույն սպայական ու հրամանատարական կազմի, ինչպես նաև ռազմավարական մակարդակի պաշտպանական խնդիրների լուծմանն առնչվող ՀՀ գերատեսչությունների ավագ և բարձրաստիճան պաշտոնատար անձանց պաշտպանական-անվտանգային քաղաքագիտական կրթության ու վերապատրաստման (որակավորման բարձրացման) կազմակերպումը,

– հատուկ օժտված երիտասարդներին պաշտպանական կրթության համակարգի, այնուհետև՝ պաշտպանական համակարգի մեջ ներգրավելու քաղաքականության մշակումը և վարումը,

– պաշտպանության նախարարության համակարգում քաղաքացիական հատուկ ծառայության անցնող զինծառայողների վերամասնագիտացումը, ինչպես նաև քաղաքացիական ծառայողների համապատասխան վերապատրաստումը,

– օտարերկրյա պետությունների կրթական հաստատություններում ՀՀ պաշտպանական ոլորտի կադրերի պատրաստման ու վերապատրաստման քաղաքականության մշակումը և վարումը,

– կադրերի պաշտոնեական առաջխաղացման համակարգի համապատասխանեցումը միջազգային չափանիշներին՝ հայրենական ու միջազգային փորձի համադրմամբ և միջազգային համագործակցության միջոցով:

Ներկայացնենք պաշտպանական կրթության և կադրերի պաշտոնեական առաջխաղացման միասնական համակարգի մի տարբերակ, որը մշակվել է առկա կարիքների և ռեսուրսների հաշվառմամբ:

**Պաշտպանական կրթության համակարգը պետք է ներառի.**

ա) նախնական պատրաստման հատվածում՝

– նախնական զինվորական պատրաստում դպրոցներում, ռազմամարզական վարժարաններում, մարզատեխնիկական և արտադպրոցական դաստիարակություն իրականացնող կազմակերպություններում (մանկապատանեկան ստեղծագործական և գեղագիտական կենտրոններ, երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ, ակումբներ, պատանի հայրենասերների, տեխնիկների, բնասերների և տուրիստական կայաններ, մարզադպրոցներ, առողջարարական ճամբարներ և այլն),

– աճող սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակություն մանկապար-

տեղներում, դպրոցներում, ռազմամարզական վարժարաններում, մարզատեխնիկական և արտադպրոցական կրթության կազմակերպություններում (այն պետք է լինի հնարավորինս բազմապլան՝ առավելագույնս արտացոլվելով կրթական ծրագրերում ու միջոցառումներում),

բ) ռազմական կրթության հատվածում՝

– սերժանտական կազմի ռազմական մասնագիտական պատրաստում,

– հրամանատարանարտավարական կրթություն՝ մարտավարական օղակի հրամանատարի համար բազային գիտելիքների ապահովմամբ (ռազմական բակալավրիատ)\*,

– մարտավարական օղակի սպայական և հրամանատարական կազմի վերապատրաստման դասընթացներ՝ պաշտոնեական առաջխաղացմամբ համապատասխան զորային և շտաբային պաշտոնները համալրելու համար (գերատեսչական ձևաչափ),

– օպերատիվ-ռազմավարական կրթություն՝ համապատասխան զորային և շտաբային պաշտոնները համալրելու համար (ռազմական մագիստրատուրա)\*\*,

– ռազմական ասպիրանտական կրթություն՝ ռազմական գծով գիտամանկավարժական, ինչպես նաև առանձին դեպքերում՝ շտաբային ծառայության համար կադրերի պատրաստման նպատակով (հեռանկարում ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի կերպափոխմամբ ստեղծվելիք ռազմական համալսարանում),

գ) պաշտպանական-անվտանգային քաղաքագիտական գծով կրթության հատվածում՝

– ավագ (գնդապետ) և բարձրագույն սպայական ու հրամանատարական կազմի, ինչպես նաև ռազմավարական մակարդակի պաշտպանական խնդիրների լուծմանն առնչվող ՀՀ գերատեսչությունների ավագ և բարձրաստիճան պաշտոնատար անձանց համար վերապատրաստման դասընթացների կազմակերպում,

\* Ա. Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն ինստիտուտում ճարտարագիտության բակալավրին ու զինվորական բակալավրին համապատասխան կրթություն իրականացվում է 2001 թվականից: Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի կերպափոխմամբ ստեղծվելիք ռազմական համալսարանում կրթական ծրագրերի վերանայմամբ և առկա գիտամանկավարժական ռեսուրսի ու քառամյա կրթության միջոցով կազմակերպվելու է հրամանատարանարտավարական կրթություն՝ ավարտողներին ճարտարագիտության բակալավրի ու զինվորական բակալավրի աստիճանների և «լեյտենանտ» զինվորական կոչման շնորհմամբ: Շրջանավարտներին տրվելու է հիմքային գիտելիքների համալիր, որով ապահովվի վերապատրաստման միջոցով պաշտոնեական առաջխաղացում մինչև գումարտակի հրամանատար:

\*\* Վերապատրաստման դասընթացները և օպերատիվ-ռազմավարական ռազմական կրթությունը նույնպես նախատեսվում են Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի կերպափոխմամբ ստեղծվելիք ռազմական համալսարանում՝ ըստ գորատեսակների: Ռազմական մագիստրատուրայի և հեռանկարում ասպիրանտուրայի գործարկման համար գիտամանկավարժական կադրերի պատրաստումը սկզբնական շրջանում (5-7 տարի) կիրականացվի ռազմական գիտությունների գծով գիտական կադրեր պատրաստող համապատասխան օտարերկրյա հաստատություններում:

–ավագ (զնդապետ) և բարձրագույն սպայական ու հրամանատարական կազմի, ինչպես նաև ՀՀ համապատասխան գերատեսչությունների ավագ և բարձրաստիճան պաշտոնատար անձանց համար մագիստրոսական կրթության կազմակերպում,

–ավագ (զնդապետ) և բարձրագույն սպայական ու հրամանատարական կազմի, ՀՀ համապատասխան գերատեսչությունների ավագ և բարձրաստիճան պաշտոնատար անձանց, ինչպես նաև ոլորտի մասնագետների համար ասպիրանտական կրթության կազմակերպում:

Նախնական պատրաստման և ռազմական կրթության հատվածներում կրթական ծրագրերը պետք է պարունակեն համապատասխան պաշտպանական-անվտանգային քաղաքագիտության տարրեր:

Հայաստանում պաշտպանական-անվտանգային քաղաքագիտական կրթության բարձրագույն՝ ռազմավարական տրամաչափի օղակ չկա, ուստի դրա բնութագրումը պահանջում է ավելի մանրամասն քննարկում:

Պաշտպանական-անվտանգային քաղաքագիտական կրթությունը պետք է միտված լինի ՀՀ-ում պաշտպանական-անվտանգային ոլորտի կադրերի ու փորձագետների մասնագիտական միջավայրի ձևավորմանը՝ պաշտպանության նախարարության շուրջ այդ ոլորտի միջգերատեսչական-մասնագիտական մտավոր ներուժի համախմբման և դրանով իսկ ռազմավարական մակարդակի պաշտպանական խնդիրների լուծման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծման նպատակով: Այն է՝ արդյունավետ պաշտպանական-անվտանգային քաղաքականություն մշակելու և իրականացնելու ունակ ավագ և բարձրաստիճան պաշտոնյաների, այդ թվում՝ ավագ և բարձրագույն կազմի սպաների, պատրաստումը անհրաժեշտ գիտելիքների և համապատասխան հմտությունների ձևավորման միջոցով: Ընդամիս կրթական ծրագրերը պետք է մշտապես արտացոլեն Հայաստանի արտաքին ու ներքին անվտանգային միջավայրում տեղի ունեցող և կանխատեսվող փոփոխությունները, ինչը ենթադրում է կրթական և գիտահետազոտական գործընթացների փոխհամաձայնեցվածություն ու փոխազդեցություն:

Ուստի անհրաժեշտ է ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում ստեղծել համապատասխան գիտակրթական հաստատություն: Նման հաստատություն դառնալու հնարավորություն ունի ներկայումս գործող ՀՀ ՊՆ Դրաստամատ Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտը (ԱՌ-ՀԻ), որի զարգացման ծրագրով նախատեսվում է փոլյային կերպափոխում քաղաքագիտական-անվտանգային հետազոտություններ և ուսուցում իրականացնող Պաշտպանական ազգային համալսարանի (ՀՀ ՊՆ ՊԱՀ)<sup>7</sup>: Այս գործընթացը պահանջում է համապատասխան իրավական, կազմակերպական և նյութատեխնիկական բազայի ձևավորում:

<sup>7</sup> Այս մասին ավելի հանգամանորեն տես Հ. Ս. *Լոբսևիչյան*, Հայաստանի պաշտպանության գիտակրթական համակարգի բարձրագույն բաղադրատարրը. Ազգային ռազմավարական հետազո-

Անշուշտ, պաշտպանական կրթության համակարգի ստեղծմամբ լիովին չի լուծվի Հայաստանի պաշտպանական ոլորտը անհրաժեշտ կադրերով ապահովելու խնդիրը. հարկ կլինի վերանայել օտարերկրյա պետությունների կրթական հաստատություններում ՀՀ-ի համար կադրերի պատրաստման ու վերապատրաստման քաղաքականությունը: Վերանայումը պետք է կատարվի ըստ անձնակազմի առանձին կատեգորիաների և մասնագիտությունների:

**Կադրերի տեղաբաշխման համակարգը պետք է ներառի՝**

ա) արդեն ձևավորված կադրային տվյալների բազայի հիման վրա ստեղծվելիք կադրային բանկ,

բ) կադրային ռեսուրսների պլանավորման, կադրերի ընտրության, հերթափոխման և երիտասարդացման միասնական մեխանիզմներ,

գ) պաշտոնի նշանակման հստակ և թափանցիկ մեխանիզմներ,

դ) զինվորական պաշտոնների վկայագրեր (անձնագրեր),

ե) պաշտոնեական առաջխաղացման ապահովման նպատակով որակավորման ու ատեստավորման մեխանիզմներ,

զ) պաշտոնեական առաջխաղացումը կրթությամբ և վերապատրաստմամբ (որակավորման բարձրացմամբ) պայմանավորելու մեխանիզմներ: Օրինակ՝ ՀՀ ՊՆ ՊԱՀ-ում ստացած պաշտպանական-անվտանգային քաղաքագիտական կրթությունն ու վերապատրաստումը պետք է համարվեն ավագ և բարձրագույն սպայական կազմի, ինչպես նաև պաշտպանական-անվտանգային խնդիրների լուծմանն առնչվող ՀՀ մյուս գերատեսչությունների ավագ և բարձրաստիճան պաշտոնատար անձանց պաշտոնեական առաջխաղացման կարևոր պայման: Ուստի անհրաժեշտ է մշակել և սահմանել համապատասխան մասնագիտական որակավորման ու առաջխաղացման հարաբերակցման նորմատիվ-իրավական համակարգ:

**Պաշտպանական կրթության համակարգի** ձևավորման ու բնականոն կենսագործունեության համար անհրաժեշտ է, որ ոլորտի կրթական հաստատությունները լինեն գործնասեր և դրանցում իրականացվի զինվորական ծառայություն: Մինչդեռ գործող օրենսդրությամբ որոշակիացված չէ Ձինված ուժերի գործնասերի կազմակերպարավական ձևը, և այդ պատճառով դրանք չեն կարող գործել որպես քաղաքացիաիրավական հարաբերությունների սուբյեկտ: Այս խնդրի լուծում կարող է լինել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 62-րդ հոդվածի պահանջների զարգացմամբ «Պետական զինվորական հիմնարկների մասին» ՀՀ օրենքի ընդունումը: Այդ օրենքով գործնասերը պետք է սահմանվեն որպես պետական հիմնարկներ, որոնցից պաշտպանական ուսուցում իրականացնողների համար նախատեսվեն համապատասխան առանձնահատկություններ: Ըստ այդմ անհրաժեշտ կլինի այդ օրենքի պահանջներից բխող փոփոխություններ և լրացումներ կատարել «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհա-

ությունների ինստիտուտի փուլային կերպափոխումը Պաշտպանական ազգային համալսարանի: «ՀԲ», 2010, հմ. 1:

կան մասնագիտական կրթության մասին» ու «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքներում:

Այսպիսով՝ ՀՀ ազգային անվտանգության ապահովման համար պահանջվում են ներքին ու արտաքին անվտանգային միջավայրների հետազոտում ու գնահատում, հնարավոր զարգացումների գիտականորեն հիմնավորված կանխատեսում: Տարածաշրջանում ձևավորված անվտանգային միջավայրում առկա սպառնալիքների բնույթը ՀՀ-ի համար հրամայական է դարձնում առաջին հերթին ապահովել իր անվտանգությունը պաշտպանական ոլորտում: Այս բարդ խնդրի արդյունավետ և հավաստի լուծումը պահանջում է պաշտպանական անվտանգային ոլորտում բարձր մասնագիտական որակավորում ունեցող կադրերի ու մասնագետների առկայություն և նրանց ներդաշնակ գործունեություն: Ուստի անհրաժեշտություն է ծագում պաշտպանական ոլորտի կրթական համակարգը համապատասխանեցնելու արդի պահանջներին և պաշտպանական-անվտանգային պրոբլեմներով զբաղվող գերատեսչությունների մասնագիտական մտավոր ներուժը համախմբելու պաշտպանության նախարարության շուրջ, ինչը կնպաստի անվտանգային խնդիրների արդյունավետ ու պատեհաժամ լուծմանը, պետության պաշտպանական ներուժի մեծացմանը:

## ОСНОВЫ СТРАТЕГИИ РАЗВИТИЯ СИСТЕМЫ ОБОРОННОГО ОБРАЗОВАНИЯ И РАССТАНОВКИ КАДРОВ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

*М. С. КАРАПЕТЯН, полковник, начальник Управления кадров и военного образования МО РА, В. Г. МАРГАРЯН, полковник, кандидат психологических наук, доцент, заместитель главного редактора военно-научного журнала «Айкакан банак», В. П. АВЕТИСЯН, подполковник, заместитель главного редактора военно-научного журнала «Айкакан банак»—юрист, Б. П. ПОГОСЯН, кандидат исторических наук, ученый-аналитик ИНСИ МО РА, К. К. БАГДАСАРЯН, ученый-аналитик ИНСИ МО РА*

### РЕЗЮМЕ

Решение приоритетных для РА задач оборонной безопасности и наращивание оборонного потенциала государства требуют наличия в оборонно-безопасностной сфере высококвалифицированных кадров и специалистов, а также их взаимосогласованную деятельность.

Для четкого формулирования целей развития системы оборонного образования и путей их достижения целесообразно разработать и принять Стратегию развития системы оборонного образования и расстановки кадров РА. В качестве главных целей Стратегии необходимо определить подготовку и оптимальное распределение кадров, способных обеспечивать решение оборонных задач РА всех уровней, разработку и

внедрение механизмов оптимальной системы должностного продвижения кадров соотносительно с образованием (переподготовкой).

С учетом нужд и ресурсов РА в данной сфере представлен вариант единой системы оборонного образования и расстановки кадров.

Систему оборонного образования предлагается формировать в трех сферах: начальной подготовки, военной подготовки и оборонно-безопасностной политологической подготовки стратегического уровня.

Система оборонного образования должна включать:

а) в сфере начальной подготовки:

– начальную военную подготовку в школах, военно-спортивных лицеях, в организациях, осуществляющих спортивно-техническое и внешкольное воспитание;

– военно-патриотическое воспитание подрастающего поколения в детских садах, школах, военно-спортивных лицеях, в организациях, осуществляющих спортивно-техническое и внешкольное обучение (должно быть по возможности многоплановым, с максимальным отражением в учебных программах и мероприятиях);

б) в сфере военного образования:

– военную подготовку сержантского состава;

– командно-тактическая подготовка с обеспечением базовых знаний для командира тактического звена (военный бакалавриат);

– курсы переподготовки офицерского и командного состава тактического звена для комплектации соответствующих войсковых и штабных должностей посредством должностного продвижения (ведомственный формат);

– оперативно-стратегическое образование для замещения соответствующих войсковых и штабных должностей (военная магистратура);

– военное аспирантское образование (адъюнктура) в целях подготовки научно-педагогических кадров, а в отдельных случаях – кадров для штабной службы (в Военном университете, создаваемом путем трансформации Военного института);

в) в сфере оборонно-безопасностного политологического образования:

– курсы по переподготовке старшего (полковник) и высшего офицерского и командного состава, а также старших и высших должностных лиц ведомств РА, имеющих отношение к оборонно-безопасностным проблемам;

– организация магистрского образования для старшего (полковник) и высшего офицерского и командного составов, а также старших и высших должностных лиц ведомств РА, имеющих отношение к решению оборонно-безопасностных задач;

– организация аспирантского образования по линии политологии

безопасности для старшего (полковник) и высшего офицерского и командного состава, старших и высших должностных лиц ведомств РА, имеющих отношение к решению оборонно-безопасностных задач, а также специалистов этой сферы.

В сферах начального образования и военного образования программы обучения должны включать соответствующие политологические элементы по оборонной безопасности.

Исходя из того, что в Республике Армения отсутствует высшее звено оборонно-безопасностного политологического образования, становится насущной необходимость создания соответствующего заведения. Оптимальным решением этой задачи может стать поэтапная трансформация действующего ИНСИ им. Д. Канаяна МО РА в Национальный университет обороны МО РА (НУО), который наряду с исследовательской деятельностью будет заниматься обучением в сфере политологии безопасности старшего и высшего офицерского и командного составов ВС, а также старших и высших должностных лиц тех ведомств РА, деятельность которых включает решение оборонно-безопасностных задач. Тем самым, НУО будет консолидировать весь оборонно-безопасностный межведомственный интеллектуальный ресурс республики вокруг МО РА с целью координации деятельности в целях обеспечения оборонной безопасности РА.

Предлагается также разработка законодательного пакета с целью обеспечения деятельности учреждений оборонного образования в качестве войсковых частей.

## THE PRINCIPLES OF THE STRATEGY OF DEVELOPING THE SYSTEM OF DEFENSE EDUCATION AND PERSONNEL ARRANGEMENT OF THE REPUBLIC OF ARMENIA

*M. S. KARAPETYAN, Colonel, Head of the Directorate of Staff and Military Education, MOD, RA, V. H. MARGARYAN, Colonel, PhD in Psychological Sciences, Associate Professor, Deputy Editor-in-Chief of «Haikakan Banak» Defense-Academic Journal, V. P. AVETISYAN, Lieutenant-Colonel, Deputy Editor-in-Chief of «Haikakan Banak» Defense-Academic Journal, Lawyer, B. P. POGHOSYAN, PhD in Historical Sciences, Research Fellow, INSS, MOD, RA, K. K. BAGHDASARYAN, Research Fellow, INSS, MOD, RA*

### SUMMARY

Meeting the RA defense security priorities and increasing the state's defense potential require highly skilled personnel and specialists in the defense security sphere, as well as their concerted actions.

It is expedient to elaborate and adopt the Strategy of developing the RA system of defense education and personnel arrangement for clear-cut formu-

lation of the goals of developing the defense education system and ways to achieve them. The training and the optimal placement of a personnel able to settle the RA defense issues of all levels, the elaboration and introduction of mechanisms of optimal system of personnel promotion in relation to the education (retraining) should be among the main objectives of the Strategy.

In terms of the RA needs and resources in this sphere a variant of a unified system of defense education and personnel arrangement is given.

The defense education system is proposed to be developed in three spheres: initial training, military training and defense security oriented political training of strategic level.

The system of defense education must include:

a) in the sphere of initial training;

– initial military training at schools, military and physical training lycées, in the organizations implementing sports and technical and out-of-school training;

– military-patriotic training of the rising generation at kindergartens, schools, military and physical training lycées, in the organizations implementing sports and technical and out-of-school training;

– military-patriotic training of the rising generation at kindergartens, schools, military and physical training lycées, in the organizations implementing sports and technical and out-of-school education (it should be multi-aspect, as far as possible, with the maximum reflection in educational programs and measures);

b) in the sphere of military education:

– sergeants' military training;

– command and tactical training ensuring fundamental knowledge for the commander of tactical unit (Military Undergraduate School);

– retraining courses for Officers and Commanding Staff of tactical unit for integrating the corresponding army and Staff positions through the personnel promotion (agency format);

– operational-tactical and command and Staff education for filling the corresponding army and Staff positions (Military Graduate School);

– military Postgraduate Education (Postgraduate Job) for training academic-pedagogical personnel, and in some cases – personnel for staff service (at the Military University being created through the transformation of the Military Institute);

c) in the sphere of defense security oriented political education:

– courses on retraining senior (Colonel) and Higher Officers and Commanding Staff, as well as senior and high rank officials of the RA agencies, which relate to the defense security problems;

– organization of Graduate Education for senior (Colonel) and Higher Officers and Commanding Staff, as well as senior and high rank officials of

the RA agencies, which relate to the solution to the defense security issues;  
– organization of Postgraduate Education on political science of security for senior (Colonel) and Higher Officers and Commanding Staff, senior and high rank officials of the RA agencies, which relate to the solution to the defense security issues, as well as for the specialists in that sphere.

The Curriculum in the spheres of initial training and military training should include the corresponding defense security oriented political elements.

Proceeding from the fact that there is no higher unit of defense security oriented political education in the Republic of Armenia, a necessity becomes urgent to create a proper institution. An optimal solution to this problem can be the gradual transformation of the existing D. Kanayan INSS, MOD, RA into the National Defense University (NDU), MOD, RA, which along with research activity will practise Executive Education of senior and Higher Officers and Commanding Staff of the Armed Forces in the field of political science of security, as well as senior and high rank officials of those RA agencies, the activities of which include the solution to defense security issues. Thereby, the NDU will consolidate the whole defense security inter-agency intellectual resources of the republic around the MOD, RA with the view of coordinating the activities for ensuring the RA defense security.

The elaboration of a legislative portfolio ensuring the functioning of defense education institutions as military units is also proposed.

Վ. ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ  
ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ  
ՀՀ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՅՈՒՄՆԵՐԻ  
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

*Մ. Ն. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, գեներալ-մայոր, ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան  
ռազմական ինստիտուտի պետ, Ա. Ս. ՄԵԼՔՈՆՅԱՆ, գեղարպետ,  
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ,  
ՌԻ-ի գիտական քարտուղար*



Բարձր տեխնոլոգիաներով հագեցած բանակն այսօր խիստ պահանջներ է ներկայացնում սպայական կադրերի պատրաստմանը: Եվ պատահական չէ, որ պաշտպանական բարեփոխումների կարևոր ուղղություններից մեկն է զինվորական, այդ թվում՝ սպայական, կադրերի պատրաստման համակարգի կատարելագործումը:



Առաջատար պետությունների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ռազմական բարձրագույն ուսումնական հաստատություններում մասնագետների պատրաստման գործում միշտ առանցքային են համարվել հետևյալ պրոբլեմները.

- սպագա սպաների թվակազմի ընտրություն,
- համագիտական պատրաստման համատեղում ռազմամասնագիտական պատրաստման հետ,
- հետագա կառավարչական գործունեությանը կուրսանտների պատրաստման համակարգի կատարելագործում<sup>1</sup>:

Այդ պրոբլեմների համախումբը նաև մեր ուշադրության կենտրոնում է և աներկբայորեն պահանջում է ներկայիս իրողության հաշվառմամբ վերանայել ռազմակրթական համակարգի մի շարք սկզբունքներ ու մոտեցումներ:

Մեր կարծիքով՝ ռազմակրթական համակարգի կատարելագործման համար անհրաժեշտ է մշակել նպատակների ու գործողությունների ընդհանուր տեսլականը, խնդիրը դիտարկել համալիր ձևով՝ ապահովելով յուրաքանչյուր ենթահամակարգում ծրագրվող վերափոխումների փոխհամաձայնեցվածությունը: Այս տեսանկյունից աշխատանքի ճիշտ կազմակերպման համար առաջին հեր-

<sup>1</sup> Steu A. Kuceljev. Научить офицера решительности. «Ориентир», 2007, № 6:

թին կարևոր է գնահատել զինվորական մասնագետների պատրաստման համակարգի առկա վիճակը:

Ցավալի է, սակայն՝ փաստ, որ մեր հանրապետությունում վերջին քսան տարիների ընթացքում խիստ անկում է ապրել թե՛ գիտական, թե՛ ընդհանուր կրթական ու մշակութային մակարդակը: ՀՀ կրթական համակարգը այնպես է խճճվել շարունակական հիմնարար կամ ընթացիկ «բարեփոխումներով», որ դրա տարբեր օղակների չհամաձայնեցված գործողությունների հետևանքով նվազել է ամբողջ ուսումնական գործընթացի արդյունավետությունը<sup>2</sup>: Բավական է նշել այն փաստը, որ Բոլոնիայի գործընթացին համահունչ համաեվրոպական միասնական կրթական դաշտին ինտեգրման ուղու որդեգրումից հետո անցել է հինգ տարի, բայց բարձրագույն կրթությամբ մասնագետների պատրաստման որակի ապահովման առումով մեր առաջատար բուհերից մեկը՝ ԵՃՇՊՀ-ն, այդ համակարգին համապատասխանում է ընդամենը 20 %-ով<sup>3</sup>:

Վիճակը չի կարող բարվոք համարվել նաև ռազմակրթական ոլորտում: ՀՀ ռազմակրթական համակարգը ՀՀ ընդհանուր կրթական համակարգի բաղկացուցիչ մասն է և իր վրա է կրում դրանում կատարվող բոլոր իրադարձությունների կնիքը:

Մասնավորապես՝ մեզանում սպաների պատրաստման բուհական պրակտիկան ոչ լիովին է համապատասխանում մարտական գործողությունների վարման արդի եղանակներին: Մյուս կողմից՝ Ռազմական ինստիտուտում այսօր կիրառվող ուսուցման մեթոդները հաճախ հանգեցնում են կուրսանտների գերծանրաբեռնվածության և ուսումնական գործընթացի ցածր արդյունավետության: Դա նրանց ընդունակությունները, մտավոր ներուժը ոչ ճիշտ գնահատելու և օգտագործելու, ինչպես նաև ուսումնական ծրագրերի և կուրսանտների ընդհանուր կրթական մակարդակի անհամապատասխանության հետևանք է: Գաղտնիք չէ, որ գիտելիքների արագ յուրացումը, տեղեկույթի անբավարարության պայմաններում օպերատիվ կերպով առավել նպատակահարմար որոշում կայացնելու կարողությունը մեծ մասամբ պայմանավորված են կուրսանտների ուշադիրության, հիշողության և, հատկապես՝ կրթական մտածողության ճիշտ ձևավորմամբ<sup>4</sup>: Մինչդեռ կիրառվող մեթոդները չեն նպաստում այդ հատկությունների լիարժեք ձևավորմանը: Այս խնդրի լուծումը մենք տեսնում ենք կրթական գործընթացի առավելագույն ռացիոնալացման մեջ: Խոսքը վերաբերում է ակտիվ ուսուցման մեթոդներին, ինչը կուրսանտներին հնարավորություն կտա առավել կարճ ժամանակահատվածում յուրացնելու անհրաժեշտ գիտե-

<sup>2</sup> Տես Ա. Մ. Ալիսրիպյան, Կրթության ու գիտության առաջընթացը՝ անվտանգ ու կայուն զարգացման հիմք: «ՀԲ», 2007, հմ. 2–3:

<sup>3</sup> Տես Ա. Մարտիասյան և ուրիշներ, Բարձրագույն կրթությամբ մասնագետների պատրաստման որակի ապահովման և գնահատման ներքին առողիտի արդյունքների համեմատական գնահատում: Ե., 2009:

<sup>4</sup> Տես В. Д. Самойлов. Высшее образование офицеров: проблемы и пути их решения. «Военная мысль», 2003, № 5:

լիքներ, զարգացնելու համապատասխան կարողություններ ու հմտություններ:

Քաջ գիտակցելով մեր երկրի անվտանգության ապահովման գործում Ռազմական ինստիտուտի՝ որպես բանակին որակյալ սպայական կադրերով ապահովող հիմնական օղակի դերը՝ մենք անհրաժեշտ ենք համարում վերանայել թե՛ կազմակերպական, թե՛ ուսումնական, թե՛ նյութատեխնիկական բազայի կատարելագործման ու արդիականացման հետ կապված որոշ մոտեցումներ:

ՀՀ պաշտպանության նախարարությունը կրտսեր սպայական կազմի պատրաստումը կազմակերպում է Հայաստանի Հանրապետության և արտասահմանյան երկրների ռազմական ու բարձրագույն ռազմական ուսումնական հաստատություններում՝ հանրակրթական դպրոցների շրջանավարտների և ՀՀ Ջինված ուժերում պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցնող զինծառայողների, ինչպես նաև պահեստագործի կազմից՝ կամավոր սկզբունքով (մինչև 23 տարեկան): Ինչ վերաբերում է սպաների որակավորման բարձրացման դասընթացներին, ապա դրանք ևս կազմակերպվում են ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ արտասահմանյան երկրների համապատասխան ռազմական ուսումնական հաստատություններում: Այդուհանդերձ, նրանց պատրաստման հիմնական օղակը ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտն է:

Ռազմական ինստիտուտում բուհական կրթությունը իրականացվում է երկու հիմնական մասնագիտություններով՝ մոտոհրաձիգներ և հրետանավորներ, գործում են երկու ֆակուլտետ և երեք առանձին ամբիոններ, չորս կուրսանտական գումարտակներ և ուսումնական գործընթացի ապահովման գումարտակը, որոնք ինստիտուտի ուսումնամեթոդական, գիտական և դաստիարակչական աշխատանքների իրականացման հիմնական ստորաբաժանումներն են:

Ռեսուրսադաստիարակչական գործընթացում ընդգրկված են գիտության թեկնածուներ և դոցենտներ, ռազմական գործի մասնագիտական պատրաստությամբ դասախոսներ: Ռազմական ինստիտուտի շրջանավարտներն ստանում են քաղաքացիական բարձրագույն կրթություն (բակալավրի աստիճան) և ռազմական մասնագիտական կրթություն: Ստանալով լեյտենանտի զինվորական կոչում՝ շրջանավարտները վիճակահանությամբ ծառայության են նշանակվում ՀՀ Ջինված ուժերում:

Ինստիտուտում, բացի մոտոհրաձիգներից և հրետանավորներից, Պաշտպանության նախարարի հրամանի համաձայն չորրորդ կուրսի կուրսանտների մի մասը մասնագիտանում է որպես տանկային, հետախուզական, ինժեներասակրավորային դասակների հրամանատարներ: 2004 թվականից ինստիտուտում գործում է սպայական կադրերի որակավորման բարձրացման կենտրոն (ՄԿՈԲԿ), որտեղ կատարելագործվում են զորամասերում ծառայության ընթացքում իրենց լավ դրսևորած սպաներ: Մեր կարծիքով՝ մյուս դասընթացները պետք է դառնան սպաների պաշտոնեական առաջխաղացման անհրաժեշտ պայման:

Ինստիտուտի շրջանավարտների մասնագիտական առումով լիարժեք կայացման գործում մեծ է գորամասերի հրամանատարական կազմի և Ինստիտուտի ղեկավարության նպատակային համագործակցության դերը: Այն դրսևորվում է առաջին հերթին կուրսանտների գորային ստաժավորման ձևով: Այս տեսանկյունից կարևորվում է նաև գորամասերի հրամանատարական կազմի դերը նորավարտ լեյտենանտի՝ որպես սպայի և հրամանատարի կայացման գործում:

Այսօր կան մի շարք պրոբլեմներ, որոնցով պայմանավորվում է Ռազմական ինստիտուտի առջև դրված խնդիրների կատարման արդյունավետությունը: Դրանց պատեհաժամ ու լիարժեք լուծումը հնարավորություն կտա բարձրացնելու շրջանավարտների պատրաստականության մակարդակը և ՀՀ ՁՈԻ-ն մշտապես համալրելու միջազգային չափանիշներին համապատասխանող, ժամանակակից մարտի բարդ պայմաններում արագ ու ճիշտ կողմնորոշվելու և օպտիմալ որոշում կայացնելու ունակ երիտասարդ սպայական կադրերով: Այդ խնդիրների լուծման համար անհրաժեշտ է.

1. ռազմական ինստիտուտը կերպափոխել ռազմական համալսարանի, ինչը հնարավորություն կտա լիարժեք կերպով կազմակերպելու բակալավրի (հրամանատարամարտավարական մակարդակի կրթություն) և մագիստրոսի (օպերատիվ-ռազմավարական մակարդակի կրթություն) աստիճանին համապատասխանող բարձրագույն ռազմական կրթություն՝ ըստ գորատեսակների,

2. մշակել ռազմական գծով բակալավրի ու մագիստրոսի համար հատուկ չափորոշիչներ և անհրաժեշտ կրթական ծրագրեր, քայլեր ձեռնարկել համապատասխան դասախոսական կազմի ձևավորման ուղղությամբ\*,

3. վերանայել ու արդիականացնել ՍԿՈԲԿ-ի ծրագրերը՝ ըստ գորատեսակների,

4. ռազմական մագիստրատուրայի և հեռանկարում ռազմական ասպիրանտուրայի գործարկման համար գիտամանկավարժական կադրերի պատրաստումը սկզբնական շրջանում (4-6 տարի) իրականացնել ռազմական գիտությունների գծով գիտական կադրեր պատրաստող համապատասխան օտարերկրյա հաստատություններում,

5. հեռանկարում (5-7 տարի) ռազմական գիտությունների բնագավառում գիտական աստիճան ունեցող սպաների ներգրավմամբ ձևավորել համապատասխան գիտական միջավայր, ձեռնամուխ լինել ռազմական գիտությունների գծով գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի ձևավորմանը,

6. համալրել ու կատարելագործել Ինստիտուտի նյութատեխնիկական բազան (մասնագիտական լսարաններ, գրականություն, վարժասարքեր, ուսումնական և մարտական հրաձգային զենքեր, ինտերնետ համացանց, տպարան և այլն):

\* Դասախոսների թվում պետք է լինեն այլ պետությունների հեղինակավոր ռազմագիտական հաստատություններում ուսումնառություն անցած ռազմական գիտությունների թեկնածուներ:

Տարբեր երկրների ռազմակրթական համակարգերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ուսումնական գործընթացի արդյունավետությունը ուղղակիորեն պայմանավորված է կրթօջախում ծավալվող գիտական գործունեության հետ զուգակցմամբ<sup>5</sup>: Այդ նկատառումով Ինստիտուտում մշակվել է կառուցվածքային փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունների փաթեթ՝ միտված գիտական գործունեության ակտիվացմանը: Ավելին. ներկայումս սերտ կապեր են հաստատվել քաղաքացիական բուհերի հետ՝ գիտական համագործակցության, այդ թվում՝ ռազմական ոլորտին առնչվող ատենախոսական աշխատությունների պաշտպանության կազմակերպման նպատակով: Հրամայական է դարձել Ինստիտուտում ռազմական գիտությունների բնագավառում գիտական աստիճանների շնորհման մասնագիտական խորհրդի ստեղծումը, ինչի համար պետք է նպատակային աշխատանք տարվի խորհուրդը համապատասխան գիտական կադրերով ապահովելու համար:

Վերջին տարիներին մեծ արդյունավետությամբ է ընթանում ՀՀ պաշտպանության նախարարության և ՆԱՏՕ/Գ-ՀԽ տարբեր կազմակերպությունների միջև համագործակցությունը, որի նպատակներից է ՀՀ զինվորական մասնագիտական կրթության համակարգի կատարելագործումը: Այս գործընթացում ակտիվ մասնակցություն են ունենում նաև Ինստիտուտի մասնագետները: Այսպես. ՄԿՌԲԿ-ի համար մեր մշակած ծրագրերը արժանացել են ՆԱՏՕ-ի՝ ՀՀ ՊՆ-ին օժանդակող միջազգային փորձագիտական խմբի հավանությանը: Այդ խմբի ղեկավարն արել է առաջարկություններ՝ ուղղված ծրագրերի բարելավմանը:

Ինչ վերաբերում է ՊՆ քաղաքացիական հատուկ ծառայողների վերապատրաստման ծրագրերի մշակմանը, ապա դա ևս կարևոր խնդիր է, քանի որ քաղաքացիական կրթություն ունեցող անձինք, ծառայելով ՊՆ համակարգում, պետք է լավ պատկերացնեն ՋՈՒ-ի խնդիրներն ու գործունեության առանձնահատկությունները: Մինևույն ժամանակ, կարևոր խնդիր է զորացրված սպաների վերապատրաստումն ու հարմարեցումը քաղաքացիական ծառայության համար:

Հասունացել է նաև պայմանագրային սերժանտական և ենթասպայական կազմերի պատրաստման ուսումնական ծրագրերի կատարելագործման խնդիրը, քանի որ անհրաժեշտություն է առաջացել ռազմակրթական համակարգի ընդհանուր բարեփոխման ճանապարհով կատարելագործելու և փոխպայմանավորելու ռազմակրթական համակարգի տարբեր փուլերը, այսինքն՝ ապահովելու ռազմական ուսուցման տրամաբանական շարունակականությունը, երբ ռազմակրթական համակարգի յուրաքանչյուր փուլ նախորդի տրամաբանական շարունակությունն է ու հաջորդի հիմքը:

Ռազմակրթական համակարգի բարեփոխումների համատեքստում կարևորում ենք նաև քաղաքացիական բուհերի ներուժի օգտագործման խնդիրը:

<sup>5</sup> Տես, օրինակ, *Ю. Кудрявцев*. Подготовка командных кадров к воспитательной деятельности в вузах США, ФРГ и Великобритании. «Зарубежное военное обозрение», 2001, № 5—6, նաև՝ *И. Н. Мансуров*. Некоторые проблемы совершенствования военно-научной деятельности. «Военная мысль», 2002, № 5:

Քաղաքացիական բուհերի հետ պայմանագրեր են կնքվում ոչ միայն գիտական, այլև մշակութային, սպորտային և մի շարք այլ ոլորտներում համագործակցության նպատակով: Մյուս կողմից՝ արդեն երկրորդ անգամ է, ինչ բուհերի զինվորական ամբիոնների լուծարումից հետո Ինստիտուտի բազայի վրա կազմակերպվում են մեկամյա դասընթացներ՝ տարբեր բուհերի շրջանավարտներին զինվորական մասնագիտություններով վերաորակավորելու համար:

ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի արդիական խնդիրների շարքում իր ուրույն տեղն է զբաղեցնում ռազմակրթական հայեցակարգի մշակումը: Վերը ներկայացված խնդիրների լուծումը պետք է ուրվագծված լինի հենց այդ հայեցակարգում, որը կհամակարգի բոլոր ռազմակրթական փուլերի խնդիրներն ու նպատակները իրենց բովանդակային միասնության մեջ: Ռազմակրթական հայեցակարգը պետք է համահունչ լինի ՀՀ կրթական հայեցակարգի հիմնարար դրույթներին: Այնպիսի դժվար խնդրի լուծման գործում, ինչպիսին մասնագիտական ռազմական կրթության հայեցակարգի մշակումն է, մեր մասնագետներին իր խորհրդատվություններով մեծապես աջակցում է ՆԱՏՕ-ի միջազգային փորձագիտական խումբը: Միայն կառուցողական ու արհեստավարժ, նպատակային ու գիտականորեն հիմնավորված, ռազմավարական տրամաշափի աշխատանքի միջոցով կարելի է ռազմական կրթության բարեփոխման գործում հասնել շոշափելի հաջողությունների:

## ЗАДАЧИ И ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ ВОЕННОГО ИНСТИТУТА ИМ. В. САРГСЯНА В КОНТЕКСТЕ ОБОРОННЫХ РЕФОРМ РА

*М. Н. КАРАПЕТЯН, генерал-майор, начальник Военного института  
им. В. Саргсяна МО РА, А. С. МЕЛКОНЯН, полковник,  
кандидат физико-математических наук, доцент, ученый секретарь ВИ*

### РЕЗЮМЕ

Важным условием обеспечения боеспособности и боеготовности современных армий, оснащенных высокотехнологичными вооружением и военной техникой, является наличие хорошо обученного, способного в условиях быстротечного современного боя при недостаточности информации принимать профессионально правильные решения офицерского состава. Это требует постоянной модернизации системы военного образования. В интересах выработки научно-обоснованных рекомендаций по совершенствованию системы подготовки офицеров предлагается рассмотреть проблему в комплексе с обеспечением логической последовательности и взаимосогласованности этапов военной подготовки. Акцентируется важность соответствия сложившейся вузовской практики подготовки офицеров требованиям к ведению современных военных действий.

THE TASKS AND PERSPECTIVES OF DEVELOPING  
V. SARGSYAN MILITARY INSTITUTE  
IN THE CONTEXT OF THE RA DEFENSE REFORMS

*M. N. KARAPETYAN, Major General, Head of V. Sargsyan Military Institute,  
MOD, RA, A. S. MELKONYAN, Colonel,  
PhD in Physical and Mathematical Sciences, Associate Professor,  
Academic Secretary of V. Sargsyan Military Institute*

SUMMARY

The main condition of ensuring the fighting efficiency and combat readiness of contemporary armies, supplied with high technology armament and military equipment, is the existence of the well-trained officers' staff. In conditions of contemporary swift action and with insufficient information the officers should be able to make professionally correct decisions. This requires constant upgrading of the system of military education. For elaborating scientifically grounded guidelines on improving the officers' training system it is proposed to address the problem together with ensuring the logical successiveness and interconsistency of the stages of military training. The significance of the correspondence of the hands-on educational experience of officers' training to the modern warfare requirements is stressed.

**ՌԱԶՄԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱԴՐԵՐԻ  
ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ԱՌԱՋԽԱՂԱՅՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ  
ԶԱՐԳԱՅՈՒՄՆ ՈՒ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ՝  
ՄԱՐՇԱԼ Ա. ԽԱՆՓԵՐՅԱՆՑԻ ԱՆՎԱՆ  
ՌԱԶՄԱԿԱՆ ԱՎԻԱՑԻՈՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ  
ՓՈՐՁԻ ՀԱՇՎԱՌՄԱՄԲ**

*Դ. Կ. ԲԱԼԱՅԱՆ, գնդապետ, 1-ին կարգի օդաչու-հրահանգիչ,  
ՀՀ ՊՆ մարշալ Ա. Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն  
ինստիտուտի պետ, Ձ. Ա. ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ, գնդապետ, տեխնիկական  
գիտությունների թեկնածու, ՀՀ ՊՆ մարշալ Ա. Խանփերյանցի անվան  
ռազմական ավիացիոն ինստիտուտի պետի ուսումնական և գիտական  
աշխատանքի գծով տեղակալ*



«Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտորինում» պաշտպանական բարեփոխումների խնդիրների թվում նշվում է նաև ռազմական կրթության և կադրերի պաշտոնեական առաջխաղացման համակարգերի զարգացումը: Մեր կարծիքով՝ այդ խնդիրը նպատակահարմար է



լուծել համապատասխան ռազմավարության մշակման ու կիրառման միջոցով:

ՀՀ ՊՆ մարշալ Ա. Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն ինստիտուտի գործունեության ընթացքում ի հայտ են եկել նշված համակարգի անկատարությամբ պայմանավորված մի շարք պրոբլեմներ: Մինևույն ժամանակ, կուտակվել է զգալի փորձ, որի վերլուծության ու գնահատման հիման վրա մշակված ու ստորև ներկայացվող առաջարկությունները կարող են օգտակար լինել այդ պրոբլեմները լուծելու կամ դրանց լուծման ուղիները, ձևերն ու մեթոդները նախանշելու համար:

Տվյալ պրոբլեմները կարելի է դասակարգել ըստ երեք ոլորտի:

**1. Ռազմահայրենասիրական դաստիարակություն**

«Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտորինում» «Բազմակողմանի զարգացած սերունդների ռազմահայրենասիրական դաստիարակության կազմակերպումը» սահմանվում է որպես Հայաստանի Հանրապետության պաշտպանական ռազմավարության նպատակ:

Պետք է նշել, որ նույնիսկ ռազմաուսումնական հաստատությունների կուրսանտների շրջանում քիչ չեն այն անձինք, որոնք չունեն զինվորական ծառայության նկատմամբ պատշաճ շարժառիթավորում և սպայի մասնագիտությունն ընտրել են ոչ հաստատուն համոզմունքի համաձայն:

ՀՀ ռազմակրթական համակարգի բարեփոխումների համատեքստում նպատակահարմար է հստակեցնել ռազմամարզական վարժարանների և ուսումնարանների ու դրանց սաների կարգավիճակը: Այս տեսանկյունից կարելի է կիրառել ռուսաստանյան Սուվորովյան և Նախիմովյան զինվորական ուսումնարանների մոդելը, որի տեղայնացմամբ հնարավորություն կընձեռվի ռազմական բարձրագույն ուսումնական հաստատությունների համար պատրաստելու բարձր մակարդակի շարժառիթավորմամբ ապագա զինվորական կուրսանտների:

Ինչպես սերունդների դաստիարակության ցանկացած պրոբլեմի դեպքում, սույն խնդրի լուծումը ևս պահանջում է նպատակաողոված աշխատանք դեռ մանուկ հասակից: Այդ առումով որոշակի գործ արվում է: Մասնավորապես՝ դպրոցներում դասավանդվում է «Ռ-ազմագիտություն» առարկան, որի նպատակը դպրոցականների նախնական զինվորական պատրաստումն է: Սակայն միայն մեկ առարկայով սահմանափակվելու դեպքում լուրջ արդյունք չենք կարող ակնկալել, ուստի անհրաժեշտ է ցուցաբերել համակարգային մոտեցում:

Նպատակահարմար է շահագրգիռ գերատեսչությունների, ինչպես նաև հասարակայնության լայն շրջանների ներկայացուցիչների ներգրավմամբ մշակել ռազմահայրենասիրական դաստիարակության համալիր ծրագիր: Ընդ որում, այն պետք է իր արտացոլումն ստանա գրեթե բոլոր դպրոցական առարկաներում: Ծրագրի արդյունավետությունը մեծացնելու համար անհրաժեշտ է թվում հետևյալ միջոցառումների իրականացումը:

1.1 «Ռ-ազմագիտություն» առարկայի ծրագրում ներկայացնել «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության» և «ՀՀ ռազմական դոկտրինի» հիմնական դրույթները:

1.2. «Ռ-ազմագիտություն» առարկայի ծրագրում նախատեսել ռազմամասնագիտական թեմաներով առանձին պարապմունքներ, որոնք անցկացնեն ՀՀ ՊՆ և ԶՈՒ-ի ԳՇ վարչությունների փորձառու մասնագետներն ու ռազմական ուսումնական հաստատությունների (ՌՈՒՀ-եր) դասախոսները:

1.3. «Ռ-ազմագիտություն» առարկայի շրջանակներում կազմակերպել դպրոցական, մարզային և հանրապետական օլիմպիադաներ՝ հանրապետական օլիմպիադայի հաղթողներին տալով արտոնյալ կարգով ՌՈՒՀ-եր ընդունվելու հնարավորություն:

1.4. Դպրոցներում անցկացնել ռազմահայրենասիրական թեմաներով շարադրությունների մրցույթ, խրախուսել լավագույն շարադրությունների հեղինակներին:

1.5. Մշակել հայ ժողովրդի պատմության, ռազմարվեստի, ռազմական տեխ-

միկայի վերաբերյալ էլեկտրոնային խաղեր և ուսուցանող համակարգեր՝ դրանք տեղադրելով Ինտերնետ համացանցում\*:

1.6. Գպրոցներում կազմակերպել ռազմական պատմությանը և ռազմական տեխնիկային վերաբերող բազմաբնույթ խաղեր և վիկտորինաներ:

1.7. Գպրոցականների շրջանում պետական հովանավորությամբ կազմակերպել ռազմահայրենասիրական և ռազմակիրառական բնույթի խաղեր և արշավներ:

1.8. Նախնական զինվորական պատրաստման դասերին աչքի ընկած աշակերտներին պարգևատրել հատուկ զինվորական կրծքանշաններով և զինվորական այլ ատրիբուտներով:

1.9. ՌՌԻՀ-երի դիմորդների համար կազմակերպել նախապատրաստական դասընթացներ:

1.10. «Ռ-ազմագիտություն» առարկան ընդգրկել դպրոցի քննական առարկաների շարքում՝ քննական հանձնաժողովներում ներգրավելով գորամասերից և զինկոմիսարիատներից հրավիրված մասնագետների:

1.11. Բովանդակայից և համակարգված դարձնել միմյանց կցված դպրոցների և գորամասերի կապերը՝ այլանավորելով և կազմակերպելով հանդիպումներ, արտագնա ցուցադրական պարապմունքներ, այլ համատեղ միջոցառումներ:

1.12. Պլանավորել և կազմակերպել զինղեկների որակավորման բարձրացման պարբերական հավաքներ և այլ միջոցառումներ՝ նրանց մեթոդական օգնություն ցուցաբերելու, բանակային կյանքի նորություններին, ռազմական արվեստի, գիտության, տեխնիկայի և սպառազինության նորություններին ծանոթացնելու նպատակով:

1.13. Պարբերաբար կազմակերպել «Լավագույն զինղեկ» մրցույթ և խրատախաղեր հաղթողներին:

## **2. Ռ-ազմական կրթություն**

Ռ-ազմական կրթությունը զինծառայողի մեջ ձևավորում է անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ, ինչը հնարավորություն է տալիս մեծացնելու հայրենիքի պաշտպանության գործում վճռորոշ նշանակություն ունեցող մարդկային գործոնի դերը: Հանրապետության բարձրագույն կրթության համակարգին ռազմական ուսումնական հաստատությունների ցածր մակարդակի ինտեգրվածության պատճառով զգալիորեն նվազում է ռազմական կրթության արդյունավետությունը: Դրա հետևանքով դժվարանում, հաճախ նույնիսկ անհնար է դառնում կրթության զարգացման այնպիսի կարևոր գործոնների ապահովումը, ինչպիսիք են առաջավոր փորձի յուրացումն ու ներդրումը, արդյունավետ համագործակցությունը, լայն շրջանով դիմորդներից ապագա կուրսանտների ընտրագատումը և այլն:

\* Կարծում ենք, որ նման խաղերը պետք է նախատեսված լինեն ոչ միայն հայ երիտասարդների համար, ինչը հնարավորություն կտա միջազգայնորեն ներկայացնելու մեր հարուստ ազգային պատմությունը և ավանդույթները:

Մեր կարծիքով՝ այս և նմանաբնույթ շատ պրոբլեմներ հնարավոր է լուծել՝ իրականացնելով հետևյալ միջոցառումները:

2.1. ՌՌԻՀ-երի ընդունելության համակարգն ամբողջությամբ ինտեգրել հանրապետության քաղաքացիական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության համակարգին:

2.1.1. Հաշվի առնելով ՀՀ կրթական ոլորտում վերջին տարիների զարգացումները, մասնավորապես՝ միասնական քննահամակարգի ներդրումը, վերաձևակել ՀՀ ՊՆ ՌՌԻՀ-երում ընդունելության կանոնակարգը (գործող կանոնակարգը մշակվել է 1997 թ.): Չնայած սուբյեկտիվ բնույթի որոշ թերություններին՝ միասնական քննահամակարգի ներդրումը ակնհայտ առաջընթաց քայլ է: Անհրաժեշտ է ճշտել միասնական քննությունների ցանկը, որում պետք է ընդգրկել միայն մրցութային առարկաները (ինչպես ցանկացած բուհում): Այսպես, Ռ-ազմական ավիացիոն ինստիտուտի դիմորդները միասնական քննություն կարող են հանձնել «մաթեմատիկա» և «ֆիզիկա» առարկաներից, ինչպես արվում է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի և Երևանի պետական համալսարանի համապատասխան մասնագիտությունների համար: ՌՌԻՀ-երի ընդունելության ընտրական հանձնաժողովն իր որոշումը կկայացնի միասնական քննությունների և բժշկական գնման հիման վրա:

2.1.2. ՌՌԻՀ-եր ընդունելության նպատակով տվյալ ուսումնական տարվա քարտզարշավը կազմակերպել ոչ թե գարնանը, երբ դպրոցների շրջանավարտների մի զգալի մասն արդեն կողմնորոշված է մասնագիտության ընտրության հարցում, այլ սեպտեմբեր–հոկտեմբեր ամիսներին, ինչի համար անհրաժեշտ է նաև ՌՌԻՀ-եր ընդունելության վերաբերյալ ՀՀ Պաշտպանության նախարարի հրամանը հրապարակել տվյալ ուսումնական տարվա սկզբին (փետրվարի փոխարեն):

2.1.3. ՌՌԻՀ-երի դիմորդների բուժզննումն անցկացնել մեկ փուլով: Ներկայումս դիմորդը մոտ երեք ամսում երկու անգամ է անցնում բուժզննում. նախ՝ բնակության վայրի զինկոմիսարիատում, այնուհետև՝ ՀՀ ՊՆ կայազորային կենտրոնական զինվորական հոսպիտալում: Ընդ որում, երկրորդ բուժզննմամբ դիմորդների 15–30 %-ը ճանաչվում է ծառայության համար ոչ պիտանի:

2.2. Լրամշակել ու ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ համաձայնեցնել ՌՌԻՀ-երում ուսումնական գործընթացի կազմակերպման նորմատիվային փաստաթղթերի ցանկը և օրինակելի մոդելները:

2.2.1. Հստակեցնել կուրսանտներին խրախուսելու և տույժի ենթարկելու կարգը: Օրինակ՝ ճիշտ կլինի գերազանցության կրթաթոշակ շնորհել բոլոր գերազանցիկներին (ներկայումս կրթաթոշակ տրվում է 2-րդ կուրսից, ընդ որում՝ յուրաքանչյուր կուրսից երկու կուրսանտի), ինչպես նաև կրթաթոշակ սահմանել լավ առաջադիմություն ունեցողների համար: Անհրաժեշտ է համակարգված կերպով վերանայել կուրսանտներին հեռացնելու և վերականգնելու, մի ՌՌԻՀ-ից մյուսը տեղափոխելու կարգը:

2.2.2. ՌԻսումնական գործընթացի որակը բարձրացնելու նպատակով ան-

հրաժեշտ է անցնել ինտենսիվ մեթոդներով ուսուցմանը՝ կուրսանտների ակտիվության շարժառիթավորմամբ: Տեսական նյութի յուրացման արդյունավետությունը մեծացնելու նպատակով անհրաժեշտ է ուսումնական պլաններում նախատեսել գործնական պարապմունքների, լաբորատոր և կուրսային աշխատանքների, երևույթների և իրավիճակների համակարգչային մոդելավորմամբ պարապմունքների ծավալի աստիճանական մեծացում: Կուրսանտներին ապահովել համակարգչային տեխնիկայով՝ ինտերնետային ցանցից օգտվելու հնարավորությամբ:

2.3. Մերտորեն համագործակցել քաղաքացիական բուհերի հետ: Սպայական կադրերի պատրաստման գործում կիրառել այլընտրանքային տարբերակներ:

2.3.1. Ռ-ազմական կրթության ոլորտում պայմանագրային հիմունքներով օգտագործել հանրապետության քաղաքացիական բուհերի ուսումնական կազմակերպության և գիտական ներուժը, համատեղ պլանավորել և իրականացնել մեթոդական ու գիտական աշխատանքներ:

2.3.2. Մշակել հատուկ ծրագրեր՝ խաղաղ և պատերազմական ժամանակաշրջանում քաղաքացիական բուհերի ուսանողներին որպես զինվորական մասնագետների պատրաստելու համար: Օրինակ՝ պատերազմական ժամանակաշրջանում Ռ-ՌԻՀ-եր ընդունել քաղաքացիական բուհերի 3-րդ կուրսի ուսանողների: Ինչպես պատերազմական, այնպես էլ խաղաղ ժամանակաշրջանում ուսուցման կրճատված ծրագրերով քաղաքացիական բուհերի ռադիոտեխնիկական մասնագիտություններով սովորող ուսանողներից կարելի է պատրաստել կապի գծով սպաներ, ավիացիոն ռադիոէլեկտրոնային սարքավորումների և ՀՕՊ-ի ռադիոտեղորոշումային համալիրների շահագործման գծով սպաներ, էլեկտրատեխնիկական մասնագիտությամբ ուսանողներից՝ ավիացիոն սարքավորումների շահագործման սպաներ, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի տրանսպորտային ֆակուլտետի ուսանողներից՝ թռչող ապարատների և շարժիչների տեխնիկական շահագործման սպաներ և այլն:

### **3. Արդյունավետ կադրային քաղաքականություն և անձնակազմի պաշտոնական առաջխաղացման ժամանակակից համակարգ**

Մեր կարծիքով՝ կրթության ու դաստիարակության հետ մեկտեղ հույժ կարևոր է արդյունավետ կադրային քաղաքականությունը, որը հնարավոր է իրականացնել անձնակազմի պաշտոնական առաջխաղացման՝ հստակ ու թափանցիկ մեխանիզմներ պարունակող ժամանակակից համակարգի միջոցով: Այն կապահովի «ուսուցում ծառայության մնացած ժամանակահատվածի համար» սկզբունքից անցում՝ «ուսուցում ամբողջ ծառայության ընթացքում» սկզբունքի: Նման համակարգ ձևավորելու համար, մեր կարծիքով, անհրաժեշտ կլինի իրականացնել հետևյալ միջոցառումները.

3.1. Մշակել վարժանքի և կրթության ամբողջական ցանց՝ յուրաքանչյուր հաստիքի համար սահմանելով հստակ կրթական և վարժանքային ցեղն:

3.1.1. Մշակել ՀՀ ՁՈՒ-ում յուրաքանչյուր պաշտոնի որակավորման բնութագիր՝ նշելով կոնկրետ պաշտոնին ներկայացվող հստակ պահանջները:

3.1.2. Կազմակերպել դասընթացներ յուրաքանչյուր կատեգորիայի պաշտոնի համար: Ընդ որում, դասընթացները կազմակերպել ոչ թե ըստ կոչումների (օրինակ՝ կապիտանի դասընթաց), այլ՝ ըստ պաշտոնների (օրինակ՝ վաշտի հրամանատարների դասընթաց, գորամասի ԿՇԾ պետերի դասընթաց և այլն):

3.1.3. Յուրաքանչյուր պաշտոնի դասընթացը հաջողությամբ ավարտելը համարել նոր պաշտոնում նշանակվելու համար անհրաժեշտ, թեև ոչ բավարար պայման:

3.1.4. ՈՒ-ումնական գործընթացում, ռազմամասնագիտական բլոկի առարկաներից բացի, ներառել նաև օտար լեզուների, համակարգչային տեխնիկայից օգտվելու հմտությունների կատարելագործման դասընթացներ՝ սահմանելով այդ առարկաներից պարտադիր նվազագույն մակարդակի չափանիշներ: Ընդ որում, յուրաքանչյուր նոր պաշտոնում նշանակվելու համար այդ չափանիշներին բավարարելը պետք է սահմանվի որպես անհրաժեշտ պայման:

3.1.5. Սպայական կազմի մանկավարժական, հռետորական և դասախոսական ունակությունների զարգացման նպատակով սպաների որակավորման բարձրացման դասընթացների շրջանակներում անցկացնել նաև համապատասխան թեմաներով պարապմունքներ: Նման փորձ կա ՆԱՏՕ-ի դպրոցում (Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, Օբերամերգաու), որտեղ պարբերաբար կազմակերպվում են ակադեմիական հրահանգիչների դասընթացներ:

3.1.6. Մշակել Ձինված ուժերի բոլոր պաշտոնների զինվորական կոչումների միասնական ցանկ:

3.2. Նշված միջոցառումների իրականացման գործում ներգրավել ՀՀ ՊՆ և ՁՈՒ-ի ԳՇ ստորաբաժանումների և Ռ-ՈՒՀ-երի, ինչպես նաև ՀՀ կրթության և գիտության նախարարության և քաղաքացիական բուհերի ներկայացուցիչներին՝ այդ նպատակով ստեղծելով ՀՀ ՊՆ համադասամբ գործող միջգերատեսչական աշխատանքային խումբ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007:
2. «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին»: «Աշխատանքային տետրեր», 2007, հմ. 4:
3. «Կրթության մասին» 1999 թ. ապրիլի 14-ի ՀՕ-297 ՀՀ օրենքը (տես ՀՀ «Պաշտոնական տեղեկագիր», 1999, հմ. 12 (78)):
4. «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» 2004 թ. դեկտեմբերի 14-ի ՀՕ-62-Ն ՀՀ օրենքը (տես ՀՀ «Պաշտոնական տեղեկագիր», 2005, հմ. 8 (380)):
5. *Б. Боган*. Программа боевых искусств морской пехоты США. «Зарубежное военное обозрение», 2008, № 8.
6. *А. В. Карташев, А. А. Сиников*. О принципах построения системы подготовки военных авиационных специалистов. «Военная мысль», 2007, № 10.
7. *Е. Г. Вапилин, О. Д. Мулява*. Социальные проблемы военного образования. «Военная мысль», 2001, № 1.

**ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ.  
ԿՐԹԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ**



ՀՀ ՊՆ Դ. Կանաչյանի անվան ԱՌՀԻ-ի «Քաղաքական ինստիտուտներ ու գործընթացներ» մասնագիտությամբ ասպիրանտուրայի բացումը՝ ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի և ՀՀ Կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանի մասնակցությամբ.  
Երևան, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ, 2010 թ. փետրվարի 15



«Խելացի ուժի» գործակցելիության համատեքստում հայերեն–ռուսերեն–անգլերեն պաշտպանական-անվտանգային բացատրական բառարանի ստեղծման նպատակով աշխատանքային քննարկում՝ առաջատար մասնագետների մասնակցությամբ.  
Երևան, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ, 2009 թ. նոյեմբերի 19



Մարտավարության դաս  
ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում



Գործնական ամենօրյա վարժանք  
ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում



Մասնագիտական տեսական պարապմունք  
մարշալ Ա. Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն ինստիտուտում



Մարշալ Ա. Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն ինստիտուտի  
ռադիո- և էլեկտրատեխնիկական առարկաների լաբորատորիայում



«Ամուր ոգի և միշտ պատրաստ» խորագրով ռազմահայրենասիրական միջոցառում միջնակարգ դպրոցում շրջանավարտների՝  
ՀՀ Պաշտպանության նախարար Ս. Օհանյանի,  
Հայրենական պատերազմի վետերանների, ազատամարտիկների մասնակցությամբ.  
Կոտայքի մարզ, գ. Մրզաշեն, 2010 թ. մայիսի 3



Երիտասարդ սերնդի նախնական զինվորական պատրաստում ու ռազմահայրենասիրական դաստիարակություն.  
Երևան, Գարեգին Նժդեհի անվան դպրոց, 2010 թ. մայիսի 5

РАЗВИТИЕ И УСОВЕРШЕНСТВОВАНИЕ  
СИСТЕМ ВОЕННОГО ОБРАЗОВАНИЯ  
И ДОЛЖНОСТНОГО ПРОДВИЖЕНИЯ КАДРОВ  
С УЧЕТОМ ОПЫТА ВОЕННО-АВИАЦИОННОГО ИНСТИТУТА  
ИМЕНИ МАРШАЛА А. ХАНФЕРЯНЦА

*Д. К. БАЛАЯН, полковник, летчик-инструктор 1 класса, начальник Военно-авиационного института им. маршала А. Ханферянца МО РА,  
З. А. АКОПДЖАНИЯН, полковник, кандидат технических наук, заместитель начальника Военно-авиационного института им. маршала А. Ханферянца по учебной и научной работе*

РЕЗЮМЕ

В «Военной доктрине Республики Армения» в качестве одной из задач оборонной реформы указывается развитие систем военного образования и должностного продвижения кадров как важного фактора обеспечения боеспособности ВС РА.

С учетом накопленного опыта деятельности Военно-авиационного института выявленные в этой области проблемы и предлагаемые для их решения меры представляются в трех сферах: военно-патриотическое воспитание, военное образование, эффективная кадровая политика и современная система продвижения кадров.

THE DEVELOPMENT AND IMPROVEMENT  
OF THE SYSTEMS OF MILITARY EDUCATION  
AND PERSONNEL PROMOTION IN TERMS  
OF THE EXPERIENCE OF MARSHAL A. KHANPERYANTS  
MILITARY AVIATION INSTITUTE

*D. K. BALAYAN, Colonel, First class Pilot-Instructor,  
Head of Marshal A. Khanperyants Military Aviation Institute, MOD, RA,  
Z. A. HAKOBYANYAN, Colonel, PhD in Technical Sciences,  
Deputy Head for Educational and Academic Affairs  
of Marshal A. Khanperyants Military Aviation Institute, MOD, RA*

SUMMARY

The development of the systems of military education and personnel promotion as an important factor of ensuring the fighting efficiency of the Armed Forces of the Republic of Armenia is indicated as one of the tasks of the defense reforms in the Military Doctrine of the Republic of Armenia.

Taking into account the experience of the activity of the Military Aviation Institute the problems revealed in this field and the measures to solve them are presented in three spheres: military-patriotic training, military education, efficient recruitment policy and modern personnel promotion system.

# ՆՈՐ ՀԱՆԳԱՍԱՆՔՆԵՐ. ՌԱԶՄԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄ

*Փիտեր Ֆուր, պրոֆեսոր\**



Պատերազմի մասին հայտնի ասացվածքի վերաձևակերպմամբ՝ ռազմական կրթությունը այնքան կարևոր բան է, որ չի կարող վստահվել միայն զեներալներին: ՈՒ թեև մոտենում է 21-րդ դարի առաջին տասնամյակի ավարտը, սակայն դեռ պարզ չէ, թե, նրանցից բացի, ո՞վ պետք է ևս մասնակցի այդ գործընթացին: Ո՞րն է այսօր ազգային պաշտպանության պահանջմունքների և հաճախ շատ հեռու տեղի ունեցող բազմազգ գործողություններում համագործակցության ճիշտ հաշվեկշիռը: Ինչպե՞ս ապահովել զինված ուժերին ցուցաբերվող հանրային աջակցության և դրանց կողմից ըստ անհրաժեշտության կլանվող պետական ռեսուրսների մակարդակները, երբ պետությունների մեծ մասը չունի արտաքին թշնամի (Եվրամիության անդամները), անգամ չկա դրանց ի հայտ գալու հնարավորությունը (նույնը), կամ պետություններն իրենց նպատակների բերումով թշնամիներ են ստեղծում (Չինքաբվե): Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ այսօր պատերազմներն իրենց բնույթով ոչ այնքան միջազգային են, որքան ներքին, ապա նման իրավիճակում ինչպե՞ս պետք է զինված ուժերը պատրաստել ազգային անվտանգության ոլորտում իրենց պարտականությունների կատարմանը: Ո՞րն է այդ դեպքում վարժանքի և կրթության միջև ճիշտ հարաբերությունը:

Դա դիտարկվող բնագավառի համար պատասխանատու սպաների, գիտնականների և պաշտոնյաների՝ միջազգային հանրությանն ուղղված հարցերի միանգամայն կամայական շարք է: Այստեղ նշված չեն պորբլեմների այն բոլոր կողմերը, որոնք ծառանում են ազգային, հատկապես՝ որոշ պետությունների ռազմաուսումնական հաստատությունների հրամանատարների առջև: Այնուամենայնիվ, նրանք բոլորն էլ արժանի են մեր աջակցությանն ու կարեկցանքին, քանի որ նրանց առջև դրված է գրեթե անլուծելի խնդիր, եթե հաշվի առնենք իրենց սաների հետ շփումների տևողության սահմանափակությունը, ինչն ինքնին արդեն պորբլեմ է, ինչպես նաև այն բարդ պայմանները, որոնցում կարող են քաղաքական որո-

\* Փիտեր Ֆուրը փիլիսոփայության դոկտոր է (Էդինբուրգի համալսարան), Անվտանգային քաղաքականության ժնեյան կենտրոնի գիտության գծով դեկան: Ներկայումս նրա գիտական հետաքրքրությունների հիմնական ոլորտը միջազգային ռազմական կրթությունն է: Նա վարել է մի շարք բուհական և հետբուհական դասընթացներ, եղել է արտաքին փորձագետ և խորհրդատու բրիտանական ու արտասահմանյան մի շարք համալսարաններում: Բազմազգ ռազմական կրթության և դրա կառավարման ոլորտում իր ավանդի համար պարգևատրվել է Բայթյան պաշտպանական բոլեջի շքանշանով:

շումների հետևանքով հայտնվել զինված ուժերը: Քանի որ համարյա բոլոր միջազգային գործողությունները բազմազգ են, ապա այն հանգամանքը, թե ինչպես որևէ պետության վատ պատրաստված զինվորներն ու նրանց հրամանատարները կհարմարվեն տվյալ դաշնակցային խմբավորման կազմում, իր մեջ պարունակում է միջազգային պրոբլեմն ավելի սրելու վտանգ: Սակայն կան և խորքային հարցեր, որոնք ավելի համակարգային են և օգնում են մեզ հասկանալու նման անհատների դերը և պատասխանատվությունը:

Դրանցից առաջինը այն պայմանների ըմբռնման բարդությունն է, որոնցում մենք հայտնվել ենք: Ապշեցուցիչ է այն իսկ փաստը, որ մենք դեռ շարունակում ենք որպես մեկնակետ դիտել Սառը պատերազմի ավարտը: Մենք պարզապես որևէ կերպ չենք անվանել մեր ներկայիս ժամանակաշրջանը, որի սկիզբը կարող է համարվել 1989, 2001 կամ 2005 թվականը: Ժամանակն անվանելու մեր անկարողությունը որոշակիության պակասի վկայությունն է: Մենք բոլորս փնտրում ենք մեր ճանապարհը: Այլևս չկան այն անվտանգային և ռազմական ուղենիշներից շատերը, որոնց հիման վրա կառուցվել էր ավագ սերնդի զինվորական սպաների կրթությունը: Նախկին Հարավսլավիայում տեղի ունեցած պատերազմները, Իրաքի դեմ մղված երկու պատերազմները և Աֆղանական հակամարտությունը, էլ չխոստելով Աֆրիկայում իրագործված բազմաթիվ խաղաղապահական օպերացիաների մասին, ավելի մեծ ռազմաճակատային, օպերատիվ ու մարտական փորձ են տվել ավելի շատ եվրոպական երկրների ավելի մեծաթիվ զինվորականների, քան 1945 թվականից 1990 թվականն ընկած ամբողջ ժամանակահատվածը: Սակայն բարձրաստիճան զինվորական ղեկավարության մտածելակերպի և դատողությունների ամենախորքում բարձր տեխնոլոգիական զենքերի կիրառմամբ սովորական պատերազմը դեռևս մնում է որպես ստանդարտ: Ամենաբարձր մակարդակով պատերազմ վարելու կարողությունը դիտվում է որպես հակամարտության ավելի ցածր մակարդակում գործելու կարողության նախապայման: Համարվում է, որ միայն այդ ցածր մակարդակներում մասնագիտորեն արդյունավետ գործելու կարողությունը նշանակում է, թե պետությունը խոցելի է հզոր ռազմական ներուժ ունեցող թշնամու համար: Շարունակաբար մեծ գումարներ են ծախսվում բարձր տեխնոլոգիական համակարգերի վրա, որոնք ռազմական գործողություններում ունեն սահմանափակ գործնական կիրառություն, սակայն կլանում են ամբողջ աշխարհի զինված ուժերի համար ժամանակի ու փողի մեծ պաշարներ: Եվ ռազմաարդյունաբերական համալիրը միայն ուրախ է աշակցելու այս գործընթացի շարունակմանը, քանի որ բարձր տեխնոլոգիական զենքերի լայնամասշտաբ վաճառքը որոշ ժամանակ գտնվել է խիստ ճնշման տակ:

«Մեծ տղաների համար խաղալիքներ» դեպքի մյուս կողմն է պաշտպանական ուժերի և դրանց օրինականությունը ապահովող միակ սուբյեկտի՝ ազգային պետության փոխհարաբերությունը: Որպես ասվածի հիմնավորում բերենք Եվրոպայի օրինակը: Արդյո՞ք այդ մայրցամաքում պատերազմը վերջնականապես անցել է պատմության գիրկը: Արդյո՞ք ժողովրդավարությունների միջև պատե-

րազմն անհավանական է, ինչպես վստահաբար պնդում են ոմանք: Ռազմական հաստատությունները մեծ մասամբ պահպանողական ու հռեռես են. փորձված միջոցներն ավելի լավ են (բացառությամբ եղածը բարելավելու համար ընտրված որոշ նոր տեխնոլոգիաների), և այս մոտեցումը չպահպանելու դեպքում գործերը կարող են վատանալ: Սա սահմանադրորեն պատասխանատու դիրքորոշում է, եթե այն ընկալվում է որպես պետությունում առավելագույն իշխանությամբ և պատասխանատվությամբ օժտված քաղաքական ղեկավարությանը տրամադրվող ռազմավարական խորհրդատվության մաս: Դա չի նշանակում, թե պահպանողական հռեռեսության տեսակետը միշտ ճիշտ է. պարզապես լավ կլինեք, որ յուրաքանչյուր կարևոր ազգային որոշում կայացվի նոր ձեռնարկումների բացասական կողմերի հաշվառմամբ: Միայն անսահմանափակ ռազմական լավատեսությամբ առաջնորդվող ռազմավարական քաղաքականությունը կարող է շատ ավելի մեծ մտահոգության պատճառ դառնալ:

Հակառակ դրան՝ գոյություն ունի մի անժխտելի իրողություն. զինված ուժերը կարծես մեկուսացված են այն մեծ պրոբլեմներից, որոնց պետք է դիմակայի ազգային պետությունը: Լուրջ անհանգստություն է պատճառում կլիմայի փոփոխությունը, ինչի ապացույցը Կոպենհագենում վերջերս կայացած զագաթնաժողովն է: Ներգաղթը հարմարման խնդիրներ է առաջացնում հյուրընկալող հասարակությունների համար. ռազմական կառույցներն ու կարողությունները պիտանի չեն դրանց լուծմանը: Սնունդ, վառելիք և ֆինանսներ. այս երեք պրոբլեմների պատճառները չունեն ռազմական ծագում կամ լուծում, թեև արտակարգ իրավիճակներում գորքերը կարող են իրապես օգտակար լինել դրանց բաշխման գործում: Բնակչության ծերացումը ակնհայտ պրոբլեմներ է ստեղծում զինված ուժերի համար, սակայն դա ավելի շուտ այն սոցիալական խնդիրը չէ, որի լուծմանը զինվորականները կարող են նպաստել:

Այսպիսով՝ վերջին ժամանակներս չի եղել մի շրջան, երբ ռազմական գործը բախվեր միանգամից այդքան շատ մարտահրավերների: Մենք դարձյալ պետք է կարեկից լինենք նրանց, ովքեր նման պայմաններում պատասխանատու են զինվորական կադրերի վարժեցման և ուսուցման համար: Այնուամենայնիվ, ինչպես միշտ, բարդությունների այս շրջան ևս իր հետ բերում է հեռանկարային հնարավորություններ: Առավել հավանական է թվում, որ ապագայի պահանջների նկատմամբ ամենազգայունը հարմարվելու անհրաժեշտության բերումով կլինեն ռազմական քոլեջները, նաև՝ դիվանագիտական պատրաստման հաստատությունները, ինչը պայմանավորված է դրանց մշտական թարմացմամբ՝ ի հաշիվ ժամանակակից մարտական գործողությունների փորձ ունեցող սպաների ներգրավման: Նման բան մի քանի տարի տեղի էր ունենում Համբուրգի Ֆյուրունգս ակադեմիայում\* Աֆղանստանում գերմանական զորքերի տեղակայումից հետո: Հյուսիսային շրջանների վերականգնման խմբի կազմում, որը անվտանգության ապահովման

\* *Ֆյուրունգս ակադեմիան* (Führungs Akademie)՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության Չինված ուժերի՝ Բունդեսվերի բարձրագույն ուսումնական հաստատությունն է: Խմբ.:

օժանդակող միջազգային ուժերի անունից ղեկավարում էր Գերմանիան, հրամանատարական փորձ ձեռք բերած երիտասարդ կապիտանը կամ մայորը չէր կարող «ձեռքերը ծալած նստել», երբ ժամանակակից պատերազմին և օպերացիաներին անձանոթ գնդապետները նրան համագործակցության մարտ էին ուսուցանում: Նոր թշնամու դեմ մարտերի բովով անցած երիտասարդ սպան շատ սուր է զգում, թե ինչ է պահանջում իրավիճակը: Եվ դա օգուտ է ռազմական կրթությանը: Սա այն ուղիներից մեկն է, երբ հարմարվելու գործընթացը տեղի է ունենում բնականոն կերպով:

Նման մոտեցման վտանգավորությունն այն է, որ հարմարեցումը ծայրահեղության է հասցնում. ընթացող օպերացիայի կամ ռազմարշավի մասնագիտական ուսուցումը համապատասխանեցվում է կարիքներին: Կարելի է ասել, որ մեծ քանակությամբ Գերմանիայի Չինված ուժերի երկարաժամկետ կարիքները վերածնակերպվել էին, ըստ երևույթին, այլ նկատառումների հաշվին բանակի առաջնահերթությունները շեշտելու համար և սուբյեկտիվորեն գտվել շատ «ավելորդություններից», որոնք գործնականում էական չեն Աֆղանստանում Կանադայի ռազմարշավային առաքելության համար: Այս երևույթը առավել նշանակալից է դառնում, եթե հաշվի առնենք, որ Կանադան պետք է իր առաքելությունն ավարտի 2011 թվականին: Հետաքրքիր կլինի տեսնել, թե ինչպես զինվորական կադրերի պատրաստումը կկերպավորվի Աֆղանստանից Կանադայի հեռանալուց հետո, եթե դա իսկապես տեղի ունենա 2011 թվականին: Խնդիրը պարզ է. անգամ այդ յուրահատուկ առաքելությունը շարունակվելու դեպքում Կանադայի համար Աֆղանստանը անվտանգության միայն մի կողմն է, և կա պատասխանատվություն ազգային ուժերը ոչ միայն ըստ ներկայումս գոյություն ունեցող, այլև երկարաժամկետ հեռանկարում հավանական հրամայականներին համապատասխան խելամտորեն կիրառելու համար:

Հրամանատարական քոլեջները չեն կարող միայնակ տանել այս բեռը, սակայն ճիշտ հաշվեկշռի որոնումն իր արտացոլումն է ստանում զինվորական կադրերի պատրաստման ոլորտում: Դա պահանջում է զգուշավորություն և, երբեմն, շրջահայացություն՝ կապված զորամասի սովորականից ավելի մեծ ինքնակառավարելիության օգտագործման հետ: Իհարկե, ասելն ավելի հեշտ է, քան գործելը, սակայն տվյալ հանգամանքները միանգամայն նպաստավոր են: Արդյունավետ լինելու խիստ անհրաժեշտությունը, որը ծագում է բազմազգ ուժերում, անգամ փոքրաթիվ խմբով գործելու դեպքում, հրամանատարների համար մեծ օգնություն է ազգային պատմեղները նվազեցնելու եղանակների որոնման ժամանակ: Սակայն, ամեն դեպքում, դա առնվազն ինչպես վարժեցման, այնպես էլ կրթության, խնդիր է և դրանով իսկ կապված է երկարաժամկետ նկատառումների հետ: Հետևյալ թվարկումը պարզաբանում է ասվածը.

- ռազմական կառույցում երիտասարդ, փորձառու, տաղանդավոր կադրերի պատշաճ գործնական ուսուցումը ուժի աղբյուր է,
- հրամանատարական քոլեջի կրթական ծրագրերի հավասարեցումը համալ-

սարանների դիպլոմային ծրագրերի հետ ընդգրկում ուսումնական դասընթաց անցած հրամանատարին հնարավորություն է տալիս պաշտպանվելու այն նեղ տեսակետից, ըստ որի հրամանատարական քոլեջը դիտվում է որպես նախաձառնադրական պատրաստում,

- ոչ գերտեսականացած գիտական պրոֆեսորադասախոսական կազմի ներգրավումը լրիվ աշխատաժամանակով, բացի այն հանգամանքից, որ ազատում է ղեկավարներին՝ հնարավորություն տալով կատարելու իրենց ավելի հատուկ պարտականությունները, նպաստում է նոր զարգացումներին մասնակցության ապահովմանը,

- հրամանատարների խորհրդաժողովներում (կազմակերպված թե՛ ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի, թե՛ «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի ուսումնական կենտրոնների կողմից) հրամանատարների միջև ակտիվ շփումները նպաստում են ազգային պլանները դաշնակից հանրությունների պլանների հետ զուգահեռելու միջոցով ուսուցման դերի պահպանմանը,

- ներկայումս գոյություն ունեցող բազային դասընթացների շարքի օգտագործումը ինքնուրույնության ամրապնդման պատրաստի միջոց է<sup>1</sup>,

- շատ կարևոր է ուսումնական գործընթացում ներգրավել այն բոլոր գործընկերներին, որոնց հետ զինվորականները պետք է քաջ ծանոթ լինեն, եթե ուզում են արդյունավետ գործել հնարավոր ռազմական օպերացիայի ժամանակ: Դա կներառի զանգվածային լրատվության միջոցները, հասարակական կազմակերպությունները, օգնություն ցուցաբերող գործակալությունները, ՄԱԿ-ի հաստատությունները, պետական իշխանությունները՝ վարժությունների միջոցով և այլ մեթոդներով վարժանքի միջավայրը, ըստ էության, համապատասխանեցնելով այն պայմաններին, որոնցում սպաները ստիպված կլինեն անհրաժեշտաբար գործել:

Թեև ոչինչ հնարավոր չէ երաշխավորել, հնարավորությունների մնացած համախումբը ի վիճակի են ստեղծագործաբար օգտագործել միայն այն մարդիկ, որոնք հեղինակություն են վայելում միջին և բարձր մակարդակներում ռազմական կրթության համակարգի ձևավորման գործում: Միասին վերցված՝ դրանք կարող են դառնալ տարբեր նախաձեռնությունների խթան, ինչն էլ կդառնա բարեփոխումների հաջողության տարրը:

Այն, ինչ այստեղ առաջարկվում է, չի արժանանա նրանց հավանությանը, ովքեր որպես ռազմական գործի առավելություն են դիտում դրա տարանջատվածությունը հասարակությունից և համարում են առանձին տարր, որը շնորհիվ իր արժեքների, կարգուկանոնի ու մշակույթի փաստացի գերակայում է շրջակա միջավայրում: Զանի որ գնդային պատմություններն ունեն խիստ սահմանափակ արժեք, ապա շատ օգտակար կարող է լինել ռազմական պատմությունը, որը

<sup>1</sup> Լրացուցիչ օրինակների համար որպես ընդհանուր գիտական ակնարկ տես (<https://consortium.pims.org/reference-curriculum-http://www.pap-dib.ethz.ch/partnership-action-plan-for-defense-institution-building>), իսկ որպես գերազանց ներածություն՝ <http://www.pap-dib.ethz.ch/>:

խարսխված է պատերազմող հասարակությունների սոցիալական, տնտեսական, քաղաքական և բարոյական ոլորտների վրա: Նույն կերպ ռազմական կրթությունը պահանջում է այն բանի գիտակցում, որ իր համատեքստը երբեմն լինում է չափազանց նեղ: Որպես օրինակ վերցնենք զուտ ռազմական արվեստի և հմտության դեպքը՝ ռազմարշավի պլանավորումը «օպերացիայի գծերի»<sup>\*</sup> կիրառմամբ: Եթե այդ գծերը չեն ներառում անցում պատերազմի օրենքներից օրենքի գերակայությանը, անցումային վերահսկողություն և սահմանադրության նախագծի մշակում, բանկային ծառայությունների և ներդրումների վերականգնում, ապա ՄԱԿ-ի գործակալություններն ու բազմաթիվ ոչ կառավարական կազմակերպություններ, կորցնելով իրենց դերակատարության կարևորությունը, կարող են դառնալ ոչ թե լուծումներ տրամադրող միջոց, այլ ավելի շուտ պրոբլեմների աղբյուր: Նույնը կարելի է ասել այն զինվորականների մասին, որոնք պարզապես ելնում են պատմության առումով ժամանակավոր և ողբերգական գաղափարի՝ թշնամու հանդեպ հաղթանակի տեսանկյունից:

Դա մեր օրերում հատկապես կարևորվում է այն պատճառով, որ ամեն ինչ ունի միավորված, փոխկապված և համընդհանրացված բնույթ: Անգլիացի բանաստեղծ Ջոն Դոնը իր «Աղոթքներ առ Աստված՝ կարիքի և արհավիրքի պահին» ստեղծագործության մեջ գրել է. «Ոչ մի մարդ կղզի չէ, ինքնին չէ. ամեն մի մարդ մայրցամաքի մաս է, ցամաքի մի մաս»: «Մարդ» բառը փոխարինենք «զինվորական» բառով, և ամեն բան պարզ կդառնա. հրամանատարներն ավելի լավ կարգախոս չէին կարող ընտրել: Դա շատ լուրջ, բայց և հույժ պատասխանատու դիրքորոշում է, ուստի և կարժանանա մեծ երախտագիտության:

<sup>\*</sup> Օպերացիայի գծերը (*lines of operation*) գործի դիրքավորման վայրը և նպատակակետը միացնող երևակայական գծերն են: Խմբ.:

## EMERGENT OCCASIONS: REFORMING MILITARY EDUCATION FROM WITHIN

PETER FOOT<sup>1</sup>

To paraphrase a famous remark about war, military education is too important to be left to Generals. Yet, as we close the first decade of the 21<sup>st</sup> century, it remains unclear who else ought to be involved. What, today, is the right balance between the requirements of national defence and cooperating in multinational operations, often far away? How to maintain levels of

<sup>1</sup> Peter Foot (PhD, University of Edinburgh) is Academic Dean at the Geneva Centre for Security Policy. The main area of his current academic interests is international military education. He has run a number of undergraduate and postgraduate courses and been an External Examiner and Advisor for British and overseas Universities. He was awarded the Baltic Defense College Medal for his contributions to multinational military education and its management.

popular support for the armed forces—and the national resources they necessarily absorb—when most states have no external enemy (members of the EU); lack the possibility of one emerging (ditto); or invent them for their own purposes (Zimbabwe)? Given that most wars today are domestically based rather than international in character, just how should armed forces be prepared for national security duties in such conditions? What is the right balance between training and education in such circumstances?

This is a largely arbitrary list of questions, directed towards the international community of officers, academics and officials charged with responsibility in this area. The list does not address all aspects of the problems facing commandants of national military training establishments, nor yet those of specific nations. But all of these commandants deserve our support and sympathy: they have an almost impossible task, given that their students are with them for only a limited period—itself a distinct problem, given the complexity of conditions in which armed forces can find themselves engaged as a result of political decisions. As almost all international deployments are multinational, how ill-prepared soldiers of one nation and their commanders fit inside an alliance formation has the risk of making an international problem even worse. But there are deeper issues that are more systemic that help us understand the role of such individuals and the responsibilities they carry.

The first of these is the difficulty we all have in understanding the conditions we are in. The very fact that we still keep referring to the end of the Cold War as a departure point is fascinating: we simply do not have a name for the period we are now in—beginning in either 1989, 2001 or 2005, depending on choice. Not being able to «name» our time reflects a lack of certainty. We are all finding our way. Most of the security and military landmarks that make up the education of the generation of senior military officers have disappeared. The wars within the former Yugoslavia, the two wars with Iraq and the conflict in Afghanistan—to say nothing about the many peace support operations in Africa—have provided far more front-line, operational and combat experience for more militaries from more European countries than for the whole of the period from 1945 to 1990. But the deep hinterland of the minds and judgements of senior military leadership still sees conventional war waged with high technology weaponry as the default setting. The ability to wage warfare at the highest level is seen as the precondition of being able to operate at the lower level of conflict. Being able to be professionally effective only at those lower levels is argued as leaving a state vulnerable to an enemy with heavier military capability. Large amounts of money continue to be spent on high technology systems with

very limited actual usage in the operations that absorb so much time and money for militaries around the world. And the military-industrial complex is only too happy to help this to continue, as large-scale, hi-tech arms sales have been under downward pressure for some time.

The other side of the «toys for the boys» case is the relationship between the defence forces and the nation state that alone gives them legitimacy. To restrict the argument to Europe makes the point. Has war on that continent finally been consigned to history? Is warfare between democracies simply inconceivable as some so confidently assert? For the most part, military institutions are conservative and pessimistic: proven ways are better (with the exception of select new technologies to do old things better) and things are likely to get worse if this is not maintained. This is a constitutionally responsible position when taken as part of strategic advice to political leadership which has the ultimate authority and accountability in the state. It does not mean that the views of conservative pessimism are always right – it is rather that each major national decision should take into account the negative side of new departures. Strategic policy governed only by untrammelled military optimism causes far more concern.

Against this lies an undeniable reality: armed forces seem marginalised in relation to the big problems that have to be confronted by the nation state. Climate change worries all a great deal; the recent summit in Copenhagen is testimony to that. Migration raises adaptability issues for host societies; military structures and capabilities are irrelevant to their solution. The causes of the three problem Fs – food, fuel and finance – have no military origins or solutions, though troops can be of real help in emergency distribution situations. Aging populations cause obvious problems for armed forces, rather than being a societal issue that the military can contribute to solving.

In sum, there has in recent times never been a moment when so many challenges to the profession of arms were *simultaneously* present. Again, one must be sympathetic to those charged with training and education in such conditions. However, as with all things, this nexus of complexity comes with the prospect of opportunities. Given the need to adapt, it is most likely that military colleges – and diplomatic training establishments – will be the places most sensitive to the needs of the future. What drives this is the constant refreshment that comes with new intakes of officers with up-to-date operational experience. The Fuehrungs Akademie in Hamburg faced this some years or so after Germany deployed soldiers to Afghanistan. A young captain or major with command experience in the northern PRT that Germany manages on behalf of ISAF was not going to sit quietly by while the

all-arms battle was being taught by colonels unfamiliar with modern warfare and operations. Young officers with frontline exposure to a new enemy have a fairly austere sense of what is relevant. And this is good for military education. It is one of the ways that adaptation takes place naturally.

The danger in such an approach is that adaptation goes too far: the needs of the current operation or campaign become synonymous with career development training. Something along these lines might be said to have taken place in Canada where, under the charismatic leadership of General Rick Hillier, the longer run needs of the Canadian Forces have arguably been redesigned to emphasise Army priorities at the expense of other considerations, and biased against much that is not operationally relevant to Canada's expeditionary Afghan mission. What makes this especially notable is that Canada is due to complete that mission in 2011; it will be interesting to see how training is recalibrated after Canada withdraws, if that, in fact, is what happens in 2011. The point is clear: even with continuity in that specific mission, Afghanistan remains only one aspect of Canada's security and there remains a responsibility to husband national forces for the long term, not just the immediate imperatives of the present.

The Staff Colleges cannot alone take on this load but part of finding the right balance *does* find expression in training and education. This needs to be handled with care and, sometimes, circumspection – with the exploitation of as much autonomy of command than is perhaps usual. This is, of course, more easily said than done but circumstances are quite propitious. The pressure to be effective when deployed in a multinational force, even in small numbers, gives Commandants a stronger hand in determining the way to minimise national embarrassment. But this is at least as much an education matter as a training one – and so linked to longer-term considerations. A list makes this clearer.

- Mentoring young, experienced talent within a military structure, properly handled, is a source of strength.
- Aligning with university degree programmes allows a Commandant to defend a broad curriculum from those threatening a narrow view of staff college as providing pre-job training.
- Including full-time, not over-theoretical academic faculty on the teaching staff – apart from freeing Directing Staff for other duties for which they are better suited – helps ensure engagement with new developments.
- Cross-referencing with other Commandants through the active auspices of the Conferences of Commandants (both the NATO/PfP and the PfP Training Centres) helps defend the training role by paralleling national plans with those of the allied communities.

- Using the range of Reference Curricula now available is a ready-to-hand device for reinforcing independence<sup>2</sup>.

- Including, crucially, in the teaching the full range of partners with which militaries need to be familiar if they are to be effective in any likely military operation. This will include the media, NGOs, aid agencies, UN institutions, national authorities – creating a training environment that will, by definition, match more closely through exercises and other devices, the conditions in which officers will most demandingly have to operate.

There is nothing guaranteed about it but such a constellation of opportunities can be used creatively by those who carry authority for shaping military training at the middle- to senior-levels. Taken together, they can constitute the kind of initiative for momentum that will be part of the eventual success of the reforms.

What is being proposed here will find no favour with those who see the virtues in the profession of arms as being separate from society, a distinct element within which, as a consequence of its values, discipline and culture, is actually superior to the surrounding context. Just as regimental histories are of very limited value, so military history that is rooted in the social, economic, political and ethical of the societies at war has a much greater utility. In the same way, military training needs self-consciously to recognise that its context is sometimes just too narrow. As an example, take a specifically military skill and technique, campaign planning with «lines of operation». If these lines do not include the transition from the laws of war to the rule of law, transitional policing and constitution drafting, reestablishment of banking and investment, the role of UN agencies and a plethora of NGOs – to name just some – has missed the point and is likely to be the source of more problems than providing solutions. The same can be said of militaries that simply think in terms of that historically temporary and tragic idea, victory over the enemy.

What makes this especially important is the allied, interconnected and globalised nature of everything today. As the English poet, John Donne, wrote in «Devotions upon Emergent Occasions»: «No man is an island, entire of itself; every man is a piece of the continent, a part of the main». Substitute the word «military» for «man» and the point is made: commandants could do little better than taking that as their motto. It is a somber but profoundly responsible position to take – and for which much thanks will be given.

---

<sup>2</sup> As complementary examples, see <https://consortium.pims.org/reference-curriculum-partnership-action-plan-for-defense-institution-building> as an academic overview and <http://www.pap-dib.ethz.ch/> as an excellent introduction.

НОВЫЕ ОБСТОЯТЕЛЬСТВА:  
КОРЕННАЯ РЕФОРМА ВОЕННОГО ОБРАЗОВАНИЯ

*ПИТЕР ФУТ, профессор, декан по науке  
Женевского центра безопасностной политики*

РЕЗЮМЕ

В настоящее время насущной становится проблема обеспечения взвешенного баланса между нуждами вооруженных сил по обеспечению национальной безопасности и требованиями, связанными с участием в миротворческих операциях в составе многонациональных сил, часто осуществляемых вдали и лишь косвенно связанных с национальными интересами. При этом подготовку вооруженных сил необходимо планировать и осуществлять с нацелом на их разумное применение как в современных условиях, так и с учетом вероятных императивов на долгосрочную перспективу. В соответствии с этим должна быть реформирована и система военного образования. Стереотипный подход, существовавший в период 1945–1995 годов стандартной теории военного искусства, не только не соответствует нынешним требованиям, но и могут повлечь за собой снижение уровня и авторитета военного образования и преподавателей – особенно среди обучающихся молодых офицеров, уже имеющих боевой опыт участия в современных военных операциях.

Необходимость коренного реформирования военного образования выдвигает на первый план роль и ответственность личностей – командиров военных колледжей, преподавателей, должностных лиц среднего и высшего уровня.

Именно они несут ответственность за подготовку поколения военных лидеров, которые осуществят необходимые изменения.

С этой целью командирам необходимо учесть следующее: практическое обучение молодых, опытных и талантливых кадров; приведение учебных программ военно-образовательных учреждений в соответствие с университетскими дипломными программами; вступление в сотрудничество с опытными учеными-преподавателями; организация постоянных профессиональных контактов между руководителями военно-образовательных учреждений различных стран посредством их участия в международных симпозиумах, конференциях, семинарах; применение существующего в настоящее время ряда базовых курсов обучения является доступным средством для укрепления самостоятельности; а также чрезвычайно важно привлечение всех тех партнеров, с которыми военные должны быть знакомы, если хотят действовать эффективно во время любой вероятной военной операции. Совокупность таких возможностей в состоянии творчески использовать только те люди, которые пользуются авторитетом в деле формирования системы военного образования на среднем и высшем уровнях. Они, вместе взятые, могут стать стимулом для различных инициатив, что и явится частью возможного успеха реформ.

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ  
ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊՐՈԲԼԵՄԸ  
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ

Մ. Ա. ՓԱՐՎԱՆՅԱՆ, ավագ լեյտենանտ, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի հայցորդ,  
ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի ֆինանսական մասի պետ



Հայաստանի Հանրապետությունը Սահմանադրությամբ հռչակվել է որպես սոցիալական պետություն, որի կայացման ճանապարհին ծառայան մի շարք որակապես նոր պրոբլեմներ, որոնք կարևոր նշանակություն ունեն ազգային անվտանգության համար: Դրանց լուծումը պահանջում է նոր ռազմավարական մոտեցումներ ու հաստատութենական բարեփոխումներ:

Նման պրոբլեմներ են գործազրկությունը\*, և հատկապես՝ երիտասարդության շրջանում (16-30 տարեկան)\*\* , մասնագիտական կրթական\*\*\* ու գիտության ոչ բավարար մակարդակը, որոնք սպառնալիք են ՀՀ ազգային անվտանգության համար: Այդ համատեքստում ուսումնասիրվում են ՀՀ-ում երիտասարդության շրջանում գործազրկության մակարդակը և մասնագիտական կրթության որակը, դրանց միջև հնարավոր հարաբերակցության հարցը, քննարկվում է այդ ոլորտներում պետության քաղաքականությունը և դրա իրականացման արդյունավետությունը, վեր են հանվում առկա խնդիրները, տրվում են դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ:

Առաջին խնդիրը երիտասարդական գործազրկությունն է, որը ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիք է ինչպես անհատի կյանքի որակի, այնպես էլ պետության տնտեսական, սոցիալական ու ժողովրդագրական ոլորտների վրա ազդեցության առումով<sup>1</sup>:

\* Մասնագիտական գրականության մեջ գործազրկությունը բնութագրվում է որպես մի սոցիալ-տնտեսական երևույթ, երբ աշխատանքային ռեսուրսների մի մասը զբաղված չէ տնտեսության որևէ հատվածում: Առանձնացվում է գործազրկության «բնական» մակարդակ հասկացությունը, որը սահմանվում է որպես տնտեսության ներուժի լրիվ օգտագործման պայմաններում առկա գործազրկություն և չի դիտարկվում որպես հիմնախնդիր (տարբեր երկրներում այն տատանվում է 3-5 տոկոսային կետի սահմաններում): Սույն հոդվածում քննարկվում է «բնական» մակարդակից բարձր գործազրկությունը:

\*\* Սույն հոդվածում երիտասարդության շրջանում գործազրկության առանձին դիտարկումը պայմանավորված է կրթության հետ նրա բարձր մակարդակի առնչությամբ և, ըստ մեզ, պետության անվտանգային հեռահար շահերին առավել սպառնացող երևույթ լինելու հանգամանքով: Երիտասարդների նշված տարիքային խմբի դիտարկման համար հիմք է ընդունվել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (այսուհետև՝ ԱՎՃ) կողմից տարիքային խմբերի դասակարգումը՝ 16-18, 19-24, 25-30 տարեկաններ:

\*\*\* Զննարկվում է մասնագիտական և միջին մասնագիտական կրթությունը:

<sup>1</sup> Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաս-

Անհատի համար, ինչպես իրավացիորեն նշում է ամերիկացի տնտեսագետ Հեյնեն, գործազրկության հետևանքների ընկալումը թեև սուբյեկտիվորեն տարբեր է<sup>2</sup>, սակայն ընդհանուր առմամբ անհրաժեշտ է նշել հետևյալ բացասական հետևանքները:

*Ձեռք չբերված եկամուտներ*, ինչը հանգեցնում է գործազուրկի և նրա ընտանիքի կենսամակարդակի անկման, ընդ որում, երիտասարդներին զրկում է մտավոր ներդրումների աղբյուր հանդիսացող եկամուտներից, ինչի հետևանքով հեռանկարում տնտեսական աճին նրանց մասնակցությունը նվազում է:

*Հոգեկաս ասպրումներ*, որոնք ընտանեկան գծությունների և մեծ թվով ամուսնալուծությունների պատճառ են դառնում կամ խոչընդոտում են ընտանիք կազմելուն, երիտասարդների շրջանում հանգեցնում են իր անձի նկատմամբ վստահության կորստի, ինչն էլ խոչընդոտում է հասարակության զարգացմանը նրանց ակտիվ մասնակցությանը:

*Ոչ նյութական ծախսումներ*, որոնք առաջանում են երկարատև գործազրկության հետևանքով, երբ անհատի մասնագիտական հմտությունները և գիտելիքները ժամանակակից գիտատեխնիկական առաջընթացի պայմաններում հնանում են՝ ազդելով գործազուրկի որակավորման մակարդակի վրա:

Հասարակության համար գործազրկության հետևանքներն են՝ խոչընդոտումը տնտեսական աճին, որի հնարավոր ծավալը ընդհանուր առմամբ ձևակերպված է Օուքենի օրենքում<sup>3</sup>, սոցիալական լարվածությունը, բարոյալքումը՝ մարմնավաճառություն, թմրամոլություն, հանցագործությունների և ինքնասպանությունների թվի աճումը, աշխատանքային միգրացիան աշխատուժի կարիք ունեցող երկրներ<sup>4</sup>:

Այսպիսով՝ երիտասարդների շրջանում գործազրկության՝ որպես գործազրկության առանձին տեսակի պրոբլեմը, խոր վերլուծության կարիք ունի:

Երկրորդ կարևոր խնդիրը մասնագիտական կրթության որակի և գիտության ոչ բավարար մակարդակն է: Որակյալ կրթություն ստացած մասնագետներն ու առաջատար գիտնականները երկրի անվտանգային մտավոր ներուժն են, որը բնական պաշարների սակավության պարագայում ՀՀ-ի համար կոչված է ծառայելու որպես ազգային անվտանգության ու պետության և հասարակության

տատելու մասին» ՀՀ Նախագահի 2007թ. փետրվարի 7-ի հմ. ՆՀ-37-Ն հրամանագիրը («ՀՀ Պաշտոնական տեղեկագիր», 2007, հմ. 11 (535)):

<sup>2</sup> Տես Պ. Հեյնեն, Տնտեսագիտական մտածելակերպ: Ե., 2008:

<sup>3</sup> Ըստ Օուքենի օրենքի՝ «բնական» գործազրկությունից բարձր գործազրկության յուրաքանչյուր 1 տոկոսի դիմաց տնտեսությունը կորցնում է 2-3 % հնարավոր ՀՆԱ (տես A. Okun. Potential GNP: Its Measurement and Significance. Proceedings of the Business and Economics Statistics Section, American Statistical Association. Washington, 1962):

<sup>4</sup> Արևմտյան որոշ երկրներում գործում են միգրացիայի բազմաթիվ կենտրոններ, որոնք զբաղված են օտարերկրյա մասնագետների ծառայություններն իրենց պետության համար օգտագործելու գործընթացով: Օրինակ՝ այդ երկրների աշխատուժի մոտ 10 %-ը կազմում են օտարազգիները: Միջին հաշվով տարեկան 500–800 հազար աշխատանքային միգրանտ է գաղթում ԱՄՆ և Կանադա (տես «Мировая экономика», под ред. А. С. Булатова. М., 2008):

կայուն զարգացման ապահովման կարևորագույն ռեսուրս: Կրթական որակյալներուժը նաև բարձրացնում է երկրի վարկանիշը և նախադրյալներ է ստեղծում միջազգային անվտանգային նշանակություն ունեցող նախագծերին պետության ինտեգրման համար:

Քննարկված երկու հիմնարար պրոբլեմները՝ մասնագիտական կրթության որակի ու գիտության ոչ բավարար մակարդակը և երիտասարդների շրջանում գործազրկությունը փոխազդեցության համատեքստում դիտարկելու անհրաժեշտությունը բխում է առաջին հերթին դրանց միջև եղած պատճառահետևանքային կապերից<sup>\*</sup>, որոնք արտահայտվում են միկրո- և մակրոմակարդակներում:

Միկրոմակարդակում դրանց կապը հասկանալու համար հարկ է բնութագրել աշխատանքի շուկան և աշխատուժ առաջարկողների ու աշխատուժ գնողների հիմնական շարժառիթները: Աշխատանքի շուկան ընդհանուր առմամբ սոցիալ-տնտեսական հարաբերությունների համակարգ է, որի միջոցով իրականացվում է աշխատանքի ծառայության առք ու վաճառքը: Այս համակարգում, մի կողմից, աշխատուժ առաջարկողն է, որը բնութագրվում է մասնագիտական որակներով, տարիքով, հմտություններով և այլն (պահանջարկը խթանող գործոններ), մյուս կողմից՝ աշխատուժ գնողը, որի հիմնական բնութագրիչներն են աշխատանքի պայմանները և աշխատավարձի դրույքաչափը (առաջարկը խթանող գործոններ):

Կրթությունը այս համակարգում աշխատուժ գնողի կողմից դիտվում է որպես մասնագետի նկատմամբ պահանջարկ ձևավորող բավարար որակական հատկանիշների ամբողջություն, աշխատուժ առաջարկողի կողմից «մտավոր ներդրում»՝ ակնկալվող աշխատավարձով համապատասխան աշխատանք ունենալու նպատակով: Ուստի ոչ համապատասխան մասնագիտական կրթական ցենզը բերում է աշխատուժի պահանջարկի անկման, ինչն էլ իր հերթին ցածր աշխատավարձի և համապատասխան աշխատատեղեր չլինելու պարագայում հանգեցնում է որակյալ մասնագիտական կրթության՝ որպես «ներդրումային գործիքի» նկատմամբ պահանջարկի նվազման:

Մակրոմակարդակում, մի կողմից, բարձր մակարդակի գործազրկությունը, խոչընդոտելով տնտեսական աճին, արգելակում է արդյունաբերական համալիրների ստեղծման և զարգացման, հետևաբար և՛ գիտության ու կրթության զարգացումը<sup>5</sup>: Մյուս կողմից՝ գիտության ոչ բավարար մակարդակը խոչընդոտում է նորարարության միջոցով տնտեսության արդիականացմանն ու բազմազանեցմանը:

Ուստի ռազմավարական տրամաշափում անհրաժեշտ է դիտարկել միմյանց հետ փոխկապված հետևյալ ուղղությունները՝

\* Նշենք, որ կրթության և գործազրկության մակարդակների միջև պատճառահետևանքային կապից բացի, երկուսն էլ ունեն նաև այլ հիմնական պատճառներ, սակայն դրանց լուսաբանումն ու վերլուծությունը դուրս է սույն հոդվածի շրջանակներից:

<sup>5</sup> Տես Հ. Մ. *Քոթլակոյան*, Հայ գիտության զարգացումը Հայաստանի ազգային ռազմավարության տրամաշափի մեջ, «ՀԷ», 2008, հմ. 4:

1. գործազրկության մակարդակի կարգավորում՝ անհրաժեշտ աշխատատեղերի ստեղծումը խթանելու միջոցով,

2. մասնագիտական կրթական մակարդակի համապատասխանեցում շուկայական պահանջներին\*:

Առաջին ուղղության քննարկման նպատակով ներկայացնենք ՀՀ-ում «գործազուրկ» տերմինի իրավաբանական սահմանումը: ՀՀ օրենսդրության համաձայն՝ գործազուրկ են համարվում աշխատանք փնտրող աշխատունակ այն չգրադված անձինք, որոնք չեն ստանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կենսաթոշակներ (բացառությամբ՝ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի տեսակների), աշխատանքի տեղավորման նպատակով հաշվառված են զբաղվածության պետական ծառայությունում, պատրաստական են անցնելու հարմար աշխատանքի և, ըստ այդմ, ստացել են գործազուրկի կարգավիճակ<sup>6</sup>:

ՀՀ-ում երիտասարդության շրջանում գործազրկության քանակական վերլուծությունը ցույց է տալիս, որ 2009 թ. դրությամբ երիտասարդները, որոնք մեծ տեսակարար կշիռ ունեն ընդհանուր աշխատանքային ռեսուրսների մեջ, բավականին փոքր մասնաբաժին ունեն զբաղվածների կազմում: Ինչ վերաբերում է երիտասարդների գործազրկության մակարդակին, ապա այն կազմում է 19 %<sup>\*\*</sup>, սակայն պետական կառույցների, ինչպես նաև ոչ պետական մասնագիտացված կառույցների կատարած տարբեր վերլուծություններ փաստում են, որ իրական գործազրկության մակարդակը մի քանի անգամ բարձր է պաշտոնական մակարդակից<sup>7</sup>:

Երիտասարդների գործազրկության տվյալների որակական վերլուծությունը<sup>\*\*\*</sup> ցույց է տալիս, որ գործազուրկ երիտասարդների շրջանում բարձրագույն կրթություն ունեցողները կազմում են 16,1 %, թերի բարձրագույն կրթություն ունեցողները՝ 0,6 %, միջին մասնագիտական կրթություն ունեցողները՝ 28,0 %<sup>\*\*\*\*</sup>: Իսկ ՄԱԿ-ի Չարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի կողմից կատարված հարցմամբ պարզվել է, որ երիտասարդների 45,9 %-ը բուիը ավարտելուց

\* Մասնագիտական կրթությունն ու գիտությունը փոխարացնում են միմյանց, սակայն սույն հոդվածում քննարկում ենք միայն մասնագիտական կրթության ՀՀ-ում առկա մակարդակը՝ հաշվի առնելով երիտասարդների գործազրկության հետ վերջինիս անմիջական կապը:

<sup>6</sup> Տես «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին», 2005 թ. հոկտեմբերի 24-ի հմ. ՀՕ-206-Ն ՀՀ օրենքը («ՀՀ Պաշտոնական տեղեկագիր», 2005, հմ. 75 (447)):

<sup>\*\*</sup> Տվյալները տրամադրվել են «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության կողմից:

<sup>7</sup> Տես «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական իրավիճակը 2009 թ. հունվար-դեկտեմբերին» ([http://www.armstat.am/file/article/sv\\_12\\_09a\\_141.pdf](http://www.armstat.am/file/article/sv_12_09a_141.pdf)):

<sup>\*\*\*</sup> Որակական վերլուծությունը ենթադրում է նաև դիտարկում ըստ սեռի և ըստ տարածքային բաշխվածության, սակայն հոդվածի շրջանակներում քննարկվել է միայն ըստ կրթական ցենզի կառուցվածքը:

<sup>\*\*\*\*</sup> Տվյալները տրամադրվել են «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության կողմից:

հետո դեռևս չի գտել աշխատանք<sup>8</sup>: Ընդ որում, Ջբաղվածության պետական գործակալություն ներկայացված թափուր աշխատատեղերի բնույթի ուսումնասիրությունը վկայում է, որ նրանց գերակշիռ մասը մասնագիտական կրթություն չպահանջող աշխատանքներ են<sup>9</sup>:

Այժմ ներկայացնենք ՀՀ-ում երիտասարդների զբաղվածության կարգավորման գործընթացը:

Երիտասարդների զբաղվածության խնդրի կարգավորման ուղղությամբ նշենք երկու փաստաթուղթ՝ «Երիտասարդական պետական քաղաքականության ռազմավարությունը» և «Ջբաղվածության կարգավորման պետական ծրագիրը», սակայն և՛ մեկի, և՛ մյուսի շրջանակներում մշակված չէ երիտասարդների զբաղվածության կարգավորման հայեցակարգ կամ ծրագիր:

ՀՀ-ում զբաղվածության խնդրի կարգավորման համար պատասխանատու են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, «Ջբաղվածության պետական ծառայություն» գործակալությունը, զբաղվածության տարածքային կենտրոնները:

Ըստ վիճակագրական տվյալների՝ աշխատանքի տեղավորման համար Ջբաղվածության գործակալություն դիմածների փոքր մասն է ապահովվել աշխատանքով, ընդամենը՝ 9,8 %-ը, որոնցից երիտասարդներ են 20,8 %-ը: Ընդ որում, ըստ ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի ուսումնասիրության արդյունքների՝ աշխատանք չունեցող երիտասարդների 61,3 %-ը չի դիմում գործակալություն, ինչն էլ, ըստ էության, դառնում է գործազրկության պաշտոնական և իրական տվյալների միջև զգալի խզման պատճառ, քանի որ այդ երիտասարդները չեն հաշվառվում որպես գործազուրկ:

1998 թվականից մշակվում և իրականացվում են զբաղվածության հանրապետական և տարածքային ծրագրեր, որոնցից հարկ ենք համարում նշել գործազուրկների վերամասնագիտացման և որակավորման բարձրացման, ինչպես նաև վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման ծրագրերը<sup>10</sup>: Առաջինը իրականացվում է զբաղվածության պետական ծառայության ուսումնական կենտրոններում կամ պայմանագրային հիմունքներով՝ ուսումնական այլ հաստատություններում: 2008 թ. տվյալներով միայն 1506 չբաղված անձ է մասնակցել վերապատրաստման դասընթացներին, որոնցից 420-ը երիտասարդներ են: Բերված տվյալներից երևում է, որ գործազուրկների վերապատրաստման համակարգում ընդգրկված չբաղված անձանց թվաքանակը գործազուրկների բանակում ունի փոքր տեսակարար կշիռ: Հասարակական աշխատանքի նպատակն

<sup>8</sup> Տես «ՀՀ մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության զարգացման հայեցակարգային մոտեցումներ»: Ե., 2005:

<sup>9</sup> Տես «Ջբաղվածության պետական ծառայություն» գործակալության կայքէջ (<http://www.employment.am/html/workmarket/vacant.php?city=7#4>):

<sup>10</sup> Իրականացվող ծրագրերի մասին ավելի հանգամանորեն տես «Ջբաղվածության պետական ծառայություն» գործակալության կայքէջ (<http://www.employment.am/html/job/jobprograms.htm>):

է՝ թույլացնել աշխատանք փնտրողների շրջանում սոցիալական լարվածությունը: 2008 թ. ընթացքում 6312 չգրադված անձ է մասնակցել հասարակական աշխատանքների, որոնցից 24,6 %-ը երիտասարդներ են: Մնացած բոլոր ծրագրերում ընդգրկված են քիչ թվով չգրադված անձինք:

Երկրորդ ուղղության առումով անհրաժեշտ է դիտարկել երեք կարևոր պոտրլեն՝

- մասնագիտական կրթության արդյունավետության մակարդակի բարձրացում,
- մասնագիտական կրթության նպատակայնության մակարդակի բարձրացում,
- որակյալ կրթություն ստացած կադրերի արդյունավետ «օգտագործում»:

Մասնագիտական կրթության արդյունավետության աստիճանը կախված է որակյալ մասնագիտական կրթություն ստանալու հնարավորությունից: Տարբեր հետազոտությունների արդյունքներով՝ ՀՀ-ում լավ աշխատանք\* գտնելու գործում առաջնային են համարվում մասնագիտական կրթությունը և մասնագիտական փորձը: Թեև ըստ ԱՎԾ տվյալների՝ 2008 թ. դրությամբ 1000 բնակչի հաշվով ՀՀ-ում բարձրագույն և միջին մասնագիտական կրթության ցուցանիշը, համապատասխանաբար, 353,3 և 98,2 մարդ է<sup>11</sup>, սակայն, ինչպես նշված է ՄԱԿ-ի Մարդկային զարգացման գեկույցում, ՀՀ-ում առկա են լուրջ խնդիրներ՝ կապված կրթության որակի հետ<sup>12</sup>: Արդյունավետության մեծացման նպատակով ՀՀ-ն 10 հիմնական ուղղություններով իրականացնում է կրթական բարեփոխումներ Բոլոնյան գործընթացի շրջանակներում՝ կրթության որակը էականորեն բարելավելու և Եվրոպական միասնական կրթական համակարգին ինտեգրվելու համար<sup>13</sup>: Սակայն դեռևս մշակված չէ ձեռք բերված գիտելիքների կիրառման հմտությունների ձևավորման հայեցակարգ:

Կրթության նպատակայնությունն ասելով հասկանում ենք ստացած գիտելիքների կիրառումը կրթության գործընթացից հետո: ՌՒսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ-ում առկա է մասնագիտական ուսումնական հաստատություններում պատրաստվող և շուկայում պահանջարկ վայելող մասնագիտությունների միջև հսկայական խզում: Մասնավորապես, ըստ Ջրադվածության գործակալության ուսումնասիրությունների՝ զբաղված երիտասարդները մեծ տեսակարար կշիռ ունեն անշարժ գույքի հետ կապված գործառնությունների և

\* Լավ աշխատանք ասելով հասկանում ենք աշխատանքի շուկայում իր մասնագիտական հմտություններին համապատասխան ձևավորված աշխատավարձով և աշխատանքային այլ պայմաններով աշխատանք:

<sup>11</sup> Տես «Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2009» (<http://www.armstat.am/file/doc/99458073.pdf>):

<sup>12</sup> Տես «Միգրացիա և մարդկային զարգացում. հնարավորություններ և մարտահրավերներ»: «Մարդկային զարգացման ազգային գեկույց 2009» ([http://www.undp.am/docs/NHDR\\_2009.zip](http://www.undp.am/docs/NHDR_2009.zip)):

<sup>13</sup> Բոլոնյան գործընթացի իրականացման ուղղությունները տես «Բոլոնյան գործընթացը Հայաստանում», ուղեցույց: Ե., 2008:

առևտրի ու սպասարկման ոլորտներում, նրանց զբաղվածության մակարդակը հատկապես ցածր է գյուղատնտեսության (19 %), տրանսպորտի և կապի (16 %), կրթության (16 %), առողջապահության (17 %), պետական կառավարման (18 %) ոլորտներում\*, մինչդեռ ըստ ԱՎԾ տվյալների՝ վերջին տարիներին պատրաստված մասնագետների շրջանում գերակշռում են տնտեսագիտական, իրավաբանական, մանկավարժական, տրանսպորտի և կապի, գյուղատնտեսական մասնագիտություններ ունեցողները<sup>14</sup>: Ըստ ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2008–2012 թթ. ռազմավարության մեջ բերված տվյալների՝ աշխատող երիտասարդների 56 %-ը չի աշխատում իր մասնագիտությամբ<sup>15</sup>: Հաշվի առնելով, որ ՀՀ-ում գերակա ճյուղեր են համարվում տեղեկատվական տեխնոլոգիաները, արդյունաբերությունը, զբոսաշրջությունը և այլն, կարելի է փաստել, որ երիտասարդների զբաղվածության ոլորտում նմանատիպ զարգացումների հետևանքով ՀՀ-ն ապագայում լուրջ խնդիրներ կունենա տվյալ բնագավառները բարձրակարգ ու փորձառու մասնագետներով ապահովելու հարցում: ՈՒՒՍԻ կրթության նպատակայնության մակարդակի բարձրացումը լուրջ պրոբլեմ է, որի լուծմանը խոչընդոտում են, մի կողմից, մասնագիտությունների ոչ ճիշտ պլանավորումը, մյուս կողմից՝ գերակա ճյուղերում երիտասարդ մասնագետների ներգրավման խթանման համակարգ չունենալը, ինչպես նաև մեր հասարակության մեջ արմատացած բարձրագույն «կրթության» մոլուցքը, որը ուղղակի կերպով հանգեցնում է ֆինանսական, կրթական և այլ ոչ նյութական\*\* ռեսուրսների անտեղի ծախսման:

Մասնագիտական կրթություն ստացած կադրերի արդյունավետ օգտագործման խնդիրը կապված է նաև «ուղեղների արտահոսք» երևույթի հետ: Տարբեր հետազոտություններից<sup>16</sup> պարզվել է, որ որակյալ կրթություն ստացած մասնագետների մեծ մասը մեկնում է արտասահմանյան երկրներ և չի վերադառնում հայրենիք: Ըստ էության՝ հաճախ պետության կողմից ծախսված գումարները ծառայում են այլ պետության հասարակական բարիքի ստեղծման գործին:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարող ենք փաստել, որ՝

1. երիտասարդների շրջանում գործազրկությունը և մասնագիտական

\* Համաձայն «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության կողմից գործատուների շրջանում կատարած ընտրանքային հետազոտության: Տվյալները տրամադրել է «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալությունը:

<sup>14</sup> Տես «Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2009» (<http://www.armstat.am/file/doc/99458073.pdf>):

<sup>15</sup> «ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2008–2012 թվականների ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ Կառավարության 2008 թ. սեպտեմբերի 25-ի հմ. 39 արձանագրային որոշումը (<http://www.youthpolicy.am/download.php?fid=964721996>):

\*\* Ոչ նյութական ռեսուրսներ ասելով նկատի ունենք պետության կրթական մակարդակի վարկանիշը, որը լուրջ հարվածի տակ է դրվում «բուռն ընդունվել հանուն դիպլոմի» ինքնանպատակ ձգտումների պատճառով:

<sup>16</sup> Տես «Միգրացիա և մարդկային զարգացում. հնարավորություններ և մարտահրավերներ»: «Մարդկային զարգացման ազգային զեկույց 2009» ([http://www.undp.am/docs/NHDR\\_2009.zip](http://www.undp.am/docs/NHDR_2009.zip)):

կրթության որակի ու գիտության ոչ բավարար մակարդակը ՀՀ ազգային անվտանգության ապահովման խնդիրներ են, դրանց միջև առկա են պատճառահետևանքային կապեր, և դրանք անհրաժեշտ է դիտարկել համակարգային մոտեցմամբ,

2. ՀՀ-ում երիտասարդները մեծ տեսակարար կշիռ ունեն աշխատանքային ռեսուրսների կազմում, սակայն փոքր՝ զբաղվածների կազմում, նրանց իրական գործազրկությունը մի քանի անգամ մեծ է պաշտոնականից,

3. ՀՀ-ում երիտասարդների գործազրկության հաղթահարման առումով դեռևս մշակված չէ գործուն ծրագիր,

4. ՀՀ-ում զբաղվածության կարգավորման համար պատասխանատու մարմինները դեռ չունեն երիտասարդների գործազրկության նվազեցման ոլորտում լուրջ հաջողությունների հասնելու համար անհրաժեշտ ներուժ, մասնավորապես՝ իրականացվող ծրագրերն ու միջոցառումները չեն կարող ապահովել երիտասարդների զբաղվածության կարգավորման ոլորտում որոշիչ դրական տեղաշարժ,

5. կրթական բարեփոխումների շրջանակներում մշակված չէ ձեռք բերված գիտելիքների կիրառման հմտությունների ձևավորման հայեցակարգ (մեթոդաբանություն),

6. կրթական համակարգի առջև ծառայած են մասնագիտական կրթության նպատակայնության մակարդակի բարձրացման և «ուղեղների արտահոսքի» կանխման խնդիրները:

Վերը նշվածի հաշվառմամբ առաջարկում ենք հետևյալ միջոցառումները.

1. երիտասարդների զբաղվածության հայեցակարգի միջգերատեսչական\* մշակում, որը պետք է ներառի անհրաժեշտ մասնագետների պատրաստման, աշխատանքով նրանց ապահովման, առաջխաղացման, մասնագիտական որակների կատարելագործման՝ ՀՀ տնտեսության զարգացող ոլորտների, ինչպես նաև ՀՀ ազգային անվտանգության համար առանցքային ոլորտների գերակայությունների հիման վրա մշակված հստակ ծրագրեր,

2. համապետական կրթական ստանդարտների հստակեցում՝ գործնականի շեշտադրմամբ ժամանակակից շուկայական պահանջներին համապատասխան կադրեր պատրաստելու նպատակով: Ձեռք բերված գիտելիքների կիրառման հմտությունների ձևավորման համակարգի ստեղծում՝ ՀՀ-ում գործող առաջատար կազմակերպությունների հետ կրթական համակարգի սերտ համագործակցության ծրագրի մշակմամբ և ներդրմամբ,

3. երիտասարդների զբաղվածությունը խթանելու նպատակով գործատուների համար սոցիալական հարկային արտոնության սահմանում՝ երիտասարդ կադր աշխատանքի ընդունելու կապակցությամբ, մասնավորապես՝ տնտեսության գերակա ճյուղերում երիտասարդների ներգրավվածության մակարդակը բարձրացնելու նպատակով:

\* Առնվազն պետք է ընդգրկի զբաղվածության, կրթության և երիտասարդության հարցերի ոլորտների պատասխանատու գերատեսչական մարմինները:

ПРОБЛЕМА БЕЗРАБОТИЦЫ СРЕДИ МОЛОДЕЖИ  
И ПРОФЕССИОНАЛЬНОГО ОБРАЗОВАНИЯ  
С ТОЧКИ ЗРЕНИЯ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ РА

*М. А. ПАРВАНЯН, старший лейтенант, соискатель ИНСИ МО РА,  
Начальник финансовой части ИНСИ МО РА*

РЕЗЮМЕ

Одной из качественно новых проблем на пути становления социального государства в РА, преодоление которых требует новых стратегических подходов и институциональных реформ, является проблема безработицы, особенно среди молодежи.

На микро- и макроуровнях рассмотрены проблемы безработицы среди молодежи и недостаточного уровня профессионального образовательного и научного потенциалов в их взаимосвязи, показаны их значимость с точки зрения обеспечения национальной безопасности РА и стабильного развития государства и общества, а также эффективность государственной политики в этих сферах, выявлены основные задачи и представлены предложения по их альтернативным решениям.

THE PROBLEM OF THE UNEMPLOYMENT  
AMONG THE YOUTH AND VOCATIONAL EDUCATION  
IN TERMS OF THE RA NATIONAL SECURITY

*М. А. PARVANYAN, Senior Lieutenant, Graduate Student, INSS, MOD, RA,  
Head of the Financial Department, INSS, MOD, RA*

SUMMARY

The problem of the unemployment, especially among the youth is one of the qualitatively new problems in the process of establishing a social state in the RA. To overcome these problems new strategic approaches and institutional reforms are required.

The problems of the unemployment, especially among the youth, and insufficient level of vocational education and academic potential in their correlation have been touched on at micro- and macro-scales. Their importance in terms of ensuring the RA national security and sustainable development of the state and society, as well as the efficiency of state policy in these spheres have been outlined, key issues have been revealed and proposals on their alternative solutions have been made.

**ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԸՆԴՄԻՋԱԿԱՅՔՆԵՐԻ ՕՊՏԻՄԱԼ  
ԼԱՅՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՄԻ ՄԵԹՈԴԻ ՄԱՍԻՆ**

*Կ. Ռ. ՄՈՒՐԱԴՅԱՆ, գնդապետ, ՀՀ ՁՈՒ-ի Կապի գործերի պետ – ԳՇ Կապի  
և ԱԿՀ վարչության պետ, Ա. Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ, մայոր, ԱԿՀ բաժնի պետ,  
Ա. Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ, փոխգնդապետ, տեխնիկական գիտությունների  
բեկնածու, ԱԿՀ բաժնի ծրագրավորման բաժանմունքի պետ*



Տարբեր մակարդակի հրամանատարական կազմի առջև ծառայող կարևոր խնդիրներից մեկը իրենց մարտական պատրաստության, նախաձեռնողականության և անսպասելի կրիտիկական իրավիճակներում օպերատիվ կերպով ճիշտ որոշումներ ինքնուրույնաբար կայացնելու ունակության պահպանումն է: Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է զինծառայողների ուսուցման և վերահսկողության գործընթացների պլանավորման այնպիսի ռազմավարության մշակում, որը նպատակաուղղված լինի ամբողջ զինվորական ստորաբաժանման արդյունավետ գործառության ապահովմանը:

Դիցուք, կա  $\theta = \{\theta_1, \theta_2, \dots, \theta_m\}$  ռազմական օբյեկտների խումբ, որոնց նկատմամբ իրականացվում է գործառությանին նախանշանակմանը համապատասխանության վերահսկողություն: Օբյեկտների յուրահատկությունն այն է, որ դրանց անխափան և արդյունավետ գործառությունն ապահովվում է օպտիմալ ինքնուրույն որոշումների կայացման միջոցով:

Ընդ որում, դրանց համախումբ աշխատունակությունը բնորոշում է ամբողջ համակարգի  $F$  մարտական պատրաստությունը: Վերահսկողության հաճախականության մեծացումը բացասաբար է ազդում կառավարման արդյունավետության վրա, քանի որ նվազեցնում է հրամանատարական կազմի ինքնուրույնության մակարդակը, ուստի և իջեցնում է մարտական պատրաստության մա-

կարդակը և նվազեցնում անապասելի կրիտիկական իրավիճակներում օպերատիվ կերպով արդյունավետ որոշումներ կայացնելու ունակությունը: Ընդ որում, վերահսկողության հնարավորությունները ընդհանուր առմամբ սահմանափակվում են ինչպես վերահսկող անձնակազմի  $K$  թվաքանակով, այնպես էլ վերահսկողության  $V$  համախումբ արժեքով:

Յուրաքանչյուր  $\theta_i$  օբյեկտին համապատասխանեցնենք չվերահսկվող գործառության որոշակի  $\tau^{(i,r)}$  ընդմիջակայք, որոնցից կազմվում է  $T^{(r)}$  ժամանակահատվածը: Եթե հաշվի առնենք, որ դրանց տևողությունը նույնն է, ապա կունենանք՝  $b_i \tau^{(i,r)} \leq T^{(r)}$ , որտեղ  $b_i$ -ն  $\theta_i$  օբյեկտի համար  $T^{(r)}$  ժամանակահատվածը կազմող ընդմիջակայքների առավելագույն ամբողջական թիվն է, այսինքն՝  $T^{(r)} - b_i \tau^{(i,r)} \leq \tau^{(i,r)}$ :  $T^{(r)}$  ժամանակահատվածը  $\theta_i = \{\theta_1, \theta_2, \dots, \theta_m\}$  բազմություն կազմող բոլոր ռազմական օբյեկտների վերահսկման արձանագրվող ժամանակահատվածի վերին սահմանն է և դրա յուրաքանչյուր բաղադրատարրի համար կարող է չհամընկնել: Այս պայմանը պարտադիր չէ դիտվող խնդրի դեպքում: Ուստի որպես կառավարման համակարգի  $j$ -րդ խափանում՝  $\eta_j^{(i,s,r)}$  կգրանցենք այն պատահույթը, որը տեղի է ունեցել  $T^{(r)}$  ժամանակահատվածի հերթական  $j$ -րդ  $\tau_s^{(i,r)}$  միջակայքում և ուղեկցվել է կառավարման  $\theta_j$  օբյեկտի ոչ օպտիմալ կամ անհաջող գործողություններով:

Ռազմական օբյեկտի անխափան գործառության վերաբերյալ պահանջները ներկայացնենք բաշխման հստակ կերպով որոշված  $f(x)$  ֆունկցիայի տեսքով, որն արտացոլում է ընդունված ռազմական նորմատիվները:

Խնդիրը հաջորդ  $T^{(r)}$  վերահսկողական ժամանակահատվածի համար ռազմական օբյեկտների խմբի նկատմամբ վերահսկման միջոցառումների կազմակերպման ռազմավարության որոշումն է, այն է՝ նախորդ  $T^{(r-1)} = \{\tau_1^{(i,r-1)}, \tau_2^{(i,r-1)}, \dots, \tau_s^{(i,r-1)}, \tau_{b_i}^{(i,r-1)}\}$  ժամանակահատվածում ելակետային տվյալների հիման վրա յուրաքանչյուր  $\theta_i$  օբյեկտի համար օպտիմալ ընդմիջակայքների հաշվարկումը: Ընդսմին պետք է ապահովված լինի  $\max_{(i)} \sum F(\psi, \vartheta(T^{(r)}))$  պայմանը, որտեղ  $\sum \vartheta(T^{(r)}) < V$ -ն,  $\psi < K$ -ն՝  $V$  վերահսկման արժողության վերահսկող անձնակազմի  $K$  թվաքանակի առավելագույն թույլատրելի արժեքների սահմանափակումներ են:

Բաշխման ֆունկցիայի տեսքի մասին նախափորձական տեղեկություններ չլինելու դեպքում սովորաբար կիրառում են կետային գնահատականների որոշման մեթոդը, որը հիմնված է հիստագրերի կառուցման վրա: Այդ նպատակով կիրառվում է փոփոխականի  $z$  արքը, որը իրացումների կարգավորված ենթաբազմություն է: Այն բաժանվում է  $K$  ընդմիջակայքների և դրանցից յուրաքանչյուրի համար հաշվվում է

$$f_j(x) = m_j / (n_i \Delta_j) \tag{1.1}$$

արժեքը, որտեղ  $n_i$ -ն  $\theta_i$  օբյեկտի ընտրանքի տարրերի թիվն է,  $m_j$ -ն ( $j = 1, \dots, k$ ) փոփոխականի  $z$  արքի այն անդամների թիվն է, որոնք հայտնվել են  $j$  միջակայքում,  $\Delta_j$ -ն ընդմիջակայքի լայնությունն է:

$f_j(x)$  տեղաբաշխման ֆունկցիան  $\Delta_j$  ընդմիջակայքի լայնության յուրաքանչ-յուր արժեքին համապատասխանեցնում է այն  $\rho_j$  հավանականությունը, որ մինչև խափանումը աշխատատևության արժեքը կգտնվի  $j$ -րդ միջակայքի սահմաններում:

Գրաֆիկորեն հիստագրը պատկերվում է  $\Delta_j$  լայնությամբ և  $f_j(x)$  բարձրությամբ ուղղանկյունների շարքի տեսքով: Հիստագրի ձևը կախված է տրոհման միջակայքների թվից ու մեծությունից: Չկա տրոհումը ճիշտ կատարելու կանոն: Հիստագրի կառուցումը դեռևս կռահողականության առարկա է: Ընդ որում, հիստագրերի տարբերակներից լավագույն է համարվում այն հիստագրերը, որն ունի ավելի փոքր թվով աճումներ: Աճման հատկանիշ է դիտվում (1.1) արտահայտությամբ որոշվող ուղղանկյան բարձրության աճման նշանի փոփոխությունը: Աճման չափանիշն իրացվում է հետևյալ եղանակով: Հիստագրի յուրաքանչյուր տարբերակի համար աճումների  $h$  միջին կշռյալ թիվը որոշվում է ըստ

$$h_i^{(r)} = (1/n_i) \sum_{j=2}^{k-1} (m_j + m_{j+1}) \xi_j \quad (1.2)$$

կանոնի, որտեղ  $k$ -ն տվյալ տարբերակի համար տրոհման միջակայքների թիվն է,  $m_j$ -ն,  $m_{j+1}$ -ն ընտրանքի տարրերի արժեքներն են  $j$ -րդ և  $(j+1)$ -րդ միջակայքներում,

$$\xi_j = \begin{cases} 0, & j\text{-ից } (j+1)\text{-ին անցնելիս աճում տեղի չունենալու դեպքում,} \\ 1, & \text{աճման առկայության դեպքում:} \end{cases}$$

Ջննարկվող խնդրի համար առաջարկվում է  $\tau_j^{(i,r)}$  չվերահսկվող գործառության միջակայքը դիտել որպես  $\Delta_j$  ընդմիջակայքի լայնություն, որը ամբողջ  $T^{(r)}$  ժամանակահատվածում պետք է լինի միևնույնը: Այդ դեպքում կառավարման  $\theta_i$  օբյեկտի խափանումների  $\eta_j^{(i,s,r)}$  թվին համապատասխանեցնենք  $\Delta_j$  միջակայքից փոփոխակալին շարքի ընտրանքի  $m_j$ -րդ տարրը:  $n_i^{(r)}$  տարրերի ընդհանուր թիվը փոփոխակալին շարքի լայնությամբ է և հավասար է  $T^{(r)}$  ժամանակահատվածում  $\theta_i$  օբյեկտի խափանումների քանակին: Եթե  $\Delta_j$  միջակայքում տեղի է ունենում ուղղանկյան բարձրության աճման  $z_i$ -ի նշանի փոփոխություն, ապա դա նշանակում է, որ վերահսկման ընդմիջակայքը ևս պետք է փոփոխվի: Ընդ որում, ընդմիջակայքի մեծացումը կամ փոքրացումը կախված է աճման նշանից:

Նշանակենք  $Y = \{y_i^{(j)}\}$ ,  $i=1, 2, \dots, d$ , որտեղ  $y_i^{(j)} = x_j$ -ը կառավարման այն օբյեկտների բազմությունն է, որոնց համար վերահսկման  $T^{(r-1)}$  ժամանակահատվածում գրանցվել է աճման նշանի փոփոխություն: Յուրաքանչյուր  $y_i^{(j)}$  համար հաշվարկենք աճումների  $h_i$  միջին կշռյալ թվի համապատասխան արժեքը (1.2):


$\theta_i$  որոշ օբյեկտի համար  $z_i$ -ի նշանի փոփոխումը կարող է հանգեցնել վերահսկման հաջորդ  $T^{(r)}$  ժամանակահատվածում նրա  $\Delta_j$  ընդմիջակայքի լայնության մեծացմանը և ազդել  $\theta_i(\tau)$ -ի նվազման վրա, և հակառակը:

Y բազմությունը կանոնավորենք ըստ աճումների  $h_i$  միջին կշռյալ թվի արժեքների նվազման և կազմենք  $C = \{c_i^{(j)}\}$ ,  $i=1, 2, \dots, m$  շարանը, որի համար ճիշտ է  $\forall_i h_i \in c_i^{(j)} > h_{i+1}$  պայմանը: C շարանի յուրաքանչյուր տարրի համար հաշ-

վարկենք տեսական և փորձարարական բաշխումների տարամիտման չափը՝

$$H_i = \sum_{(j)} ((\mu_j^{(i,s,r)} - n_i^{(r)} p_i)^2 / n_i^{(r)} p_i),$$

որտեղ՝  $p_i$ -ն այն բանի հավանականությունն է, որ մինչև խափանումը աշխատատևության արժեքը բաշխման  $f_i(x)$  ֆունկցիայի դեպքում կգտնվի  $i$ -րդ միջակայքի սահմաններում,  $\mu_j^{(i,s,r)}$ -ն՝  $\theta_i$  օբյեկտի այն խափանումների թիվն է, որոնք գտնվում են  $j$ -րդ միջակայքում:



Վերահսկման ընդմիջակայքի լայնության հաշվարկման ալգորիթմի բլոկ-սխեմա

$H_i$ -ի արժեքները համեմատենք ազատության  $l$  աստիճաններ ունեցող  $\gamma=1-\varepsilon$  մակարդակով բաշխման  $\chi^2$  քվանտիլի հետ, որտեղ  $\varepsilon$ -ը՝ նշանակալիության մակարդակն է, որով պայմանավորվում է տարամիտման չափի առավելագույն արժեքը: Եթե  $H_i > \varepsilon$ , ապա  $C$  շարանի յուրաքանչյուր հաջորդ տարրի համար  $\Delta_i$  ընդմիջակայքի լայնությունը մեծացնենք կամ նվազեցնենք ըստ  $z_i$ -ի աճման նշանի այնքան ժամանակ, քանի դեռ պահպանվում է ծախսերի արժողության սահմանափակումների պայմանը՝  $\sum G(\Delta_i) \leq V$ : Հաշվարկվող  $\delta_i$  մեծությունը, որով յուրաքանչյուր  $\theta_i$  օբյեկտի համար  $T^{(i)}$  հաջորդ վերահսկման  $T^{(r)}$  ժամանակահատվածում նվազում կամ աճում է  $\Delta_i$  ընդմիջակայքի լայնությունը, համեմատական է

տարամիտման  $\rho_i$  մեծությանը, այսինքն՝  $\delta_i = f'(\rho_i)$ :  $f'$  գծային ֆունկցիան ընտրվում է ըստ վերահսկման  $T^{(r)}$  ժամանակահատվածն ու տևողությունը և ընտրանքների  $n_{i/h}$  միջին ծավալը հաշվի առնող պայմանների:

## ВОЕННАЯ ИНФОРМАТИКА

### ОБ ОДНОМ МЕТОДЕ ОПРЕДЕЛЕНИЯ ОПТИМАЛЬНОЙ ШИРИНЫ ИНТЕРВАЛОВ КОНТРОЛИРОВАНИЯ

*К. Р. МУРАДЯН, полковник, начальник войск связи ВС РА – начальник Управления связи и АСУ ГШ, А. Г. ГЕВОРКЯН, майор, начальник Отдела АСУ, А. А. МУРАДЯН, подполковник, кандидат технических наук, начальник Отделения программирования Отдела АСУ*

#### РЕЗЮМЕ

С целью поддержания и повышения боеготовности, инициативности, самостоятельности и т. д. военнослужащих необходима разработка стратегии планирования процессов их контроля и обучения. Решение данной задачи предлагается посредством расчета оптимальных интервалов проведения контрольных испытаний на рассматриваемый испытательный период на основании анализа полученных данных предыдущего периода. В основе прилагаемого алгоритма лежит модификация метода определения точечных оценок при построении гистограмм.

## MILITARY INFORMATION SCIENCE

### ON A METHOD OF DETERMINING THE OPTIMAL WIDTH OF MONITORING INTERVALS

*K. R. MURADIAN, Colonel, Head of the Communications Troops of the RA Armed Forces – Head of the Directorate of the Communications and ACS of the Main Staff, A. G. GEVORKYAN, Major, Head of the ACS Department, A. A. MURADIAN, Lieutenant-Colonel, Candidate of Technical Sciences, Head of the Branch of Programming of the ACS Department*

#### SUMMARY

The elaboration of the strategy of planning the processes of servicemen's control and training is needed for maintaining and improving their combat readiness, initiative, independence, etc. The solution to this problem is proposed through calculation of optimal intervals of conducting check test for the trial period under review. It is done on the basis of the data analysis of the prior period. The modification of the method of determining point estimate while plotting histograms underlies the applicable algorithm.

**ՆԵՅՐՈՑԻՐԿՈՒԼՅԱՏՈՐ ԱՍԹԵՆԻԱՅԻ ՈՐՈՇ ԱՌՈՒՄՆԵՐ**

- Ա. Մ. ՓԱՐՄԱԴԱՆՅԱՆ, ք/ծ գնդապետ, ՀՀ ՁՈՒ-ի ռազմաբժշկական վարչության պետ, բժշկական գիտությունների դոկտոր,*  
*Ս. Գ. ԳԱԼՍՏՅԱՆ, ԵՊԲՀ ՌԲՖ պետի պաշտոնի ժամանակավոր կատարող, ք/ծ գնդապետ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,*  
*Մ. Վ. ՍԱՐԳՍՅԱՆ, ք/ծ կապիտան, ՀՀ ՊՆ ԿԿԶՀ թերապևտիկ բաժանմունքի պետ, բժշկական գիտությունների թեկնածու, դոցենտ, Մ. Ս. ՍԵԼԻԲՅԱՆ, ք/ծ կապիտան, ՀՀ ՊՆ ԵԿՀ ախտորոշիչ բաժանմունքի բժիշկ*



Նեյրոցիրկուլյատոր ասթենիան (ՆՅԱ, նախկինում՝ դիստոնիա) կառուցվածքաֆունկցիոնալ բնույթի հիվանդություն է, որը բնորոշվում է սրտանոթային, շնչառական և վեգետատիվ տարբեր խանգարումներով, ընդհանուր թուլությամբ, ստրեսային իրավիճակների և ֆիզիկական ծանրաբեռնվածությունների նկատմամբ վատ դիմացկունությամբ: Հիվանդության ընթացքն ալիքաձև է,

ելքը՝ դրական, կարողմեզալիա և սրտային անբավարարություն չեն զարգանում:

Թեև հիվանդությունը հիմնականում արտահայտվում է ֆունկցիոնալ խանգարումներով, սակայն ունի մորֆոլոգիական սուբստրատ՝ ենթաբջջային կառույցների ախտահարման տեսքով: Դրանք հայտնաբերվում են էլեկտրոնային մանրադիտակային հետազոտությամբ:

ՆՅԱ-ն ինքնուրույն հիվանդաբանական միավոր է, սակայն մի շարք դեպքերում այն պետք է դիտարկվի որպես համախտանիշ, եթե դրա ախտանշանները հանդիպում են որևէ հիվանդության ժամանակ (օրինակ՝ զարկերակային հիպերթենզիայի, միկրոալիքների ազդեցությամբ առաջացած խանգարումների, այլ օրգան-համակարգերի հիվանդությունների ժամանակ):

ՆՅԱ-ն բավականին տարածված հիվանդություն է (սրտանոթային հիվանդությունների ընդհանուր կառուցվածքում կազմում է 32–50 %), հանդիպում է տարբեր տարիքային խմբերում, հիմնականում՝ երիտասարդների շրջանում:

Ներկայումս ՆՅԱ-ն, ի տարբերություն երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակներից, ժամկետային զինծառայողների սրտանոթային համակարգի հիվանդությունների հիմնական հիվանդաբանական ձևն է: Այն կազմում է այս դասի հիվանդությունների 57,7 %-ը, ախտորոշվել է հիմնականում ամռանը, ընդ որում, չորս անգամ ավելի հաճախ գրանցվել է առաջին տարվա զինծառայողների շրջանում: Ըստ հաճախականության՝ ախտորոշվել են սրտային (66 %), գերճնշումային (24 %) և խառը (10 %) ձևերը: Պետք է նշել, որ սրտային ձևի ՆՅԱ-ով յուրաքանչյուր

չորրորդ հիվանդ ունենում է երկփեղկ (միտրալ) փականի արտանկում (պրոլապս):

**Պատճառագիտությունը:** Հիվանդության զարգացման պատճառները դեռևս հստակ որոշված չեն: ՆՅԱ-ն բազմապատճառական հիվանդություն է: Ուստի կարելի է խոսել հիվանդության միայն հավանական պատճառի մասին:

Տարբերում են նախատրամադրող և առաջացնող գործոններ, որոնց սահմանումը բավականին բարդ է և կարող է լինել միայն պայմանական:

Նախատրամադրող գործոններից են՝ օրգանիզմի ժառանգական-կազմվածքային առանձնահատկությունները, անձի առանձնահատկությունները, անբարենպաստ օդոցիալ-տնտեսական պայմանները, օրգանիզմի հորմոնալ վերափոխման շրջանները:

Առաջացնող գործոնները լինում են՝ *հոգեծին* (սուր և քրոնիկական նյարդահուզական սարեսներ, յաթրոզենիա), *ֆիզիկական* և *քիմիական* (գերհոգնածություն, արևահարում, իոնացնող ճառագայթում, թրթռումներ, հիպոդինամիա, քրոնիկական թունավորումներ, ակոհոլի չարաշահում), *դիսհորմոնալ* (հորմոնալ փոփոխությունների շրջաններ, հղիություն, աբորտ), *վարակային* (քրոնիկական նշկաբորբ (տոնզիլիտ), վերին շնչուղիների քրոնիկական վարակներ, սուր կամ կրկնվող շնչառական հիվանդություններ):

**Ախտաձագումը:** Արտաքին և ներքին տարբեր ազդեցությունները հանգեցնում են սրտանոթային համակարգի բարդ նեյրոհորմոնալ-նյութափոխանակային տեղաշարժերի, մասնավորապես՝ հիպոթալամիկ կառույցների մակարդակով:

Նման խանգարումներն առաջին հերթին արտահայտվում են սիմպաթոադրենալինային ու խոլինէրգիկ համակարգերի ֆունկցիաների խանգարումներով և համապատասխան ծայրամասային ընկալիչների զգայունության փոփոխություններով:

Հոմեոստազի խանգարումներն արտահայտվում են նաև հիստամին-սերոտոնինային, կալիլրեինկինինային համակարգերի, ջրաաղային փոխանակության, թթվահիմնային հաշվեկշռի, ածխաջրատային փոխանակության խանգարումներով: Կտրուկ խանգարվում է ֆիզիկական ծանրաբեռնվածության թթվածնային ապահովումը: Վերջինս հանգեցնում է հյուսվածքներում թթվածնի մասնակային (պարցիալ) ճնշման իջեցման, ինչի հետևանքով օրգանիզմի էներգետիկ ապահովումը կատարվում է հիմնականում ի հաշիվ անօդակյաց գլիկոլիզի: Ֆիզիկական ծանրաբեռնվածության դեպքում արյան մեջ բարձրանում է կաթնաթթվի մակարդակը, արագ զարգանում են թթվազարային (ացիդոտիկ) տեղաշարժերը:

Հյուսվածքներում, հատկապես՝ սրտամկանում, ակտիվանում են այսպես կոչված հյուսվածքային հորմոնները (հիստամին, սերոտոնին և այլն), ինչը հանգեցնում է նյութափոխանակության խանգարման և դիստրոֆիայի (սնուցախանգարում) զարգացման: Խանգարվում է միկրոշրջանառությունը:

Սրտանոթային համակարգի նեյրոհորմոնալ-նյութափոխանակային կարգավորման խանգարումներն ուղեկցվում են սովորական և, առավել ևս, ոչ ուժեղ գրգռիչների ոչ համարժեք հակազդմամբ: Դա արտահայտվում է հաճախասրտությամբ, անոթների տոնուսի տատանմամբ, սրտի թուլեցման ծավալի ծանրաբեռնման ոչ համարժեքությամբ, անոթների տեղային կծկանքներով:

Հանգստի պայմաններում վերը նշվածը կարող է կլիմիկորեն չարտահայտվել, սակայն տարբեր ծանրաբեռնումների հետևանքով (ֆիզիկական, հիպերվենտիլյացիա, օրթոստատիկ դիրք, սիմպաթոմիմետիկ միջոցների ներարկում) հստակ կերպով արտացոլվում է սրտանոթային համակարգի գործունեության «դեֆեկտը»:

**Գրասկարգումը:** Ներկայումս չկա համընդհանուր ճանաչում ստացած դասակարգում: ՆՅԱ-ի պատճառագիտական ձևերը, կլիմիկական դրսևորումների առանձնահատկությունները և հիվանդության ծանրության աստիճանը ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

ՆՅԱ-Ի ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՁԵՎԵՐ

	Սրտային	Գերճնշումային	Թերճնշումային
	Անոթազարկ 1 րոպեում	Չարկերակային ճնշում (մմ սնդ. սյան)	
Թեքն	80-105՝ առանց սրտի օրգանական ախտահարման նշանների	140/90	100/60՝ առանց վեգետատիվ-անոթային դրսևորումների
Չափավոր	սրտի ռիթմի ոչ մշտական խանգարումներ՝ առանց վեգետատիվ-անոթային դրսևորումների	բարձր է 140/90-ից, անկայուն է	100/60՝ վեգետատիվ-անոթային ոչ հաճախակի բռնկումներով (պարոքսիզմներով)
Չզգալի	սրտի ռիթմի կայուն խանգարումներ՝ կայուն կարդիալգիայով վեգետատիվ-անոթային դրսևորումների ֆոնի վրա	բարձր է 140/90-ից, ուղեկցվում է վեգետատիվ-անոթային դրսևորումներով	100/60՝ հաճախակի ուշագնացություններով

ՆՅԱ-ն ունի նաև հատուկ ձև, որն ընթանում է սուբֆերրիլիտետով (37-37,7°C): Նման դեպքերում սուբֆերրիլիտետը տևում է 1 ամիս և ավելի, բացառվում են մարմնական (սոմատիկ) և վարակիչ հիվանդությունները:

**Կլիմիկական պատկերը:** Հիվանդության կլիմիկական պատկերը բավական բազմաձև (պոլիմորֆ) է, ախտանշանների արտահայտվածությունը՝ տատանողական: Մյուս կողմից՝ ՆՅԱ-ի ախտանշանները հիշեցնում են սրտանոթային համակարգի այլ հիվանդություններ, ինչը մի շարք դեպքերում դժվարացնում է դրա ախտորոշումը:

Չնման ժամանակ հայտնաբերվում են ախտորոշման համար առավել կարևոր ախտանշանները: Հիվանդները գանգատվում են սրտի շրջանում տարաբնույթ (մրմռացող, ծակող, այրող, ճնշող, տարբեր տևողությամբ (ակնթարթայինից մինչև ժամեր և օրեր)) ցավերից, որոնք կարող են ճառագայթվել դեպի ձախ ձեռք և թիակ: Մովորաբար գերակշռում է հարսրտային կամ գագաթային տեղակայումը, հաճախ դիտվում է դրանց «միգրացիա»: Ավելի հաճախ ցավերի առաջացումը կապված է գերհոգնածության, հուզմունքի, եղանակի փոփոխության, ալկոհոլի ընդունման հետ, կանայք նման ցավեր երբեմն ունենում են նախադաշտանային շրջանում:

Մի շարք հիվանդներ ցավերի առաջացումը կապում են ձախ ձեռքի ֆիզիկական ծանրաբեռնվածության հետ: Ցավերը կարող են ի հայտ գալ գիշերը՝ մղձավանջային

երագների, ինչպես նաև վեգետատիվ պարոքսիզմների ժամանակ, որոնք ուղեկցվում են սրտխփոցով և զարկերակային ճնշման բարձրացմամբ:

Ցավային զգացողությունը կապված է ֆիզիկական ծանրաբեռնվածության հետ: Սակայն, ի տարբերություն կրծքահեղձուկից (ստենոկարդիա), ցավերն առաջանում են ոչ թե ֆիզիկական լարվածության կամ երկարատև քայլքի ընթացքում, այլ՝ հետո:

ՆՅԱ-ի ժամանակ սրտի շրջանի ցավերը, որպես կանոն, կարող են ուղեկցվել անհանգիստ վիճակով, տրամադրության անկմամբ, ընդհանուր թուլությամբ, հնարավոր են նուպայաձև և ուժեղ ցավեր՝ վախի զգացումով և վեգետատիվ խանգարումներով (օդի անբավարարության զգացում, սրտխփոց, քրտնոտություն, ներքին դող):

Թույլ և չափավոր ցավի ժամանակ պետք չէ կիրառել դեղամիջոցներ: Ուժեղ ցավի ժամանակ հիվանդների մեծ մասն ընդունում է կատվախոտ կամ վալոկարդինի թուրմ: Նիտրոգլիցերինի ընդունումը ցավը չի վերացնում:

Հիվանդների մի մասը զանգատվում է մակերեսային շնչառության հաճախացումից (հիվանդները ոչ ճիշտ դա անվանում են հևոց), դժվարացած ներշնչման զգացումից, օդը պարբերաբար խորը ներշնչելու ցանկությունից:

Շնչառական խանգարումների մաքուր ձևն ուղեկցվում է կոկորդում քերման կամ ճնշման զգացողությամբ, հիվանդը դժվարանում է մնալ տոթ տեղերում, պատուհանը մշտապես բացելու կամ փողոց դուրս գալու կարիք է զգում: Շնչառական խանգարումները լինում են ձգձգվող բնույթի, հաճախ ուղեկցվում են գլխապտույտով, սրտխփոցով, անհանգիստ վիճակով, խեղդվելու և մահվան վախով: Բժիշկը ոչ միշտ է ճիշտ մեկնաբանում այս խանգարումները՝ երբեմն դրանք գնահատելով որպես սրտային կամ թոքային անբավարարություն, անգամ՝ բրոնխային շնչահեղձուկ (ասթմա):

Հիվանդները հաճախ զանգատվում են սրտխփոցից, սրտի ուժեղացած կծկումներից, որոնք երբեմն ուղեկցվում են պարանոցի, գլխի անոթների անոթազարկումով (պուլսացիա) և առաջանում են ֆիզիկական կամ հուզական ծանրաբեռնվածության պահերին, երբեմն՝ հանգստի ժամանակ, գիշերը: Սրտխփոցների պատճառ կարող են դառնալ հուզմունքը, ֆիզիկական ճիգը, սննդի ընդունումը, հորիզոնական դիրքում երկար մնալը, հիպերվենտիլյացիան և այլն:

Դիտվում են ընդհանուր թուլություն, մշտական հոգնածություն, տրամադրության անկում, աշխատունակության նվազում:

Ծայրամասային անոթների ֆունկցիաների խանգարումներն արտահայտվում են գլխացավով, աչքերի առաջ «կետերի թարթումով», գլխապտույտով, վերջույթների սառչելու զգացողությամբ, զարկերակային ճնշման տատանումներով:

ՆՅԱ-ով հիվանդները վատ են տանում շրջակա միջավայրի ջերմաստիճանի տատանումները: Դիտվում է մի քանի օրից մինչև երկար ամիսներ տևող սուբֆերիլիտետ: Սովորաբար դա հաջորդում է որևէ վարակի, առավել հաճախ՝ սուր շնչառական հիվանդության կամ գրիպի, և համընկնում է հիմնական զանգատների սրման հետ: Մարմնի ջերմությունը չի գերազանցում 37,0-37,7°C, լաբորատոր ցուցանիշները չեն փոփոխվում:

Վեգետատիվ-անոթային կրիզները կարող են արտահայտվել դողով, սարսուռով,

գլխապտույտով, քրտնոտությամբ, օդի անբավարարության զգացումով, անհիմն վախով: Դրանք տևում են 20-30 րոպեից մինչև 2-3 ժամ և հաճախ ավարտվում են առատ միզարձակությամբ, երբեմն՝ փորլուծությամբ, վերանում են ինքնաբերաբար կամ դեղորայք (սովորաբար՝ սեդատիվ միջոցներ) ընդունելուց հետո: Կրիզից հետո մնում է թուլության զգացում, անհանգստություն, ցավ սրտի շրջանում: Կրիզները կարող են կրկնվել շաբաթը 1-3-ից մինչև ամիսը 1-2 անգամ, երբեմն՝ ավելի հազվադեպ:

Հիվանդների մտավոր աշխատունակությունն ընկնում է, շուտ են հոգնում: Նրանց մի մասը գանգատվում է մարտողական խանգարման (դիսպեպտիկ) երևույթներից՝ փսխում (պայմանավորված է ստամոքսի մոտոր-էվակուատոր ֆունկցիայի խանգարումով կամ լինում է հիստերիկ ծագման), գխտոց, գկրտոց: Որոշ դեպքերում զարգանում է անորեքսիա, քաշի կորուստ: Կարող են լինել նաև որովայնի՝ ըստ տեղի և արտահայտվածության տարբեր ցավեր:

ՆՅԱ-ի սկիզբը երբեմն լինում է բուռն, բազմաթիվ ախտանշաններով, ավելի հաճախ՝ դանդաղ, աստիճանական զարգացումով:

Հիվանդության սկիզբը պայմանավորված է խթանող գործոնով, ինչպես նաև առաջատար կլինիկական համախտանիշով: Օրինակ՝ գերհոգնածության և հոգեկան քրոնիկական ստրեսի դեպքում հիվանդությունն սկսվում է աստիճանաբար, իսկ հոգեկան ստրեսի ժամանակ հնարավոր է սուր սկիզբ:

Մի շարք դեպքերում հիվանդները նշում են, որ նախկինում իրենց տրվել են տարբեր ախտորոշումներ. երիտասարդ տարիքում հիվանդության սկիզբը դիտվել է որպես «նւնոկարդիտի» կամ «սրտի արատի» արտահայտություն, ավելի ուշ ախտորոշվել է որպես «վարակային-ալերգիկ միոկարդիտ», իսկ հետագայում՝ «սրտի իշեմիկ հիվանդություն», անգամ՝ «սրտամկանի ինֆարկտ», «հիպերտոնիկ հիվանդություն»: Բոլոր դեպքերում հարցման միջոցով պարզվում է, որ հիվանդությունն ունի բավականին բարորակ ընթացք՝ հիվանդության ախտանիշների պարբերական թուլացումներով և արացումներով: Ընդ որում, հիվանդության ընթացքում մի դեպքում կարող են գերակշռել ցավերը սրտի շրջանում կամ շնչառական խանգարումները, այլ դեպքերում՝ ասթենոնևրոտիկ համախտանիշը կամ վեգետատիվ կրիզները:

ՆՅԱ-ով հիվանդների արտաքին տեսքը խիստ տարբեր է. ոմանք հիշեցնում են թիրեոտոքսիկոզով տառապողների (փայլուն աչքեր, անհանգստություն, մատների դող), մյուսները լինում են ալարկոտ, ոչ շարժուն: Հաճախ նկատվում է ձեռքերի ափերի, ենթամկանային ծալքերի քրտնոտություն, դեմքի մաշկի «բծավոր» գերարյունություն (հիպերեմիա), կրծքավանդակի վերին կեսի արտահայտված խառը դերմոգրաֆիզմ: Վերջույթները սառն են, երբեմն՝ գունատ, կապտավուն: Շնչառությունը հաճախ մակերեսային է, հիվանդները գերազանցապես շնչում են բերանով, ինչի հետևանքով չորանում է նրանց վերին շնչուղիների լորձաթաղանթը: Մեծ մասը չի կարող կատարել խորը արտաշնչում:

Սրտի շրջանի և խոշոր անոթների գնմման ժամանակ հայտնաբերվում է քնային զարկերակների բաբախումների ուժգնացում՝ որպես արյան շրջանառության հիպերկինետիկ վիճակի արտահայտություն: Երրորդ-չորրորդ միջկողում, միջին անրակային

գծով և հարկըծոսկրային գծից ձախ միջկողային մկանները լինում են ցավոտ (50 % դեպքերում):

ՆՅԱ-ով հիվանդների սրտի չափերը փոփոխված չեն: Աուսկուլտացիայի ժամանակ կրծոսկրի ձախ եզրի մոտ և դրա հիմքում՝ սիստոլայում, հաճախ լսվում է հավելյալ տոն, սիստոլիկ աղմուկ (մոտավորապես 70 % դեպքերում): Այն սովորաբար լինում է թույլ կամ չափավոր, առավելագույնս հնչում է երրորդ-չորրորդ միջկողում, կրծոսկրի ձախ եզրին, հաճախ տարածվում է դեպի պարանոցի անոթներ: Աղմուկի հիմնական պատճառը արյան շրջանառության հիպերկինետիկ վիճակն է և արյունահոսքի արագացումը:

Հիվանդների անոթագարկը անկայուն է. հուզական վիճակը և աննշան ֆիզիկական ծանրաբեռնվածությունը, օրթոստատիկ վիճակներն ու արագ շնչելը առաջացնում են հաճախասրտություն: Որոշ հիվանդների անոթագարկի տարբերությունը հորիզոնական և ուղղահայաց դիրքում կարող է կազմել ելակետայինի 100-200 %-ը:

Արյան ճնշումը հաճախ առաջին չափման ժամանակ լինում է նորմայից բարձր, սակայն 2-3 րոպե անց այն վերադառնում է բնականոն սահմաններ: Հաճախ արյան ճնշումը աջ և ձախ ձեռքերին լինում է ոչ համաչափ:

Լաբորատոր և ռենտգեն հետազոտություններով օրգանական առանձնահատուկ փոփոխություններ սրտանոթային համակարգի գործունեությունում չեն հայտնաբերվում:

Բացառիկ կարևոր նշանակություն է տրվում էլեկտրասրտագրությանը և էխոսրտագրությանը: Ընդ որում, հայտնաբերված փոփոխությունները, մասնավորապես՝ սրտի ռիթմի և հաղորդականության, ինչպես նաև փականների արտանկումները հիվանդության տարբերակիչ ախտորոշման հարցում ունեն սկզբունքային դեր:

**Ընթացքը:** ՆՅԱ-ի ընթացքի ծանրությունը որոշվում է տարբեր ցուցանիշների համալիրով՝ հաճախասրտության արտահայտվածությամբ, վեգետատիվ-անոթային կրիզների հաճախականությամբ, ցավային համախտանիշով, ֆիզիկական ծանրաբեռնվածության նկատմամբ դիմացկունությամբ:

**Թեքի ընթացքի** դեպքում աշխատունակությունը պահպանվում է, ֆիզիկական ծանրաբեռնվածության նկատմամբ դիմացկունությունը աննշան նվազում է, ցավային համախտանիշն արտահայտված է չափավոր (ի հայտ է գալիս միայն զգալի հոգեհուզական և ֆիզիկական ծանրաբեռնվածություններից հետո), վեգետատիվ-անոթային պարոքսիզմներ չեն դիտվում (ոչ համարժեք հաճախասրտություն առաջանում է ի պատասխան հուզական և ֆիզիկական ծանրաբեռնվածության), շնչառության խանգարումները թույլ են արտահայտված կամ չկան, էՄԳ-ն փոփոխված է աննշան, դեղորայքային բուժման անհրաժեշտություն սովորաբար չի լինում:

**Միջին ընթացքի** դեպքում աշխատունակությունը նվազում է կամ ժամանակավորապես սպառվում, առկա են բազմաթիվ ախտանշաններ, ցավային համախտանիշը սովորաբար կայուն է, հնարավոր են վեգետատիվ-անոթային պարոքսիզմներ, հաճախասրտությունն առաջանում է ինքնաբերաբար, 1 րոպեում հասնում է 100–120-ի, ֆիզիկական ծանրաբեռնվածության նկատմամբ դիմացկու-

նությունը նվազում է ավելի քան 50 %-ով: Անհրաժեշտ է դեղորայքային բուժում:

**Ծանր ընթացքը** բնորոշվում է հիվանդության դրսևորումների կայունությամբ. արտահայտված են ցավային համախտանիշը, շնչառական խանգարումները, հաճախակի են վեգետատիվ-անոթային կրիզները, ֆիզիկական ծանրաբեռնվածության նկատմամբ դիմացկունությունը խիստ նվազում է, աշխատունակությունն զգալի չափով ընկնում է:

**Ախտորոշումը:** Հիվանդության ախտորոշումը հիմնվում է՝ 1) տվյալ հիվանդության ժամանակ առավել հաճախ հանդիպող ախտանշանների հայտնաբերման, 2) նմանատիպ պատկեր ունեցող այլ հիվանդությունների բացառման վրա:

ՆՅԱ-ն ախտորոշելիս հաշվի են առնվում՝

- հիվանդի գանգատների, մասնավորապես՝ սրտանոթային խանգարումներին վերաբերող գանգատների, բազմազանությունը,
- հիվանդության զարգացման պատմությունը, որը ցույց է տալիս հիվանդության այլքաձև ընթացքը, սրացման ժամանակ ախտանշանների ուժեղացումը,
- ընթացքի բարորակությունը (սրտային անբավարարություն և սրտի լայնացում չեն զարգանում),
- մտացրման (դիսոցիացման) առկայությունը՝ հիվանդն ունի բազմաթիվ գանգատներ, երբ օբյեկտիվ, լաբորատոր և գործիքային հետազոտություններով հայտնաբերված փոփոխությունները լինում են ոչ տիպիկ:

ՆՅԱ-ն բացառվում է, եթե հայտնաբերվում են՝

- սրտի չափերի մեծացում,
- դիաստոլիկ աղմուկներ,
- խոշոր օջախային ԷՍԳ փոփոխություններ՝ նախասիրտ-փորոքային խրձի ձախ կամ աջ ոտիկի լրիվ պաշարում (զարգանում է հիվանդության ընթացքում), 2-րդ-3-րդ աստիճանի նախասիրտ-փորոքային պաշարում, պարոքսիզմային փորոքային հաճախասրտություն, նախասրտերի մշտական շողացում, ST հատվածի (սեզմենտի) դեպրեսիա 2 մմ և ավելի (ի հայտ է գալիս վելոտրոմետրիկ հետազոտությամբ կամ սրտի շրջանում, կամ կրծոսկրի հետևում՝ ցավերի նույնպիսի ժամանակ),
- սուր փուլային և իմունային ռեակտիվության ցուցանիշների՝ որևէ այլ հիվանդությամբ չպայմանավորված փոփոխություններ,
- կանգային սրտային անբավարարություն:

**Տարբերակիչ ախտորոշումը.**

1. ՄԻՀ-ը բացառվում է, եթե հիվանդի գանգատները, լաբորատոր և գործիքային հետազոտության տվյալները բնորոշ չեն այդ հիվանդությանը (ՄԻՀ-ի դեպքում ֆիզիկական աշխատանքի ժամանակ առաջանում են տիպիկ այրող հետկրծոսկրային ցավեր, նշանակվում է նիտրոգլիցերին, իսկ տրեդմիլի փորձի կատարման դեպքում դիտվում է ST հատվածի (սեզմենտի) տիպիկ «իշեմիկ» դեպրեսիա):

2. Ոչ տիպիկ (վարակային-ալերգիկ) միոկարդիտը բացառվում է, եթե չկան այդ հիվանդությանը բնորոշ երևույթներ (սրտի չափերի մեծացում, սրտամկանի կծկողական ֆունկցիայի, ռիթմի և հաղորդականության խանգարումներ, ԷՍԳ-ի ոչ տիպիկ

փոփոխված T ատամիկ): Բացի այդ, հիվանդությանը բնորոշ չեն վեգետատիվ-անոթային կրիզներն ու ախտանշանների բազմազանությունը:

3. Սուր ռեմատիկ տենդը և ռեմատիկ արատները բացառվում են, եթե չկա սրտի արատ: ՆՅԱ-ի ժամանակ սուր փուլային և իմունային ռեակտիվության ցուցանիշները մնում են անփոփոխ, չկա հողային համախտանիշ:

4. Կարդիոմիոպաթիաները (առանց զգալի կարդիոմեգալիայի և կանգային սրտային անբավարարության) բացառվում են էխոսրտագրության միջոցով:

**Լիարժեք կլինիկական ախտորոշման չեակներպումը:** Հաշվի են առնվում ՆՅԱ-ի աշխատանքային դասակարգումը՝ 1) հիվանդության պատճառագիտական ձևը (եթե հնարավոր է հայտնաբերել), 2) առաջատար կլինիկական համախտանիշները, 3) ընթացքի ծանրությունը:

**Քուժումը:** ՆՅԱ-ի բուժական բոլոր միջամտությունների նպատակն է ազդել պատճառական գործոնների և ախտածագման օղակների վրա, ընդ որում, այդ միջամտություններն ունեն ընդհանուր ամրապնդող բնույթ:

**Ազդեցությունը պատճառական գործոնների վրա:** Հաշվի առնելով, որ ՆՅԱ-ի զարգացմանը նպաստում են արտաքին միջավայրի բազմաթիվ գործոններ, պետք է ձգտել բարելավելու կենսակերպը և բացառելու օրգանիզմի վրա ախտածագման գործոնների ազդեցությունը: Հիվանդության թեթև ձևերի ժամանակ սա լավ արդյունք է տալիս:

Որոշակի նշանակություն ունի յաթրոգենիան. չի բացառվում այս կամ այն հիվանդության առկայությունը (օրինակ՝ ՄԻՀ, միոկարդիտ, սրտի արատ և այլն), ինչի հետևանքով հիվանդը դադարում է հավատալուց, որ կապաքինվի, դիմում է տաքքեր բժշկների, ենթարկվում է բազմաթիվ հետազոտությունների: Արդյունավետ հոգեթերապիան մեծ նշանակություն ունի հիվանդի կողմից հիվանդության էության գիտակցման և դրական ելքի համար:

**Ազդեցությունը ախտածագման օղակների վրա:** Դրա համար՝

ա) կարգավորում են ուղեղի կեղև–հիպոթալամուս և հիպոթալամուս–ներքին (վիսցերալ) օրգաններ փոխադարձ կապը,

բ) թուլացնում են սիմպաթոադրենալինային համակարգի ակտիվությունը՝ նվազեցնելով հիպերկատեխոլամինեմիայի կլինիկական արտահայտությունները:

Առաջին խնդիրը լուծվում է անհատական թերապիայի կիրառմամբ, որը ներառում է սեղատիվ, նյարդերը հանգստացնող դեղամիջոցներ (տրանկվիլիզատորներ), ինչպես նաև ոչ մեծ չափաքանակներով հակադեպրեսանտներ: Նպատակահարմար է, որ այս ընտրությունը կատարեն թերապևտը և հոգեմյադաբանը: Հիվանդության թեթև ձևերի դեպքում բուժումը տալիս է կայուն դրական արդյունք:

Սիմպաթոադրենալինային համակարգի ակտիվությունը նվազեցնում են β-ադրենալաչարիչներով՝ անալրիլին (օբզիդան, ինդերալ), օքսպրենոլոլ (տրազիկոլ), ատենոլոլ: Սրանք արդյունավետ են հատկապես սիմպաթիկոտոնիկ տիպի վեգետատիվ-անոթային կրիզների, ինչպես նաև ցավային համախտանիշի և արյան շրջանառության հիպերկինետիկ վիճակի արտահայտվածության դեպքում: Վերա-



• սրտային տիպի ՆՅԱ-ն. սրտի ռիթմը կայուն խանգարված է, առկա է կայուն կարդիալգիա՝ վեգետատիվ-անոթային խանգարումների ֆոնի վրա:

Հիպոթենզիվային տիպի ՆՅԱ-ն պետք է տարբերել առողջ մարդկանց ֆիզիոլոգիական հիպոտոնիայից, որի դեպքում գանգատներ չկան, աշխատունակությունը պահպանվում է ՋՃ՝ 90/50–100/60 մմ սնդիկի սյան ցուցանիշների դեպքում: Նման անձինք ճանաչվում են շարային ծառայության համար պիտանի՝ առանց սահմանափակումների: Պետք է բացառել ախտանշանային հիպոտոնիան, որը պայմանավորված է ներզատիչ գեղձերի, ադեստամոքսային համակարգի, թոքերի և այլ հիվանդություններով:

Ոչ մշտական սուբֆերրիլիտետով ՆՅԱ-ով հիվանդները փորձաքննվում են և պիտանի են ծառայության համար:

**Կանխարգելումը:** ՆՅԱ-ի կանխարգելման համար կարևոր նշանակություն ունեն բավարար ֆիզիկական ծանրաբեռնվածությամբ առողջ կենսակերպը, պայքարը օջախային վարակների դեմ, կանանց կլիմաքսի ժամանակ հորմոնալ խանգարումների կարգավորումը: Պետք է խուսափել չափազանց հոգեհուզական ծանրաբեռումից, չծխել և չօգտագործել ալկոհոլ:

#### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Военно-полевая терапия». Ред. Н. С. Молчанов и Е. В. Гембицкий. Л., 1971.
3. «Военно-полевая терапия». Ред. А. А. Раков, А. Е. Сосюкин. СПб., 2003.
4. Е. В. Гембицкий, Ф. И. Комаров. Военно-полевая терапия. М., 1983.
5. «Руководство по медицинскому обеспечению Вооруженных Сил Российской Федерации на мирное время». М., 2001.

## ВОЕННАЯ МЕДИЦИНА

### НЕКОТОРЫЕ АСПЕКТЫ НЕЙРОЦИРКУЛЯТОРНОЙ АСТЕНИИ

А. М. ПАРСАДАНЯН, полковник м/с, доктор медицинских наук, начальник Военно-медицинского управления ВС РА, С. Г. ГАЛСТЯН, полковник м/с, доктор медицинских наук, профессор, ИО начальника ВМФ ЕГМУ, М. В. САРГСЯН, капитан м/с, начальник терапевтического отделения ЦКВГ МО РА, кандидат медицинских наук, доцент, М. С. МЕЛИКЯН, капитан м/с, врач Диагностического отделения ЕЦГ МО РА

#### РЕЗЮМЕ

Нейроциркуляторная астения структурно-функциональное заболевание, которое характеризуется различными сердечно-сосудистыми, дыхательными и вегетативными нарушениями. Она встречается у людей разного возраста, в особенности—среди молодежи.

Главные симптомы болезни разнохарактерны и сопровождаются ноющими, колющими и давящими болями разной длительности с повышением артериального давления, учащенным сердцебиением, нехваткой воздуха, потливостью, внутренней дрожью, одышкой и страхом смерти.

Течение нейроциркуляторной астении определяется выраженной тахикардией, резко снижаются работоспособность и физическая выносливость. Предрасполагающими к болезни факторами являются: наследственно-структурные особенности организма, неблагоприятные социально-экономические условия, этапы гормональных изменений в организме.

Диагностика этой болезни у призывников и военнослужащих срочной службы необходима с подтверждением стационарным исследованием. Для профилактики болезни важное значение имеют здоровый образ жизни, достаточная физическая нагрузка, борьба против очаговых инфекций, регулирование гормональных нарушений. Необходимо избегать чрезмерных душевно-эмоциональных нагрузок, не курить и не употреблять алкоголь.

## MILITARY MEDICINE

### SOME ASPECTS OF NEUROCIRCULATORY ASTHENIA

*A. M. PARSADANYAN, Colonel of Medical Service, Head of the Military-Medical Directorate of the RA Armed Forces, Doctor of Medical Sciences,*

*S. G. GALSTYAN, Colonel of Medical Service, Acting Head of the Faculty of Military Medicine of Yerevan State Medical University, Doctor of Medical Sciences, Professor,*

*M. V. SARGSYAN, Captain of Medical Service, Head of the Therapeutic Branch of the Central Clinical Military Hospital of the MOD, RA, PhD in Medical Sciences, Associate Professor, M. S. MELIKYAN, Captain of Medical Service, Medical Officer at the Diagnostic Branch of the Yerevan Central Hospital, MOD, RA*

#### SUMMARY

Neurocirculatory asthenia is a structural and functional disease which is characterized by various cardiovascular, respiratory and autonomic disorders. It occurs among people of all ages, especially the youth.

The main symptoms are diverse and accompanied by dull, piercing and constricting pains of different duration with the increase in blood pressure, palpitations and a choking sensation, sweating, inner trembling, shortbreathing and fear of death.

The course of neurocirculatory asthenia is determined by extreme tachycardia, working capacity and physical endurance drastically fall. The predisposing factors of the disease are the following ones: hereditary-structural features of an organism, unfavourable social and economic conditions, stages of hormonal changes in the organism.

The diagnosis of this disease among recruits and draftees is needed with the approval by inpatient examination. So as to prevent this disease a healthy lifestyle, sufficient physical activity, fight against focal infections, and regulation of hormone imbalance are of great significance. It is necessary to avoid excessive mental and emotional load, not to smoke and not to take alcoholic beverages.

**ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊՐՈԲԼԵՄԸ՝  
ՈՐՊԵՍ ՀԱԿԱՄԱՐՏԱԾԻՆ ԳՈՐԾՈՆ  
ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

*Ա. Պ. ՆԱԶԱՐԵԹՅԱՆ, մայր, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ»  
ռազմագիտական հանդեսի տեխնիկական բաժնի պետ*



Այժմ «անվտանգություն» հասկացության իմաստն ընդլայնվել է, և դրա՝ նախկինում առանցքային համարվող ռազմական բաղադրիչի հետ մեկտեղ միջազգային անվտանգության ասպարեզում կարևոր դեր են խաղում էներգետիկ, հակաահաբեկչական, բնապահպանական, տեղեկատվական, հոգևոր, պարենային և այլ բաղադրիչներ:

Համընդհանրացման գործընթացում կերպավորվող հասարակությունների զարգացման հիմնական պայմաններից է մարդկային և բնական ռեսուրսների պատշաճ կառավարումը: Ներկայումս առանձնակի ուշադրություն է դարձվում բնապահպանական անվտանգության պրոբլեմներին, քանի որ դրանք կրում են համամոլորակային բնույթ, և դրանց լուծումը հաճախ պահանջում է ոչ միայն պետական, այլև տարածաշրջանային, երբեմն էլ՝ համաշխարհային մոտեցում: Դեռ 1995 թ. ԱՄՆ-ում ստեղծվեց պաշտպանության նախարարի օգնականի բնապահպանական անվտանգության գծով տեղակալի պաշտոն, անվտանգության կառույցները (ներառյալ՝ պետդեպարտամենտը և ԿՀԳ-ն) զբաղվում են նաև բնապահպանական հարցերով<sup>1</sup>: Պատահական չէ, որ ինչպես ազգային, այնպես էլ տարածաշրջանային ու միջազգային մակարդակներում ստեղծված են մի շարք կազմակերպություններ, որոնք միավորում են տարբեր պետությունների, կառույցների, անհատների ջանքերը՝ նպատակաուղղված բնության հետ հավասարակշիռ հարաբերությունների հաստատմանը:

Բնապահպանական անվտանգության ոլորտում առավել կարևոր, թեև համեմատաբար քիչ ուսումնասիրված պրոբլեմներից է ջրի՝ որպես կյանքի աղբյուրի, հարցը: Լինելով չվերականգնվող ռեսուրս՝ ջուրը եզակի է իր կենսական նշանակությամբ և անփոխարինելիությամբ, իսկ ջրային ռեսուրսների անբավարարության պրոբլեմը դարձել է մեծ թվով պետությունների մտահոգության առարկա՝ ավելի ու ավելի առաջնային տեղ զբաղեցնելով նրանց քաղաքական օրակարգում:

<sup>1</sup> Stu Christopher Coker. Globalization and the New Security Agenda. Chapter 3 in Globalization and Insecurity in the Twenty-first Century: NATO and the Management of Risk. Oxford. 2002, PP. 33—56:

Վերջին երկու-երեք դարերում աշխարհի բնակչության աննախադեպ աճի, ինչպես նաև տեխնաբնույթ ու սպառողական քաղաքակրթության և համընդհանրացման պատճառով ամբողջ աշխարհում ջրային ռեսուրսների և մարդու պահանջմունքների միջև ինտենսիվ կերպով ձևավորվում է բացասական հարաբերակցություն: ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար Բան Կի-Մունը նշում է, որ Սուդանի Դարֆուր նահանգում ռազմական գործողություններ բռնկվեցին երաշտի ժամանակ, երբ «առաջին անգամ ջուրը և սնունդը չբավականացրին բոլորին»<sup>2</sup>: Ջուրն օրըստօրե դառնում է ժամանակակից աշխարհաքաղաքականության կարևորագույն գործոն և մոտ ապագայում օրակարգի առաջին պլանից դուրս է մղելու նույնպես չվերականգնվող, սակայն ըստ էության փոխարինելի նավթն ու գազը: Ջրի զգալի պաշարներ ունեցող պետությունները ձգտում են ջուրը նավթի և գազի նման ազդեցության գործոն դարձնելու և օգտագործելու միջպետական հարաբերություններում: Հետևաբար, ջրային ռեսուրսները դառնում են միջազգային ապրանք, որը մոտ ապագայում իր կարևորությամբ կգերազանցի վերջին հարյուրամյակում ուշադրության կենտրոնում հայտնված ածխաջրածնային հումքը: Նավթ- և գազամուղների հետ մեկտեղ ոչ պակաս կարևորություն են ստանում նաև ջրատարները:

Այս ամենը կհանգեցնի առանձին պետությունների միջև ջրային ռեսուրսների հասանելիության և դրանց վրա վերահսկողության համար մրցակցության մեծացմանը: Դեռ 20-րդ դարի 80-ական թվականներին ԱՄՆ-ի նախագահի՝ ջրային ռեսուրսների գծով նախկին օգնական Ջոյս Ստարը նշել է, որ «շուտով ռազմական գերատեսչությունների միջանցքներում ջրային անվտանգությունը և ռազմական անվտանգությունը կկանգնեն նույն շարքում»<sup>3</sup>:

Մոլորակի ամբողջ ջրային ռեսուրսների 97 %-ը կազմում են օվկիանոսներն ու ծովերը, և միայն 3 %-ն են քաղցրահամ ջրերը, որոնք անհրաժեշտ են մարդու կենսագործունեության համար: Խմելու ջրի պաշարների կեսից ավելին կենտրոնացած է սառցադաշտերում, մի զգալի մասը հանդես է գալիս հողի խոնավության և ստորգետնյա ջրերի տեսքով, որոնց օգտագործումը բավականին դժվար է: Ջրային ռեսուրսների հայտնաբերված ֆոնդի պահպանումը և նոր աղբյուրների հետախուզումը դառնում են մեր դարի կարևոր ու հրատապ խնդիրներից մեկը, իսկ ապագայում ջրի պաշարների բաշխումը կդառնա պայթյունավտանգ և հեռուն տանող քաղաքական գլոխկոտորուկի պատճառ: ՄԱԿ-ի ուսումնասիրությունների համաձայն՝ մինչև 2050 թվականը ջրի պակասի հետ կառնչվի մոլորակի բնակչության 2/3-ը: Իսկ 2025 թ. աշխարհում կպահանջվի 22 %-ով ավելի ջուր,

<sup>2</sup> «Ban Ki-moon warns that water shortages are increasingly driving conflicts». 6 February 2008 (<http://www.un.org/apps/news/story.asp?NewsID=25527>).

<sup>3</sup> *Elizabeth L. Chalecki, Piter H. Gleick, Kelli L. Larson, Arian L. Pregonzen and Aaron T. Wolf. Fire & Water: An Examination of the Technologies, Institutions, and Social Issues in Arms Control and Transboundary Water-Resources Agreements. Environmental Change and Security Project Report. Issue 8, 2002* (<http://www.transboundarywaters.orst.edu/publications/>).

քան այսօր: Ընդ որում, այն ոլորտներում, որտեղ արտադրությունը հնարավոր չէ առանց ջրի, արտադրության աճը կարող է նվազել: Պետք է հաշվի առնել նաև կլիմայի համընդհանուր փոփոխությունները, որոնք կարող են բերել վիճակի կտրուկ վատթարացման: Աշխարհի չորային գոտիներում գտնվող մոտ հիսուն երկրներ այժմ ուղղակիորեն կախված են արտաքին աշխարհից ներկրվող ջրից:

Ջրային ռեսուրսների քանակական և որակական սպառման հիմնական պատճառներն են շրջակա միջավայրի աղտոտումը, արդյունաբերության և գյուղատնտեսության, կոմունալ կենցաղային ծառայությունների համար ջրի ոչ խելամիտ օգտագործումը, ճահիճների վերացումը, ոչ արդյունավետ ոռոգումը և բնակչության ինտենսիվ աճը հիմնականում այն տարածաշրջաններում, որտեղ քաղցրահամ ջրի չվերականգնվող պաշարները նախկինում ևս չեն բավականացրել: Ջրի աղտոտումը մեծապես պայմանավորված է ոչ կատարյալ տեխնոլոգիաների կիրառման մասշտաբների մեծացմամբ: Աղտոտումների զգալի ծավալը կրում է անդրասահմանային բնույթ: Ջրային ռեսուրսների օգտագործման հարցում տարածաշրջանային համագործակցությանը էապես խոչընդոտում են ջրօգտագործման անկառավարելիությունը, ջրի որակի և օգտագործման վերաբերյալ տեղեկության փոխանակման ցածր մակարդակը: Դեռևս չկան ջրային ռեսուրսների օգտագործման հստակ կերպով ձևավորված արդյունավետ մեխանիզմներ, ինչը փաստորեն առանձին պետություններին հնարավորություն է տալիս գործելու կամայականորեն:

Գետերի ավազանների սահմանափակ ջրային ռեսուրսները դառնում են պետությունների միջև տնտեսական մրցակցության աղբյուր: Իսկ ջրային մի շարք պրոբլեմներ ունեն ցայտուն արտահայտված միջազգային բնույթ: Ջրային ռեսուրսների համատեղ օգտագործման դեպքում գետային ավազանների կառավարման բարդությունը բերում է տարբեր մակարդակի՝ միջպետական և միջտարածաշրջանային հակամարտությունների ծագման: Սի պետության կողմից ջրի գերօգտագործումը կարող է սահմանափակել կամ կրճատել հարևան պետության կամ պետությունների համար ջրային պաշարների մատչելիությունը: Գետի ստորին հոսանքի մոտ գտնվող պետությունները, կախված լինելով վերին հոսանքի մոտ գտնվողներից, դառնում են խոցելի, քանի որ ջուրը կարող է օգտագործվել իրենց դեմ որպես գործիք<sup>4</sup>: Ուսումնասիրելով մոլորակի ջրային թեժ կետերը (Ամերիկայի արևմուտք, Մերձավոր Արևելք և Կենտրոնական Ասիայի տարածաշրջան)՝ կարելի է ասել, որ Մերձավոր Արևելքը առաջինը կհայտնվի ջրային ճգնաժամի վիճակում: Հավանական է նաև ջրային ռեսուրսների համար պայքարը Չինաստանի և Հնդկաստանի, Եգիպտոսի և Եթովպիայի, Անգոլայի և Նամիբիայի միջև:

Գոյություն ունեն նաև կարծիքներ, որ ջրի պակասի հետ կապված բոլոր մտահոգություններն անհիմն են: Որպես փաստարկ բերվում են արկտիկական և

<sup>4</sup> Sbu A. Гончаренко. Использование ресурсов трансграничных вод: состояние и перспективы. «Мировая экономика и международные отношения». 2002, № 5 (<http://www.proxima.com.ua/articles/atricles.php?clause=2209>):

անտարկտիկական սառցադաշտերում եղած ջրի ահռելի զանգվածները, ինչպես նաև ստորերկրյա ջրերի մեծ պաշարները: Մակայն ոչ միշտ է նշվում, թե ի՞նչ արժեք կունենա տվյալ ջրային ռեսուրսների օգտագործումը, և երկարաժամկետ հեռանկարում ինչպիսի՞ն կլինի համընդհանուր տաքացման ու դրա հնարավոր անշրջելի բացասական հետևանքների ազդեցությունը ջրային ռեսուրսների վրա: Մի շարք երկրներում ջրային ռեսուրսները գործնականում արդեն յուրացվել են: Դրանց լրացումը այլընտրանքային ճանապարհով հեռանկարում չի ուրվագծվում: Տեխնոլոգիական առաջընթացը ավելի ռեալ է դարձնում ջրային հակամարտությունների աճման միտումը:

Մեծ թվով գիտնականներ և քաղաքագետներ ոչ միայն ուսումնասիրել են տարբեր հակամարտությունների քաղաքական և ռազմական տեսանկյունները, այլև բացահայտել են դրանց կապը պակասող բնական ռեսուրսների նկատմամբ պետությունների կողմից վերահսկողություն ձեռք բերելու ձգտման հետ:

Փիտեր Գլեյկը «Ջրային ռեսուրսները և հակամարտությունները» գրքում ուսումնասիրել է վերջին 500 տարիների ընթացքում քաղաքական նպատակներով ջրի գործոնի շահարկման բազմաթիվ դեպքեր, այդ թվում՝ ինչպես խոշոր ջրային կառույցների ուղղակիորեն վերացումը, այնպես էլ օգտագործումը որպես հակամարտող կողմի վրա ճնշում գործադրելու միջոցի: Այսինքն՝ ջուրը ոչ միայն կյանքի աղբյուր է, այլև՝ քաղաքական խաղերում վճռորոշ խաղաքարտ<sup>5</sup>:

Մայկլ Էլերը «Ռեսուրսների պատերազմներ» գրքում նավթագազային հակամարտությունների կողքին քննարկել է նաև Նեղոսի, Տիգրիսի, Եփրատի, Հորդանանի և Ինդոսի գետային համակարգերի ռեսուրսների բաժանման պատճառով առաջացած ջրային հակամարտությունները<sup>6</sup>:

Այս առումով հետաքրքրական է որոշ գիտնականների կարծիքը արաբ-խորայելական պատերազմների մասին: Իսրայելի կողմից Սիրիայից գրավված Գոլանի բարձունքները Հորդանան գետի ակունքների գտնվելու վայրն են: Հորդանանը Իսրայելի հիմնական ջրամատակարարն է: Իսկ Իսրայելի կողմից պաղեստինյան տարածքների զավթումը պայմանավորված էր պատմական Պաղեստինի տարածքում գոյություն ունեցող ստորգետնյա ջրերի վրա հսկողություն սահմանելու ձգտմամբ<sup>7</sup>:

Իսկ ինչ դեր են ունեցել և կարող են ունենալ ջրային ռեսուրսները մեր պետության ռազմական և քաղաքական խնդիրների լուծման ժամանակ:

Հայաստանում բոլոր աղբյուրները տարեկան տալիս են 1 մլրդ 600 մլն մ<sup>3</sup>

<sup>5</sup> Stu Peter Gleick. Water and Conflicts, 2009 (<http://www.circleofblue.org/waternews/2009/world/peter-gleick-water-and-conflict-the-new-water-conflict-chronology/>):

<sup>6</sup> Stu Michael T. Klare. Resource Wars: The New Landscape of Global Conflict. New York, 2001 (<http://www.amazon.com/Resource-Wars-Landscape-Conflict-Introduction/dp/0805055762>):

<sup>7</sup> Stu «Water and Arab—Israeli conflict» (<http://cryptome.quintessenz.at/mirror/IvP-H2O.pdf>), նաև «Water in the Israeli-Palestinian conflict» ([http://www.bakerinstitute.org/publications/rp\\_2006\\_005.pdf](http://www.bakerinstitute.org/publications/rp_2006_005.pdf)):

բարձրորակ խմելու ջուր, կան նաև 2 մլրդ 400 մլն մ<sup>3</sup> արտեզյան ջրեր, որոնք նույնպես կարելի է խմել և օգտագործել կենցաղում: Հանրապետության ջրային ռեսուրսների պահպանության և արդյունավետ օգտագործման հիմնախնդիրներից մեկը Սևանա լճի պահպանությունն է: Հեռանկարում այն կարող է դառնալ տարածաշրջանում խմելու ջրի միակ մեծ աղբյուրը: Հայաստանում կա 210 գետ, որոնց միջին տարեկան հոսքը կազմում է մոտ 7,187 մլրդ մ<sup>3</sup>: Գրեթե բոլոր գետերը արտահոսում են երկրի սահմաններից դուրս<sup>8</sup>: Ստորև բերվում են ՀՀ մի քանի գետերի մասին տվյալներ, որոնք հնարավորություն են տալիս ավելի պարզ պատկերացնելու ՀՀ ջրային ռեսուրսների ներկա դերն ու նշանակությունը:

Աղյուսակ 1<sup>9</sup>

ՏՎՅԱԼՆԵՐ ՀՀ ՈՐՈՇ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԵՏԵՐԻ ՄԱՍԻՆ

Անվանում	Ավազանի երկրները	Ակունք	Գետաբերան	Գետի ընդհանուր երկ. (կմ)	Երկ. Հայաստանի տարածքում (կմ)
Արաքս	Հայաստան, Թուրքիա, Իրան, Ադրբեջան	Բյուրակնի (Բինգյոլ) բարձրավանդակ Հայկական լեռնաշխարհ	Քոռ	1072	158
Որոտան	Հայաստան, Ադրբեջան	Ղարաբաղի բարձրավանդակ	Արաքս	179	119
Գեբեղ	Հայաստան, Վրաստան	Փամբակի և Չորագետի միացման վայր	Քոռ	178	152
Աղստև	Հայաստան, Ադրբեջան	Փամբակի լեռնաշրջանի Թեժ գագաթի լանջեր	Քոռ	133	99
Արփա	Հայաստան, Ադրբեջան (Նախիջևան)	Վարդենիսի աղբյուրներ	Արաքս	126	90
Ողջի	Հայաստան, Ադրբեջան	Կապուտջուղի գագաթամերձ լանջերից	Արաքս	88	56

Ինչպես տեսնում ենք, Հայաստանի հարստությունը հոսում անցնում է հարևան պետություններ և օգտագործվում նրանց կողմից: Անշուշտ, Հայաստանում որոշակի աշխատանք է կատարվել իր ջրային ռեսուրսների հնարավորինս արդյունավետ օգտագործման համար: Մասնավորապես՝ ոռոգման ջրի պահանջարկը բավարարելու նպատակով կառուցվել է 82 ջրամբար: Արհեստական ջրամբարներում ամբարվում է 1,4 մլրդ մ<sup>3</sup> ջուր, պլանավորվում է այս ցուցանիշը հասցնել մինչև 2,7 մլրդ մ<sup>3</sup>-ի: Մակայն ամբարվում է առկա ռեսուրսների միայն 25 %-ը, մինչդեռ մնացած 75 %-ը արտահոսում է հարևան պետություններ: Ամբողջ աշխարհում ջրի նկատմամբ աճող պահանջարկը Հայաստանին և Արցախին հուշում է խելամիտ օգտագործել մեր ազգային հարստությունը (միջազգային շուկայում ջրի 1 լիտրը 5 անգամ ավելի քան է, քան 1 լիտր հում

<sup>8</sup> Տես *L. Ս. Մեյրումյան, Մ. Հ. Գալստյան*, Բնապահպանության հիմունքներ: Ե., 2010, էջ 152–162:

<sup>9</sup> Աղյուսակի տվյալները բերվում են ըստ՝ «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 1, Ե., 1974, էջ 261, 702–703, հ. 2, 1976, էջ 153, հ. 3, 1977, էջ 322, հ. 8, 1982, էջ 615, 650:

նավթը՝ ջրամբարներ կառուցելով, ջրային ռեսուրսները հնարավորինս հանրապետության ներսում օգտագործելով, իսկ հարևան պետություններին այն տրամադրելով «պահանջարկ-առաջարկ» սկզբունքով: Դա մոտ ապագայում հնարավորություն կտա զգալի չափով ծածկելու պետական ծրագրերի վրա կատարվելիք ծախսերը:

Քանի որ Ղարաբաղյան հակամարտությունը դեռ չի ստացել իր հանգուցալուծումը, կարևոր և հրատապ ենք համարում ջրային ռեսուրսների գործոնը ուսումնասիրել այդ հակամարտության կարգավորման տեսանկյունից:

Բազմաթիվ վերլուծաբաններ բավականին հանգամանորեն ուսումնասիրել և քննարկել են Ղարաբաղյան հակամարտության տարբեր կողմեր: Բայց գրեթե չկան դրա բնապահպանական, հատկապես՝ ջրային բաղադրիչի գծով ուսումնասիրություններ: Նման ուսումնասիրությունները, մեր կարծիքով, հնարավորություն կտան ի հայտ բերելու Ղարաբաղյան հակամարտության կարգավորման առավել կարևոր տեսակետներից մեկը, պարզելու նրա առաջացման նոր հանգուցակետեր:

Ստորև բերվում են նախկին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի նկատմամբ Ադրբեջանի վարած քաղաքականության այն դրվագները, որոնք ուղղակիորեն կապված են բնապահպանական անվտանգության հետ, որը խորհրդային տարիներին թեև գերակայություն չի համարվել, սակայն Բաքվի իշխանությունների համար պարարտ հող է ստեղծել նախկին ԼՂԻՄ-ի նկատմամբ «ջրային քաղաքականություն» վարելու համար: Այդ քաղաքականությունն ուղղված է եղել ԼՂԻՄ-ի տնտեսական և սոցիալական զարգացման դեմ, ինչը բարենպաստ պայմաններ կստեղծեր, մի կողմից, հայ բնակչության արտահոսքի, մյուս կողմից՝ Ադրբեջանական ԽՍՀ կազմի մեջ մտնող հարևան շրջանների կողմից Ղարաբաղի ջրային ռեսուրսները առավելագույնս օգտագործելու համար: Որպես Լեռնային Ղարաբաղի սոցիալ-տնտեսական զարգացմանը խոչընդոտող հիմնական ջրային մեխանիզմ կիրառվել է ոռոգվող գյուղատնտեսական վարելահողերի ընդլայնման սահմանափակումը:

Գյուղատնտեսության բնականոն գործունեության կազմակերպման և տնտեսության զարգացման համար անհրաժեշտ է վեգետացիոն շրջանում ապահովել արհեստական ոռոգում այն դեպքում, երբ տեղումների քանակը տարեկան 600 մմ-ից պակաս է (ԼՂ-ում այն կազմում է տարեկան 581 մմ, այն էլ՝ հիմնականում ձմռանը և վաղ գարնանը):

Այդուսակ 2-ից երևում է, թե ինչպիսի քաղաքականություն են վարել Բաքվի իշխանությունները Ղարաբաղի բնակչության նկատմամբ՝ ձգտելով հայաթափելու մարզը:

Լեռնային Ղարաբաղը շրջապատող՝ նախկին Ադրբեջանական ԽՍՀ շրջանների վարելահողերի ոռոգումն իրականացվել է ԼՂ ջրային ռեսուրսների հաշվին: Դրա ապացույցն են Սարսանգի, Խաչենի և այլ ջրամբարներ, որոնք «ջրային ճնշման» քաղաքականության տիպիկ օրինակներ են: Կառուցելով

Մարսանգի ջրամբարը, որը ոռոգելու էր 128 հազ. հա վարելահող, Բաքվի իշխանությունները մեծ հնարավորություն ստեղծեցին իրենց շրջանների վարելահողերի ոռոգման համար (100 հազ. հա)՝ իր հողերի ոռոգման հետ կապված ԼՂԻՄ-ի բոլոր փորձերը դարձնելով ապարդյուն: Նույնը կարելի է ասել Խաչենի ջրամբարի մասին: Այն կառուցելով ԼՂԻՄ-ի սահմաններից դուրս՝ Ադրբեջանը

Աղյուսակ 2<sup>10</sup>

Երկիր թվական	ԼՂԻՄ	Ադրբեջանական ԽՍՀ
1985–1988	26,2 հազ. հա ոռոգվող վարելահողեր (ընդհանուր վարելահողերի 12 %-ը), կարող էր հասնել 100 հազ. հա-ի	ընդհանուր վարելահողերի 28,2 %-ը
1985–1988	ջրային ռեսուրսները 1,2 մլրդ մ <sup>3</sup>	1 բնակչի հաշվով 6 անգամ պակաս ջրային ռեսուրսներ, քան ԼՂԻՄ-ում
1913–1990	ոռոգվող վարելահողերի մակերեսը ավելացել է 2,1 անգամ	ոռոգվող վարելահողերի մակերեսը ավելացել է 4, 6 անգամ
1960–1988	ոռոգվող վարելահողերի մակերեսը ավելացել է 15 %-ով	ոռոգվող վարելահողերի մակերեսը ավելացել է 40 %-ով
1960–1985	ոռոգվող վարելահողերը որոշ շրջաններում՝ Ասկերան՝ 7,9 %, Մարտակերտ՝ 25 %, Մարտունի՝ 6,6 %, Հաղրուք՝ 2,4 %	ոռոգվող վարելահողերը որոշ շրջաններում՝ Ադղամ 51–70 %, Ֆիզուլի՝ 28,2 %, Ջաբրայիլ՝ 20,3 %, Սյր-Բաշիր՝ 75,8 %

բավարարում էր Ադղամի շրջանի պահանջները՝ ԼՂ-ի կողմից Խաչեն գետի ինտենսիվ շահագործումը ինքնըստիներյան դարձնելով անհնարին: Հետևաբար, Լեռնային Ղարաբաղում հնարավոր չէր ապահովել պատշաճ բերքատվություն, վերջին հաշվով՝ գյուղատնտեսության զարգացում, և ԼՂԻՄ-ը, հատկապես՝ Ստեփանակերտը, անընդհատ կախման մեջ էր ադրբեջանական շրջաններից ներկրվող սննդամթերքից:

Մեկ այլ կարևոր հանգամանք, որը կարող էր Բաքվի իշխանությունների կողմից իրագործվել հայ բնակչության դեմ՝ հայերի մեկուսացումն էր ջրային ռեսուրսների պահպանումից: Ստեփանակերտում մմանատիպ կառույցներում աշխատում էին միայն ադրբեջանցիներ, որոնք բնակվում էին հարևան շրջաններում: Նրանց միջոցով հնարավոր էր իրականացնել հայ բնակչության դեմ ուղղված տարբեր ծրագրեր, որոնց մասին ոչ մի տեղեկություն հայտնի չէր դառնա:

Որպես դրա հիմնավորում նշենք հետևյալ փաստը: ԼՂԻՄ-ի շրջակա միջավայրի մաքրության, բնակչության երկարակեցության (տես աղ. 3), սննդի լավորակության պայմաններում արդյոք ԼՂԻՄ-ի տարածքի ջրի նկատմամբ ադրբեջանական իշխանության «հատուկ» ուշադրության հետևանք չէ՞ր Լեռնային

<sup>10</sup> Տես Դ. Բաբայն. Проблема водной безопасности Республики Армения и Арцаха в контексте урегулирования Нагорно-Карабахского конфликта ([http://ararat-center.org/upload/files/Liberated\\_16.pdf](http://ararat-center.org/upload/files/Liberated_16.pdf)):

Աղյուսակ 3<sup>11</sup>

100 ԵՎ ԱՎԵԼԻ ՏԱՐԻՔ ՈՒՆԵՅՈՂՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՄԱԿ  
(100 հազար մարդու հաշվով)

Երկիր թվական	ԼՂԻՄ	Հայկական ԽՍՀ	Ադրբեջանական ԽՍՀ	Վրացական ԽՍՀ
1950–1960	144	33	84	51

Ղարաբաղի բնակչության մեջ չարորակ ուռուցքներով հիվանդների թվի աննախադեպ աճը (տես աղ. 4):

Ադրբեջանի կազմում Լեռնային Ղարաբաղի գտնվելու ամբողջ ընթացքում Ադրբեջանի հիմնական նպատակն է եղել ժողովրդագրական եղանակով վերահսկողություն սահմանել ԼՂ հիմնական ջրային զարկերակների վրա՝ դրա հա-

Աղյուսակ 4<sup>12</sup>

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՉԱՐՈՐԱԿ ՆՈՐԱԳՈՅԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԽՏՈՐՈՇՄԱՄԲ ՀԻՎԱՆԴՆԵՐ (100 հազար մարդու հաշվով)

Երկիր թվական	ԼՂԻՄ	Հայկական ԽՍՀ	Ադրբեջանական ԽՍՀ	Վրացական ԽՍՀ
1975	90,7 մարդ	116,3 մարդ	107,8 մարդ	108,8 մարդ
1988	142 մարդ	122,2 մարդ	105,7 մարդ	109,1 մարդ

մար դիմելով տարբեր միջոցների: Օրինակներից է նոր ջրատարի կառուցման պատրվակով Ասկերանի շրջանի Ջամիլի գյուղից հայերի վերաբնակեցումը Ստեփանակերտում՝ բնակության համար գետամերձ տարածքի ոչ բարենպաստ լինելու պատճառաբանությամբ, թեև կարճ ժամանակ անց նույն տարածքները վերաբնակեցվեցին ադրբեջանցիներով:

Խորհրդային տարիներին Ադրբեջանը կարողացավ հսկողություն սահմանել ջրային ռեսուրսների վրա՝ հայաբնակ տարածքներում բնակեցնելով ադրբեջանցիների, նոր ադրբեջանական գյուղեր հիմնելով, հին հայկական բնակավայրերը քանդելով (հայերին արտաքսելու նպատակով) և այլն<sup>13</sup>: 1989 թ. ԼՂԻՄ-ում 19.300 ադրբեջանցի գյուղաբնակներից 14.317-ը բնակվում էին ջրաքաղաքական նշանակություն ունեցող ադրբեջանական գյուղերում, որոնց 61,2 %-ը կազմում էին խորհրդային շրջանում հիմնված նոր գյուղերը:

Ջրային ռեսուրսների պյոբլեմը այսօր արդիական խնդիր է նաև այնպիսի հզոր երկրի համար, ինչպիսին ԱՄՆ-ն է: Չունենալով արտաքին ջրային սնուցում որևէ թշնամի երկրից՝ ԱՄՆ-ը, լինելով գերհզոր տերություն, այդուհանդերձ, մեծ ուշադրություն է դարձնում իր ջրային ենթակառուցվածքների դեմ ուղղված

<sup>11</sup> Տես Գ. Բարսյան, Նշ. աշխ.:

<sup>12</sup> Տես Գ. Բարսյան, Նշ. աշխ.:

<sup>13</sup> Այդ մասին ավելի համազամանորեն տես Կ. Ղահրամանյան, Օջախի գիրք, հ. 3: Ե., 2004:

հնարավոր անհամաչափ սպառնալիքներից պաշտպանվելու խնդրին: Մասնավորապես՝ ռազմական հետախուզության վարչությունը 1996 թ. պահանջեց ուսումնասիրել Մեծ լճերում ջրային հակինտների տարածման հանգամանքը<sup>14</sup>:

Վերը շարադրվածից պարզ է դառնում, որ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ժամանակ հայկական կողմի համար կենսական կարևորություն է ստանում ջրային անվտանգությունը: Սակայն ջրային ռեսուրսների խնդիրը նախկին ԼՂԻՄ-ի տարածքի հաշվառմամբ շատ խոցելի է, քանի որ գետերի մեծ մասը սկիզբ է առնում նրա սահմաններից դուրս, իսկ իր տարածքում գտնվող գետերը ամռանը՝ վեգետացիոն շրջանում, հիմնականում չորանում են: Ղարաբաղի ջրային անվտանգության ապահովման համատեքստում կարևոր նշանակություն են ստանում Քարվաճառի և Քաշաթաղի շրջանները: Այսպես՝ նախկին ԼՂԻՄ-ի հիմնական գետերի միջին տարեկան հոսքը կազմում է 942,3 մլն մ<sup>3</sup>, որից 785,9 մլն մ<sup>3</sup>-ը (83,4 %) բաժին է ընկնում Թարթառ և Խաչեն գետերին, որոնք սկիզբ են առնում Քարվաճառի շրջանում<sup>15</sup>: Այսինքն՝ այս շրջանի կորուստը ռեալ սպառնալիք է ԼՂՀ ջրային անվտանգության համար, քանի որ մնացած 156,4 մլն մ<sup>3</sup>-ը (16,6 %) հնարավորություն չի տա ապահովելու երկրի բնակչության կարիքների բավարարման համար անհրաժեշտ ծավալի նույնիսկ կեսը և պարենային անվտանգությունը: Հետևաբար, Քարվաճառի և Քաշաթաղի շրջանների կարգավիճակի հարցը առաջ է բերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գոյության խնդիրը: Որոշումների կայացման գործընթացի հետևանքները կարող են աղետալի լինել ոչ միայն ԼՂՀ, այլև ՀՀ ջրային անվտանգության համար: Կարևորագույն դեր ունի Հայաստանի ջրի հիմնական աղբյուրի՝ Սևանա լճի փրկությունը: Զգալի է նաև Ողջի, Որոտան, Խաչեն, Իշխանագետ, Կարկառ, Թարթառ և այլ գետերի նշանակությունը ԼՂՀ և ՀՀ գյուղատնտեսության, արդյունաբերության և այլ ոլորտներում գործունեության զարգացման համար:

Ելնելով մեր պետության ազգային անվտանգության ու կայուն զարգացման ռազմավարության տեսանկյունից՝ պետք է ջրային ռեսուրսների օգտագործման միջազգային նորմերին համապատասխան<sup>16</sup> հնարավորինս ճիշտ և խելամիտ օգտագործել մեր ջրային ռեսուրսները, դրանք համարել մեր երկրի կարևոր հարստություն՝ չնոռանալով, որ դրանք անսպառ չեն, և քաղաքական, ռազմական, տնտեսական խնդիրներ լուծելիս պետական և միջպետական ծրագրերում անպայման հաշվի առնել որպես բարձրագույն արժեք և շահավետ խաղաքարտ:

<sup>14</sup> Տես *Զ. Քոկեր*, Նշ. աշխ.:

<sup>15</sup> Տես *Դ. Բարսյան*, Նշ. աշխ.:

<sup>16</sup> Տես «Конвенция по охране и использованию трансграничных водотоков и международных озер». Хельсинки, 1992 (<http://www.un.org/russian/document/convents/water-conr.pdf>), նաև *С. В. Виноградов*. Международное право водных ресурсов ([http://cawater-info.net/bk/water\\_law/pdf/ilwr.pdf](http://cawater-info.net/bk/water_law/pdf/ilwr.pdf)):

**ПОЛИТОЛОГИЯ БЕЗОПАСНОСТИ**

**ПРОБЛЕМА ИСПОЛЬЗОВАНИЯ ВОДНЫХ РЕСУРСОВ  
КАК КОНФЛИКТОГЕННЫЙ ФАКТОР  
В КОНТЕКСТЕ КАРАБАХСКОГО КОНФЛИКТА**

*А. П. НАЗАРЕТЯН, майор, Начальник технического отдела  
военно-научного журнала «Айкакан банак» ИНСИ МО РА*

**РЕЗЮМЕ**

В последнее время в сфере международной безопасности на первый план выдвинулись так называемые «мягкие» угрозы. Наряду с ведущим в недавнем прошлом военным компонентом безопасности стали играть значительную роль энергетическая, контртеррористическая, экологическая, информационная, духовная и другие составляющие. В то же время для развития трансформируемых обществ одним из главных условий является управление человеческими и природными ресурсами.

С этих позиций в статье рассматривается проблема использования водных ресурсов как одного из главных конфликтогенных факторов в ближайшей перспективе.

Отмечается, что при разрешении Карабахского конфликта необходимо учитывать фактор обеспеченности НКР водными ресурсами в аспекте геополитической и географической специфики ее территории.

**POLITICAL SCIENCE OF SECURITY**

**THE PROBLEM OF UTILIZING WATER RESOURCES  
AS A CONFLICT GENERATING FACTOR  
IN THE CONTEXT OF THE KARABAKH CONFLICT**

*A. P. NAZARETYAN, Major, Head of the Technical Department  
of «Haikakan Banak» Defense-Academic Journal, INSS, MOD, RA*

**SUMMARY**

In the sphere of international security the so-called «soft» threats have recently come to the fore. Along with the military component of security, which had recently been the leading one, the energy, counterterrorist, environmental, information, spiritual and other components began to play a significant role. At the same time the management of human and natural resources is one of the main conditions for the development of the societies to be transformed.

On this aspect this article touches on the problem of utilizing water resources as one of the main conflict generating factors in the nearest perspective.

It has been mentioned in the article that while resolving the Karabakh conflict the factor of the NKR's supply with water resources in the aspect of geopolitical and geographic specificity of its territory should be considered.

**«ԷՐԵՐՈՒՆԻ» ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆԻ ՇՐՋԱՆՈՒՄ  
ԱՄՊԱՍԱԾՈՒԹՅԱՆ ԴԱՇՏԻ ԱԶԳԵՅՈՒԹՅՈՒՆԸ  
ՈԱԶՄԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԹՈՒՉՔՆԵՐԻ ՎՐԱ**

*Մ. Վ. ԵՓՐԵՄՅԱՆ, ավագ լեյտենանտ, օդերևութաբանական ծառայության պետ, ԵՊՀ ֆիզիկական աշխարհագրության ամբիոնի հայցորդ*



Հայաստանը լեռնային երկիր է և ունի բարդ ու բազմազան կլիմայական, միկրոկլիմայական և եղանակային պայմաններ<sup>1</sup>: Այստեղ ավիացիայի գործունեության կազմակերպման համար կարևոր նշանակություն ունեն թռիչքների իրականացման շրջանում կլիմայական պայմանների համալիր ուսումնասիրությունը և գնահատումը, ինչպես նաև տեղական պայմաններին բնորոշ կարճաժամկետ և բավարար սպասվվածությամբ կանխատեսման մեթոդների մշակումը, ինչը կարող է էապես մեծացնել թռիչքների անվտանգությունը:

Երևանի «Էրեբունի» օդանավակայանի շրջանի ամպամածության ընդհանուր դաշտի ուսումնասիրության, և թռիչքների վրա դրա ազդեցության գնահատման նպատակով օգտագործվել են «Էրեբունի» օդանավակայանի ավիաօդերևութաբանական կայանի (ԱՕԿ) 1970–2006 թթ. դիտարկումների օրական տվյալները, որոնց հիմնական մասը վերցվել է Հայպետհիդրոմետի տվյալների բազայից:

«Էրեբունի» օդանավակայանը գտնվում է Արարատ և Արագած հանգած հրաբխային լեռնազանգվածներով և Գեղամա լեռնաշղթայով շրջապատված Արարատյան գոգավորության հյուսիսարևելյան շրջանում՝ Հրազդան և Քասախ գետերի միջին հոսանքի հատվածում, Երևանի հարավարևմտյան մասում: Օդանավակայանի տարածքը ոչ մեծ թեքություն ունեցող հարթավայր է:

Օդանավակայանից դեպի հյուսիս–արևմուտք՝ մոտավորապես 6 կմ հեռավորության և ծովի մակերևույթից գրեթե նույն բարձրության վրա, գտնվում է «Զվարթնոց» միջազգային օդանավակայանը: Վերջինս գտնվում է նույն ֆիզիկաաշխարհագրական շրջանում և ունի գրեթե նույն կլիմայական պայմանները<sup>2</sup>:

Օդանավակայանի շրջանում ռելիեֆի խիստ բազմազանության ու յուրօրինակության հետևանքով ձևավորվում են բազմազան ու բարդ եղանակակլիմայական և միկրոկլիմայական առանձնահատկություններ, մթնոլորտային ճակատ-

<sup>1</sup> Տես Մ. Գ. Ներսիսյան, Հայաստանի կլիման: Ե., 1964, էջ 303:

<sup>2</sup> Տես «Климатические характеристики аэропорта Ереван». Управление Гидрометслужбы Армянской ССР. Е., 1969, с. 2:

ների շարժման և ներգանգվածային երևույթների առաջացման ու զարգացման առանձնահատուկ պայմաններ, ինչն էլ իր հերթին ազդեցություն է ունենում ավիաօդերևութաբանական կանխատեսումների և ավիացիայի աշխատանքների կազմակերպման ու թռիչքների անվտանգության ապահովման վրա:

Թռիչքների վրա (հատկապես՝ Հայաստանի լեռնային բարդ պայմաններում և ցածր բարձրություններով ուղղաթիռների թռիչքների համար) անմիջական ազդեցություն ունեցող գործոններից է ամպամածությունը\*, որի հետ կապված են ավիացիայի համար վտանգավոր այնպիսի մթնոլորտային երևույթներ, ինչպիսիք են՝ ուժեղ վերընթաց ու վարընթաց հոսանքները, կայծակ-ամպրոպները և դրանց օջախները, քամիների հանկարծակի պոռթկումները, հորդառատ տեղումները (դրանց հետևանքով խիստ վատանում է հորիզոնական տեսանելիությունը), թռչող տեխնիկայի թափահարումը, էլեկտրականացումը, սառցակալումը և այլն: Իսկ թռիչքների և վայրէջքի անվտանգությունը կապված է ամպերի ստորին սահմանի բարձրության, ինչպես նաև հորիզոնական ու անկյունային տեսանելիության և քամիների ուղղության ու արագության հետ<sup>3</sup>:

Այսպիսով՝ առաջին հերթին ուսումնասիրվում են թռիչքի շրջանում եղանակային պայմանները և ընդհանուր ամպամածության աստիճանը, ամպերի տեսակը, դրանց ստորին և վերին սահմանի բարձրությունը, ավիացիայի համար այն վտանգավոր օդերևութաբանական երևույթների առաջացման ու զարգացման հավանականությունը, որոնք կապված են ամպամածության հետ:

Ըստ բարձրության առանձնացնում են<sup>4</sup>

1. վերին հարկի ամպեր (ստորին սահմանի բարձրությունը՝ 6000 մ և ավելի),
2. միջին հարկի ամպեր (2000–6000 մ),
3. ստորին հարկի ամպեր (երկրի մակերևույթից մինչև 2000 մ),

4. ուղղաձիգ զարգացման ամպեր, որոնց ստորին սահմանի բարձրությունը խիստ տարբեր է և կարող է տատանվել 200-300 մետրից մինչև 3-4 կմ բարձրությունների միջև, իսկ գագաթների բարձրությունը կարող է հասնել մինչև 10-11 կմ: Հայաստանի պայմաններում այդ բարձրության վրա է գտնվում տրոպոպաուզան (ներքնոլորտի դադարի շերտը):

Ավիացիայի համար հատկապես վտանգավոր են ուղղաձիգ զարգացման կույտավոր (Cu), հզոր կույտավոր (TCu) և հատկապես կույտասանձրևային (Cb) ամպերը՝ իրենց ուժեղ վերընթաց ու վարընթաց մրրկային (տուրբուլենտ) հոսանքներով, ինչպես նաև զարգացած կայծակ-ամպրոպային օջախներով:

«Էրեբունի» օդանավակայանի շրջանի ամպամածության ընդհանուր դինա-

\* Ամպամածությունը չափվում է բալերով, ընդամին ամպամածության 1 բալին համապատասխանում է երկնակամարի 10 %-ի ծածկվածությունը: Ըստ աստիճանի տարբերում են լրիվ ամպամածություն (8-10 բալ), կիսամպամածություն (3-7 բալ) և պարզ (0-2 բալ):

<sup>3</sup> Տես «Руководство по практическим работам метеорологических подразделений авиации Вооруженных сил СССР», Министерство обороны СССР. М., 1981, с. 376:

<sup>4</sup> Տես А. М. Баранов, С. Г. Богаткин и др. Авиационная метеорология. Л., 1992, с. 483:

միկայի ուսումնասիրությունից պարզվում է, որ այստեղ, ինչպես և ամբողջ Հայաստանի տարածքում, ամպամածության ընդհանուր երևույթի ձևավորումը և խոնավ օդային զանգվածների ներհոսքը (ցիկլոնների, մթնոլորտային տաք և ցուրտ, ինչպես նաև օկլյուզիոն ճակատների տեսքով) տեղի են ունենում գլխավորապես հարավարևմտյան, արևմտյան, հյուսիսարևմտյան՝ Թուրքիայի և Սև ծովի շրջաններից, հյուսիսային բարեխառն կլիմայական գոտու շրջաններից և այլն:

Օդանավակայանի շրջանում ամպամածության դաշտի ձևավորման վրա մեծ ազդեցություն է ունենում նաև տարվա տաք ժամանակահատվածում ներգանգվածային երևույթների ակտիվացումը, որոնք հատկապես հետկեսօրյա ժամերին այստեղ ձևավորում են ուղղաձիգ զարգացման՝ կույտավոր, հզոր կույտավոր և կույտասանձրևային ամպեր, որոնց վերին սահմանի բարձրությունը կարող է հասնել 4-5 կմ-ի, իսկ առավելագույնը՝ 9-11 կմ-ի:


Ռիսումնասիրությունների արդյունքները ցույց են տալիս, որ օդանավակայանի շրջանին բնորոշ է երկնակամարի կիսամպամածությունը: Այսպես. տարվա ընթացքում դիտվում է 5 բալ ընդհանուր ամպամածություն և 3 բալ ներքին ամպամածություն:

Ամպամածությունն ունի ցայտուն արտահայտված սեզոնային և տարեկան ընթացք: Այսպես. այն մեծ է հատկապես տարվա ցուրտ ժամանակահատվածում և գարնանը (ընդհանուր ամպամածությունը՝ 6-7 բալ, իսկ ներքին ամպամածությունը՝ 4 բալ): Ամռանը և վաղ աշնանը հիմնականում լինում է պարզ եղանակ, թեև այս սեզոնին ներգանգվածային երևույթների ակտիվացման հետևանքով մեծանում է ուղղաձիգ զարգացման ամպերի քանակը:


1970–2006 թթ. ամպամածության դաշտի տվյալների ուսումնասիրությունից պարզ է դարձել օդանավակայանի շրջանում երկնակամարի պարզ, կիսամպամած և լրիվ ամպամած եղանակների կրկնելիությունը: Այսպես. ըստ բազմամյա միջին տարեկան կտրվածքի՝ գերակշռում են պարզ եղանակային պայմանները՝ 40 %, կիսամպամած եղանակները կազմում են 25 %, իսկ ամպամած եղանակների կրկնելիությունը՝ 35 %: Նշենք, որ լրիվ ամպամած եղանակների կրկնելիությունը մեծ է դեկտեմբեր–ապրիլ ամիսներին (շուրջ 50 %): Սինույն ժամանակ, այս ամիսներին հորիզոնական տեսանելիության վատթարացումն էլ ավելի է խոչընդոտում թռիչքների կազմակերպմանն ու դրանց անվտանգության ապահովմանը: Այսպես. երկրամերձ շերտի փաստացի եղանակային պայմանների սինօպտիկական քարտեզից (նկ. 1) երևում է, որ օդանավակայանի շրջանում 2009 թ. փետրվարի 28-ին Հայաստանի տարածք հարավարևմտյան ցիկլոնի ներխուժման և ճակատային երևույթների հետևանքով դիտվել են միջին ու վերին հարկերի համատարած ամպամածություն և միջինը 6 բալ ստորին հարկի կույտավոր ու կույտասանձրևային ամպեր, որոնց ստորին սահմանը եղել է 1000 մ բարձրության վրա, ինչպես նաև տեղումներ և քամու ուժգնացում մինչև 12 մ/վրկ արագություն: Դիտարկենք մեկ այլ դեպք տարվա տաք ժամանակահատվածում. 2008 թ. մայիսի 24-ին «Էրեբունի» օդանավակա-

յանի շրջանում դիտվել է պարզ, հանդարտ և առանց տեղումների եղանակ՝ պայմանավորված անտիցիկլոնային դաշտով (նկ. 2):

Ամպամածության դաշտի օրական դինամիկայի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ, ինչպես և ամպամած եղանակների կրկնելիության ժամանակ, այս դեպքում ևս ընդհանուր և ստորին հարկի ամպամածության դաշտը գերազանցում է դեկտեմբեր – ապրիլ ամիսների ամպամածության դաշտը: Չմռանն ու վաղ գարնանը ամպամածությունը լինում է ավելի մեծ առավոտյան ժամերին (միջինը 5 բալ), իսկ տարվա տաք ժամանակահատվածում այն առավել մեծ է հետկեսօրյա և երեկոյան ժամերին (միջինը 3 բալ), ինչը կապված է ներզանգվածային տեղական երևույթների ակտիվացման և ուղղաձիգ զարգացման ամպերի առաջացման հետ:



Նկ. 1. Հարավարևմտյան ցիկլոնի ներխուժումը Հայաստանի տարածք (2009 թ. փետրվարի 28, ժամը 04<sup>00</sup>)




Նկ. 2. Անտիցիկլոնային դաշտի արտաջուլումը երկրամերձերտի սինոպտիկական քարտեզում (2008 թ. մայիսի 24, ժամը 05<sup>00</sup>)

զարգացման կույտասանձրևային ամպերի առաջացման և առավել հզորացման հետ կապված, այստեղ դիտվում են կայծակ-ամպրոպ, հաճախ հորդառատ, բայց կարճատև անձրև, քամու ուժգնացում մինչև 10-15 մ/վրկ, հաճախ՝ մինչև 20 մ/վրկ և ավելի արագությամբ: Նշենք, որ տարվա ընթացքում միջին հաշվով գրանցվում է կայծակ-ամպրոպի 40-50 դեպք: Դրանց առավելագույն հաճախականությունը դիտվում է մայիս–հունիս ամիսներին: Այս երևույթները խիստ վտանգավոր են և հաճախ հանգեցնում են ավիացիայի աշխատանքների ժամանակավոր դադարեցմանը մինչև դրանց թուլանալը կամ թռիչքի շրջանից հեռանալը:

Հայաստանին բնորոշ լեռնային պայմաններում ռազմական ավիացիայի

աշխատանքների կազմակերպման վրա, հատկապես՝ ցածր բարձրություններով կատարվող թռիչքների ժամանակ, մեծ ազդեցություն են գործում ոչ միայն ամպամածության տեսակը, այլև ամպամածության առանձնապես ստորին սահմանի բարձրությունը:

Ամպերի տեսակների բազմամյա ուսումնասիրության շնորհիվ (կրկնելիության միջին ամսական և տարեկան կտրվածքով) պարզվել է, որ տարվա ցուրտ ժամանակահատվածում գերակշռող են (23 % դեպքերում) ստորին և միջին հարկի ամպերը՝ բարձր շերտավոր և բարձր կույտավոր, շերտակույտավոր և շերտաանձրևային ամպերի տարատեսակները, ինչը կապված է ցիկլոնային և ճակատային երևույթների ակտիվացման հետ, իսկ տաք ժամանակահատվածում գերակշռում են (16 % դեպքերում) ուղղաձիգ զարգացման կույտավոր, հզոր կույտավոր և կույտաանձրևային ամպերը, ինչը կապված է ներգանգվածային երևույթների ակտիվացման հետ: Այսպիսով՝ ընդհանուր առմամբ տարվա կտրվածքով միջին և վերին հարկերում գերակշռում են բարձր կույտավոր և փետրավոր (համապատասխանաբար՝ 39 % և 10 %), ստորին հարկում՝ շերտակույտավոր (18 %), ուղղաձիգ զարգացման՝ կույտաանձրևային (17 %) և կույտավոր (15 %) ամպերը (նկ. 3): Նշենք, որ ավիացիայի համար առանձնակի վտանգավոր չէ



Նկ. 3. Ամպերի հիմնական տեսակների բազմամյա միջին տարեկան կրկնելիությունը (%)

վերին և միջին հարկերի ամպամածությունը, առավել մեծ վտանգը կապված է ուղղաձիգ զարգացման և ստորին հարկի ցածր ամպամածության հետ, որը էական ազդեցություն է ունենում առանց այդ էլ լեռնային բարդ պայմաններում և ցածր բարձրություններով կատարվող ուղղաթիռների թռիչքների վրա:

Այսպիսով՝ տարվա ցուրտ ժամանակաշրջանում, երբ տիրապետող են բարեխառն գոտու ցուրտ օդային զանգվածները, թռիչքների համար խոչընդոտ են համատարած՝ 8-10 բալ ցածր ամպամածությունը (ստորին սահմանի 400-600 մ բարձրությամբ), ինչպես նաև այս սեզոնին բնորոշ ինվերսիոն երևույթներով (ջերմաշրջադասություն) պայմանավորված մառախուղները: Հաճախ (մասնավորա-

պես՝ դեկտեմբերի երկրորդ տասնօրյակից մինչև փետրվարի երկրորդ տասնօրյակի վերջը) այստեղ եղանակային պայմանները լինում են գրեթե ոչ թռիչքային:

Տարվա տաք ժամանակահատվածում այստեղ հաստատվող արևադարձային չոր և բարձր ջերմաստիճանային ֆոնով օդային զանգվածներն ստեղծում են պարզ եղանակային պայմաններ և ընդհանուր առմամբ բարենպաստ են թռիչքների կատարման համար, սակայն հետկեսօրյա ժամերին դիտվող ներգանգվածային երևույթները (վերընթաց ու վարընթաց մրրկային (տուրբուլենտ) հոսանքներ, կույտաանձրևային ամպեր՝ ստորին սահմանի 1400 մ բարձրությամբ, կայծակ-ամպրոպ), ինչպես նաև լեռնահովտային քամիները ստեղծում են թռիչքների համար անբարենպաստ եղանակային պայմաններ:

Հետևաբար՝ «Էրեբունի» օդանավակայանի շրջանում կատարված ամպամածության դաշտի ընդհանուր ուսումնասիրությունները և դրա ազդեցության գնահատումը կարող են էապես մեծացնել ռազմական ավիացիայի թռիչքների անվտանգությունը:

## ВОЕННАЯ МЕТЕОРОЛОГИЯ

### ВЛИЯНИЕ ПОЛЯ ОБЛАЧНОСТИ В РАЙОНЕ АЭРОПОРТА «ЭРЕБУНИ» НА ПОЛЕТЫ ВОЕННОЙ АВИАЦИИ

*М. В. ЕПРЕМЯН, старший лейтенант, начальник Метеорологической службы,  
соискатель кафедры физической географии ЕГУ*

#### РЕЗЮМЕ

В деятельности военной авиации главную роль играют комплексное изучение и оценка климатических условий, а также разработка методов прогнозирования, что может значительно повысить безопасность полетов. Непосредственное влияние на полеты, особенно в сложных горных условиях Армении и на низколетящие вертолеты, имеет облачность, которую классифицируют по видам облаков.

В области полета изучаются климатические условия, степень общей облачности, виды облаков, вероятность возникновения и развития тех опасных метеорологических явлений, которые связаны с облачностью. В зависимости от изучения форм, высоты, нижней границы, толщины, от фазового строения, вертикальной скорости и т. д. слоистообразных облаков можно контролировать эти процессы. Соответственно, общее изучение поля облачности в районе аэропорта «Эребуни» и оценка его влияния может существенно повысить безопасность полетов военной авиации.

**MILITARY METEOROLOGY**

THE IMPACT OF THE FIELD OF CLOUDINESS  
ON MILITARY AVIATION FLIGHTS  
IN THE EREBUNI AIRPORT REGION

*M. V. YEPREMYAN, Senior Lieutenant, Head of the Meteorological Service,  
Graduate Student at the Chair of Physical Geography, YSU*

SUMMARY

The comprehensive study and assessment of climatic conditions, as well as the devising of forecasting methods, which can considerably improve flight safety, play a large part in the military aviation activity. Cloudiness, classified according to the cloud types, has an immediate impact on flights, especially under Armenia's complicated mountainous conditions, and on low-flying helicopters.

Climatic conditions, level of overall cloudiness, cloud types, probability of emergence and development of those hazardous meteorological phenomena which are connected with cloudiness are studied in a flight area. These processes can be controllable depending on the study of forms, height, lower boundary, thickness, on the phase structure, vertical velocity, etc. of stratiform clouds. Thus, general study of the field of cloudiness in the Erebuni Airport region and its impact assessment can essentially increase flight safety of military aviation.

**ԹՈՒՐԹԻԱՅԻ ՀՕՊ-Ի ԵՎ ՀՀՊ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ  
ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ  
ՆԱԽԱԳԾԵՐԻ ՇՈՒՐԶ**

*Լ. Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆ, ՀՀ Նախագահի աշխատակազմի Քաղաքական հեղափոխությունների ինստիտուտի ավագ փորձագետ, թուրքագետ,  
Ա. Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, կապիտան, պահպանության վաշտի հրամանատար*



Սառը պատերազմի ավարտից հետո ձևավորվեցին աշխարհաքաղաքական նոր իրողություններ, ինչի հետևանքով էապես փոխվեցին շատ պետությունների անվտանգության, ուստի և պաշտպանության ռազմավարությունները:

Նոր իրողությունների ձևավորման հիմնական կիզակետերից



մեկում՝ Մերձավոր Արևելքում, գտնվող Թուրքիան, Վարչական պայմանագրի կազմակերպության հետ հակադրության մեջ գտնվող ՆԱՏՕ-ի առաջապահից վերածվելով ավելի ինքնուրույն և, միևնույն ժամանակ, ավելի բարդ ու բազմաշերտ ներքին և արտաքին սպառնալիքների<sup>1</sup> ենթակա տարածաշրջանային տերության, 1990-ական թվականներին արմատապես վերանայեց իր պաշտպանության ռազմավարությունը: Վերանայված ռազմավարության համաձայն՝ Թուրքիայի Զինված ուժերը պետք է պատրաստ լինեն կանխելու Թուրքիայի դեմ հարձակումները մինչև թուրքական տարածքին հասնելը: Այս ռազմավարությունը ենթադրում է գործողություններն սկսվելու դեպքում դրանք վարել թշնամու տարածքում<sup>2</sup>: ՌԻստի անհրաժեշտ է ունենալ ժամանակակից չափանիշներին համապատասխանող սպառազինություն և ռազմական տեխնիկա: 21-րդ դարի սպառնալիքների հաշվառմամբ Թուրքիան առաջնահերթությունը տալիս է հակաօդային և հակահրթիռային պաշտպանության (ՀՕՊ, ՀՀՊ) համակարգերին:

<sup>1</sup> Որպես նոր սպառնալիքների օրինակներ կարելի է նշել Մերձավոր Արևելքում սպառազինությունների աճող մրցավազքը, հրթիռային ու զանգվածային ոչնչացման զենքի և տեխնոլոգիաների զարգացումն ու տարածումը (տես *Sebnem Udum*. Missile Proliferation in the Middle East: Turkey and Missile Defence. «Turkish Studies Institute», 2003, Vol. 4, № 3, P. 76):

<sup>2</sup> Տես *Michael Robert Hickok*. Hegemon Rising: The Gap Between Turkish Strategy and Military Modernization. «The Eurasian Politician», 2001, February, Issue 3:

Քանի որ Թուրքիայի ՀՕՊ-ի և ՀՀՊ առկա համակարգերը, մասնավորապես՝ նրա օդային տարածքը հսկող փոքր հեռահարությամբ «Ռ-ապիեր» (*Rapier*) և «Ստինգեր» (*Stinger*), ինչպես նաև միջին հեռահարությամբ «Այ-Հոուկ» (*I-Hawk*) արդիականացված զենիթահրթիռային համակարգերը (ՉՀՀ)<sup>3</sup>, բավարար չեն նշված սպառնալիքները չեզոքացնելու համար, 2006 թ. հունիսին գումարված Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեի նիստում պաշտոնապես որոշվեց երկրի ՀՕՊ-ն ուժեղացնելու համար սկսել ՀՕՊ-ի և ՀՀՊ համակարգերի արդիականացման լայնածավալ ծրագրի իրագործումը՝ դրանց արտադրության գործում նախապատվությունը տալով տեղական ընկերություններին<sup>4</sup>: Այսպիսով՝ Թուրքիան, որն իր ՋՈՒ-ի նորագույն սպառազինության կարիքներն ապահովելու համար հիմնականում դիմում էր արևմտյան դաշնակիցների, ինչպես նաև Իսրայելի<sup>5</sup> օգնությանը, վերջին տարիներին սկսեց լուրջ ծրագրեր իրականացնել նաև նորագույն զինատեսակների մշակման և արտադրության զարգացման ուղղությամբ, ինչն արդեն ապահովել է շոշափելի արդյունք. 2008 թ. տվյալներով թուրքական ռազմաարդյունաբերական համալիրը բավարարել է բանակի ռազմատեխնիկական կարիքների 44,2 %-ը<sup>6</sup>:

Ներկայումս Թուրքիայում ՉՀՀ-ների, հրթիռահրետանային միջոցների, հրթիռների նախագծման և արտադրության ոլորտում գործում են «ՌՈՎԵՏՍԱՆ» (*ROKETSAN*) ու «ԱՍԵԼՍԱՆ» (*ASELSAN*) ընկերությունները, Ռազմաարդյունաբերության գիտահետազոտական-փորձարարական-արտադրական ինստիտուտը (ԹՈՒԲԻՏԱԿ–ՍԵՅՋ (*TÜBITAK-SAGE*))\* և այլ ընկերություններ: ՉՀՀ-ների և հրետանային համակարգերի գիտական և տեխնոլոգիական մշակումները ղեկավարում է Թուրքիայի գիտական ու տեխնոլոգիական հետազոտությունների խորհուրդը (ԹՈՒԲԻՏԱԿ (*TÜBITAK*))<sup>7</sup>, որը նաև համակարգում է աշխարհի առաջատար ընկերությունների հետ թուրքական ընկերությունների համագործակցությունը: Թուրքիան արդեն ունի իսրայելական կողմի հետ «Փոպեյ» (*Popeye*) երկիր–երկինք դասի հրթիռների, իսկ 1990-ական թվականների վերջին բրիտանական կողմի հետ կնքած պայմանագրի համաձայն՝ նաև «Ռ-ապիեր-2»

<sup>3</sup> Տես «Türkiye, İsrail'den 30 adet «Arrow» füze bataryası satın almaya çalışıyor» (<http://www.byegm.gov.tr/yayinlarimiz/disbasin/2000x/06/26x06x00.htm>):

<sup>4</sup> Տես «Turkey to Purchase AWACS From Boeing Company», 06.06.2002 ([http://english.peopledaily.com.cn/200206/06/eng20020606\\_97246.shtml](http://english.peopledaily.com.cn/200206/06/eng20020606_97246.shtml)), նաև՝ «İlk Awacs (Barış Kartalı) 2011'de geliyor». «Sabah», 08.02.2010:

<sup>5</sup> Տես «Awacs Base Open in Turkey». «The New York Times», 26.10.1983:

<sup>6</sup> SSM 2008 Yılı Faaliyet Raporu ([http://www.ssm.gov.tr/TR/duyurular/kurumsal\\_duyurlar/Pages/2008faaliyetraporu.aspx](http://www.ssm.gov.tr/TR/duyurular/kurumsal_duyurlar/Pages/2008faaliyetraporu.aspx)):

\* Ստեղծվել է 1972 թ. Թուրքիայի գիտական և տեխնոլոգիական հետազոտությունների խորհրդին (*TÜBITAK*) կից:

<sup>7</sup> 1963 թ. հիմնադրված այդ պետական գործակալությունը հիմնականում տնտեսական և տեխնոլոգիական զարգացմանն ուղղված ծրագրեր է իրականացնում և գործում է թուրքական կառավարությանը կից որպես գիտական-տեխնոլոգիական ոլորտի խորհրդակցական մարմին (տես Գիտական և տեխնոլոգիական հետազոտությունների խորհրդի կայքէջ (<http://www.tubitak.gov.tr>):

(*Rapier-2*) երկիր–երկինք դասի հրթիռների համատեղ արտադրության և դրանց որոշ խմբաքանակի ձեռքբերման հաջողված փորձ: Ամերիկյան «Բոյինգ» (*Boeing*) ընկերության հետ 2003 թ. ստորագրված պայմանագրի համաձայն և «Խաղաղության արժիվ» ծրագրի շրջանակներում թուրքական «ԹՌԻՍԱՇ» (*TUSAS*) ընկերությունը մասնակցում է թուրքական ռազմաօդային ուժերի (ՌՕՌԻ) համար պատվիրված օդային վերահսկողության և կառավարման համակարգերի (ԱՎԱԲՍ (*Airborne Warning and Control System—AWACS*)) հիմնային վերափոխման աշխատանքներին: Խոսքը «Բոյինգ-737» ինքնաթիռի հիմքի վրա ստեղծված «Ե-3Բ» «ԱՎԱԲՍ» համակարգի փոքր-ինչ ավելի պարզեցված տարբերակի մասին է<sup>8</sup>: Նշենք, որ այդ համակարգերը «Փատրիոտ» (*Patriot*) ու «Այ-Հոուկ» համակարգերի հետ համատեղ բավականին արդյունավետ են գործում միասնական դաշտում: Այդ պայմանագրի համաձայն Թուրքիան պետք է ձեռք բերի չորս «ԱՎԱԲՍ» ինքնաթիռներ, որոնցից մեկն արտադրվում է ԱՄՆ-ում, իսկ մնացած երեքը Թուրքիայում՝ «ԹՌԻՍԱՇ» ընկերության կողմից: Արտադրությունն սկսվել է 2005 թ., վերջնական հանձնումը տեղի կունենա 2010 թ. վերջին կամ 2011 թ. սկզբին<sup>9</sup>: Թուրքիայի ՌՕՌԻ-ն որոշակի փորձ ունի վերոնշյալ համակարգերի կիրառման ոլորտում, մասնավորապես՝ դեռ 1980-ական թվականներին ՆԱՏՕ-ի կողմից Թուրքիայի տարածքում հիմնվել է «ԱՎԱԲՍ»-ների կիրառման բազա<sup>10</sup>:

Թուրքիան հսկայական միջոցներ է հատկացնում նաև նորագույն կործանիչներ ձեռք բերելու համար: Պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեի 2006 թ. դեկտեմբերին կայացած նիստում հաստատվեց «Ֆ-35 ՋՍՖ» (*F-35 JSF*) կործանիչներ ձեռք բերելու և դրանց արտադրությանը մասնակցելու որոշումը: Նոր սերնդի այդ ինքնաթիռների արտադրության մեջ թուրքական ռազմաարդյունաբերական ընկերություններն ունեն ավելի քան 5,5 մլրդ դոլարի մասնաբաժին: Այդ ընկերություններից ամենախոշորներն են «ԹՌԻՍԱՇ»-ը, «ԹԵԻ»-ն (*TEI*), «ԲԱԼԵԲԱԼԻՓ»-ը (*KALEKALIP*), «ԱՅԵՍԱՇ»-ը (*AYESAŞ*) և «ԱՍԵԼՍԱՆ»-ը (*ASELSAN*)<sup>11</sup>: 2014 թ. Թուրքիան ձեռք կբերի 10 մլրդ ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժողությամբ 100 միավոր «Ֆ-35» (*F-35*) կործանիչներ, որոնք կփոխարինեն թուրքական ՌՕՌԻ-ի հնացած «Ֆ-16» (*F-16*) և վիետնամական պատերազմի շրջանից հայտնի «Ֆ-4» (*F-4*) ինքնաթիռներին<sup>12</sup>:

Ռազմաարդյունաբերության ոլորտում Թուրքիայի առաջատար «ԱՍԵԼՍԱՆ» ընկերությունը Թուրքիայի Պաշտպանական արդյունաբերության գործադիր կո-

<sup>8</sup> Stu «Turkey to Purchase AWACS From Boeing Company», 06.06.2002 ([http://english.peopledaily.com.cn/200206/06/eng20020606\\_97246.shtml](http://english.peopledaily.com.cn/200206/06/eng20020606_97246.shtml)):

<sup>9</sup> Stu «İlk Awacs (Barış Kartalı) 2011'de geliyor». «Sabah», 08.02.2010:

<sup>10</sup> Stu «Awacs Base Open in Turkey». «The New York Times», 26.10.2010:

<sup>11</sup> Stu «F-35'e Türk imzası» (<http://www.ssm.gov.tr/TR/dokumantasyon/basinbulteni/Pages/20071106.aspx>):

<sup>12</sup> Stu *Andrew McGregor*. Arming for Asymmetric Warfare: Turkey's Arms Industry in the 21st Century. «The Jamestown Foundation», June 2008, P. 13:

միտեի հետ համատեղ ձեռնամուխ է եղել ՋՈՒ-ի տարբեր զորատեսակների միասնական տեղեկատվական համակարգի ստեղծմանը: Ռազմական գործողությունների ժամանակ այն ապահովելու է օպերատիվ հաղորդակցությունը օդային, ռազմածովային ուժերի ու ցամաքային զորքերի (ՅՁ) միջև<sup>13</sup>: Նման հաղորդակցային համակարգ այժմ կիրառվում է ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի և մասամբ էլ՝ Իսրայելի ՋՈՒ-երում: Դրանով մի քանի անգամ կմեծանա թուրքական ՋՈՒ-ի ընդհանուր և առանձին ստորաբաժանումների կառավարման արդյունավետությունը: Ներկայումս «ԱՍԵԼՄԱՆ»-ի՝ ՀՕՊ-ի զարգացման նախագծերում առաջնային տեղ են զբաղեցնում ավիամերձ հսկողության «2009 ՍԵՐՎԱՐ» (2009 SERDAR) ռադիոտեղորոշումային կայանների (ՌՏԿ), «2011 ԹԻՀԱ ՍԱՐ» (2011 TIHA SAR), նավերի որոնման և կրակի կառավարման ՌՏԿ-ի, «2012 ՀՕՊ-ի ՌՏԿ-ի», «2016 բազմագործառույթ ՌՏԿ-ների» ծրագրերը, որոնք արդեն իսկ իրականացվում են ընկերության լայն ինժեներական հիմքերի վրա<sup>14</sup>:

Այս ընկերությունը երկար տարիներ աշխատանք էր տանում ՀՕՊ-ի ՌՏԿ-ների ստեղծման ուղղությամբ և արդեն 2009 թ. հունվարի 9-ին, ավելի քան 4 տարի տևած աշխատանքներից հետո Թուրքիայի ՅՁ հրամանատարությանը հանձնեց տեղական արտադրության առաջին ՌՏԿ-ն, որը որպես հիմնական միջոց կիրառվելու է ՅՁ ՀՕՊ-ի հսկողության ու նախազգուշացման՝ «ՀԵՌԻԿԿՍ» (HERIKKS) անվանումն ստացած համակարգի շրջանակներում: Թուրքիայի պաշտպանության նախարարությունը նպատակ ունի թուրքական արտադրության այդ ՌՏԿ-ները վաճառելու նաև այլ երկրների<sup>15</sup>: Փաստորեն, Թուրքիայի ռազմական արդյունաբերությունն զգալի հաջողությունների շնորհիվ հնարավորություն ունի ոչ միայն բավարարելու երկրի կարիքները, այլև դուրս գալու միջազգային շուկա: Մասնավորապես՝ դեռ 2005 թ. Թուրքիան սկսեց «Ստինգեր» ՁՀՀ թուրքական տարբերակների վաճառքը Նիդեռլանդներին և մի շարք այլ երկրների: Թուրքական ռազմաարդյունաբերական արտադրանքի արտահանման ծավալներով այսօր արդեն աչքի են ընկնում հատկապես թուրքական «ԱՍԵԼՄԱՆ»-ը, «ՌՈԿԵՏՄԱՆ»-ը, «ԹՈՒՍԱՇ»-ը, «ՄԿԵԿ»-ը (MKEK) և այլ ընկերություններ: Եթե արտադրանքի ընդհանուր արտահանումը 1997 թ. կազմել է 138 մլն դոլար, ապա 2006 թ. սկսել է արագ աճել՝ կազմելով 487 մլն, իսկ 2007 թ.՝ 615 մլն: Ավելին. դրված է ռազմավարական խնդիր՝ 2011 թ. թուրքական ռազմաարդյունաբերական արտադրանքի արտահանման ծավալները հասցնել 1 մլրդ դոլարի<sup>16</sup>:

Ռազմական արդյունաբերության ոլորտում ունեցած հաջողություններով

<sup>13</sup> Stü «Tankçı, gemi komutani ve pilot birbiriyle konuşabilecek». «Hürriyet», 17.04.2009:

<sup>14</sup> Stü «KKK, ilk milli radarı teslim aldı». «CNN Turk» (<http://www.cnnturk.com.tr/2009/bilim.teknoloji/teknoloji/01/10/kkk.ilk.milli.radari.teslim.aldi/508354.0/index.html>):

<sup>15</sup> Stü «Aselsan hava savunma erken ikaz radarini teslim etti» (<http://www.aselsan.com.tr>):

<sup>16</sup> Stü «SAVUNMA SANAYII MÜSTESARLIGI 2008 YILI FAALİYET RAPORU» (<http://www.ssm.gov.tr/anasayfa/kurumsal/Faaliyet%20Raporlar/2008%20Y%C4%B1%C4%B1%20Faaliyet%20Raporu.pdf>):

հանդերձ՝ Թուրքիայում դեռ անհրատեսական է համարվում միջին և, հատկապես, մեծ հեռահարությամբ արդյունավետ ՀՕՊ-ի համակարգերի ստեղծումը, ինչը պայմանավորված է այդ ոլորտում անհրաժեշտ տեխնոլոգիաների ու փորձի պակասով, ինչպես նաև անհրաժեշտ փորձառությամբ ինժեներակոնստրուկտորական կադրեր չունենալու հանգամանքով: Թուրքական ռազմական արդյունաբերությունը դեռ շատ անելիքներ ունի ոչ միայն ՀՕՊ-ի և ՀՀՊ հեռահար միջոցների, այլև նույնիսկ դրանց բաղադրամասերի արտադրության գործում և առայժմ ստիպված է դրանց ձեռքբերման համար դիմել առավելապես օտարերկրյա առաջատար ընկերություններին:

2006 թ. որոշմամբ Պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեն հեռահար ՀՕՊ-ի համալիրներ ձեռք բերելու նպատակով հայտամրցութային կարգով ներգրավեց ամերիկյան «Փատրիոտ ՓԱԶ-3» (*Patriot PAC-3*), ռուսաստանյան «Ս-300 ՊՄՈՒ-2 Ֆավորիտ» (*C-300 ПМУ-2 Фаворит*) և ամերիկա-խարայելական համատեղ արտադրության «Էրոու-2» (*Arrow-2*) ՁՀՀ-ներ արտադրող ընկերություններին, հետագայում՝ 2008 թ., չինական «ՍՊՄԻԷԶ» (*China Precision Machinery Import—Export Corporation—CPMIEC*) ընկերությանն իր «Էյչ Զյու-9» (*HQ-9*) համալիրներով, իսկ 2009 թ.՝ ֆրանս-իտալական համատեղ «Յուրոսեմ» (*Eurosam*) ընկերությանն իր «ՍԱՄՊ-S» (*SAMP-T*) համակարգերով<sup>17</sup>: ՀՕՊ-ի զարգացման ծրագրով նախատեսվում է առաջին փաթեթով մրցութային կարգով ձեռք բերել ՀՕՊ-ի մեծ հեռահարությամբ չորս համալիր, հետագայում ևս չորս համալիր ձեռք բերելու հեռանկարով: Այդ համալիրները մարտական հերթապահության են դրվելու 2010 թ., սակայն մրցույթի անցկացման վերջնական որոշումը կարող է ձգձգվել՝ կապված Թուրքիայի արտաքին քաղաքական մի շարք խնդիրների հետ:

ՀՕՊ-ի և ՀՀՊ համակարգերի գործունեությունը ապահովող սարքերն ու ծրագրային համակարգերը աշխարհում աշխատում են մեկ ընդհանուր դաշտում՝ կա՛ն ռուսաստանյան, կա՛ն ամերիկյան մոդելով. դեռ ոչ մի պետության չի հաջողվել ստեղծել ամերիկյան և ռուսաստանյան ՀՕՊ-ի համակարգերի բաղադրիչներից կազմված միասնական համակարգ\*։ Փաստորեն՝ ՀՕՊ-ի և ՀՀՊ արդիական համակարգ ստեղծելու հարցում Թուրքիան պետք է ընտրություն կատարի ԱՄՆ-ի և ՌԴ տեխնոլոգիաների միջև:

2008 թ. վերջին Ռուսաստանի պաշտպանության նախարարի՝ Թուրքիա կատարած այցի ժամանակ քննարկվեցին երկկողմ ռազմական համագործակցության մի շարք, այդ թվում նաև Թուրքիայում ՀՕՊ-ի համակարգի ներդրման, խնդիրներ: Բանակցություններ ընթացան նաև Թուրքիային «Ս-400 Տրիումֆ»

<sup>17</sup> Sbu «Türkiye'nin füzesi hangisi olacak», «Hürriyet», 15.02.2010; «F-35'te aslan payı Türk şirketlerinin», 02.02.2010 (<http://www.ihlas.net.tr>):

\* Օրինակ՝ Հունաստանը ձեռք է բերել ռուսաստանյան «Ս-300 ՊՄՈՒ-1», «Թոպ Մ-1», ամերիկյան «Փատրիոտ ՓԱԶ-3» ՁՀՀ-ներ, ունի «Սյրաժ-2000» և «Ֆ-16» կործանիչներ, սակայն դեռ չունի ՀՕՊ-ի և ՀՀՊ մեկ միասնական դաշտ, քանի որ ապահովող սարքավորումները և համակարգերը տարբեր են:

(C-400 *Truymf*) համալիրների վաճառքի շուրջ<sup>18</sup>: Հետագայում՝ 2009 թ. ապրիլին, Ստամբուլում անցկացված Ռազմական արդյունաբերության միջազգային ցուցահանդեսի («ԻՂԻՖ»)՝ *International Defense Industry Fair – IDIF*) ժամանակ ռուսաստանյան կողմի հետ կրկին քննարկվեցին Թուրքիային «Ս-400 Տրիումֆ» համալիրների վաճառքի հետ կապված հարցերը\*։ Սակայն թուրքական ղեկավարության համար բավականին դժվար կլինի ռուսաստանյան մոդելով ստեղծել երկրի ՀՕՊ-ի համապարփակ դաշտ, մոտավորապես, համաեվրոպական ընդհանուր ՀՕՊ-ի համակարգի մեջ։ Դրա բացատրությունն այն է, որ ՀՕՊ-ի և ՀՀՊ ապահովման գործում ՌԴ և ԱՄՆ-ի մոտեցումները էապես տարբեր են։ Ռուսաստանյան տարբերակում խնդրի լուծման հիմնական ծանրությունը դրվում է վրագետնյա ՉՀՀ-ների վրա, իսկ կործանիչ ավիացիային հատկացվում է նվազագույն դեր։ Ամերիկյան մոտեցումը տրամագծորեն հակառակն է։ Ըստ այդմ էլ միջոցները օժտված են համապատասխան հնարավորություններով։ Բացի այդ, ՀՕՊ-ի և ՀՀՊ համատարած դաշտը ենթադրում է տիեզերական կապի և հետախուզական բաղադրամասերի լայն կիրառություն, օդային հրամանատվական կետերի, կապի և տեղեկատվության ամենատարբեր սարքերի մեծ ներգրավվածություն, ինչն այսօր կարող են ապահովել ամերիկյան համակարգերը։ Այնպես որ, ՀՕՊ-ի համատարած դաշտ, որը նաև երաշխավորեր ՀՀՊ արդյունավետությունը, Թուրքիան իրականում կարող է ստեղծել ամերիկյան այն սարքավորումների և համակարգերի միջոցով, որոնք արդեն կիրառվում են մեկ տեղեկատվական և համագործակցության դաշտում։ Դեռ 1999 թ. Թուրքիան ձեռք էր բերել ամերիկյան բանակային երկրորդ տարատեսակի «ՓԱԶ-2» (*Patriot Advanced Capability-2–PAC-2*) ՉՀՀ-ների առաջին մարտկոցը, որը նախատեսված է ինքնաթիռների և քևավոր հրթիռների դեմ օգտագործելու համար։

Արդիական ու հզոր ՉՀՀ-ներից բացի, Թուրքիան նպատակ ունի ձեռք բերելու նաև օդային կառավարման կետեր՝ ինչպես ինքնաթիռների, այնպես էլ օդապարիկների ու անօդաչու թռչող ապարատների (ԱԹԱ-ներ) տեսքով։ Այդ ուղղությամբ ակտիվ քննարկումներ են տեղի ունենում իսրայելական և ամերիկյան մասնագետների հետ։ Թուրքական ռազմաարդյունաբերական համալիրը զուգահեռաբար յուրացնում է ԱԹԱ-ների արտադրությունը<sup>19</sup>։ Թուրքիայի ՁՈՒ-ում

<sup>18</sup> Տես «Russia in talks to sell Turkey air defense systems, company confirms», 29.04.2009 (<http://www.hurriyet.com.tr/english/world/11540318.asp?scr=1>); «Turkish, Russian ministers discuss proposals on air defense system» (<http://www.hurriyet.com.tr/english/world/10395591.asp>):

\* Ռուսաստանյան համալիրները հզոր հակաօդային և հակահրթիռային միջոցներ են։ Դրանք կարող են հակառակորդի ինքնաթիռները վնասազերծել 0.01–30 կմ բարձրության և առավելագույնը 200–400 կմ հեռավորության վրա, միանգամից խոցել 6 և ավելի նշանակետեր։ Պետք է նշել, որ ռուսաստանյան համալիրներ ձեռք բերելու ռուս-թուրքական բանակցությունները որևէ արդյունք չավեցին, և Թուրքիայի ՀՕՊ-ի և ՀՀՊ համակարգերի զարգացման գործում ՌԴ մասնակցությունը փաստորեն սահմանափակվելու է նշված մրցույթի շրջանակներով։

<sup>19</sup> Տես «Taktik İHA Geliştirme Projesi» ([http://www.ssm.gov.tr/TR/Projeler/havaaraclari/prjgrpiha/Pages/TaktikIHAGelistirme\\_K.aspx](http://www.ssm.gov.tr/TR/Projeler/havaaraclari/prjgrpiha/Pages/TaktikIHAGelistirme_K.aspx)):

արդեն կիրառվում են «ԹՈՒՍԱՇ» ընկերության արտադրած «Թուռնա» (*Turna*) անօդաչու թիրախաչին ինքնաթիռները: 2004 թվականից նույն ընկերության միջոցով իրականացվում է «Թուրքական ԱԹԱ» (*TIHA*) նախագիծը: Ներկայումս «ԲԱԼԵԲԱԼԻՓ-ԲԱՅԲԱՐ» (*KALEKALIP-BAYKAR*) և «ՎԵՍԹԵԼ» (*VESTEL*) ընկերությունները իրականացնում են մարտավարական ԱԹԱ-ների արտադրության նախագիծ, որի շրջանակներում նախատեսվում է ՑՁ-ին տրամադրել հետախուզական դիտարկման մարտավարական ԱԹԱ-ներ:

Առհասարակ, ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման և բանակը նոր մարտահրավերներին համապատասխանեցնելու թուրքական մոդելը բավականին ուսանելի է: Այն տարածաշրջանում հրահրում է սպառազինությունների նոր մրցավազք, որից դուրս մնալը յուրաքանչյուրի համար պարտության նախանշան է: ՀՀ ՁՈՒ-ն ևս ակամայից ներգրավվում է այդ մրցավազքի մեջ: ՀՀ ՁՈՒ-ն նույնպես ռազմատեխնիկական ապահովման խնդիրը հիմնականում լուծում է ներկրմամբ և մեծապես կախված է արտաքին գործոնից: Ուստի ավելի իրատեսական է ժամանակի ընթացքում, համագործակցելով արտասահմանյան ընկերությունների հետ, ստեղծել միասնական նախագծեր՝ մասամբ յուրացնելով որոշ զինատեսակների արտադրության գաղտնիքները: Խոսքը հատկապես վերաբերում է ՑՁ հրթիռային սպառազինությանը (հակատանկային հրթիռային համակարգեր, բազմատեսակ հրետանային հրթիռային համակարգեր, ՀՕՊ-ի՝ փոքր հեռահարությամբ համակարգեր և այլն), որոնք նախ՝ կիրառվում են ավելի հաճախ, հետևաբար դրանց լրակազմի ծախսը շատ է, և հետո՝ լեռնային պայմաններում ավելի գործածական են և, միևնույն ժամանակ, մեծացնում են կրակի արդյունավետությունը:

Դրա հետ մեկտեղ, հարկ է նշել, որ ՀՕՊ-ի և ՀՀՊ համակարգերի արդիականացման ռազմավարական նախագծերի թեկուզ մասամբ իրականացումը Թուրքիայից դեռ կպահանջի երկար ժամանակ ու ջանքեր, քանի որ այդ երկիրը կարիք ունի համապատասխան տեխնոլոգիաների, փորձի և կադրային ռեսուրսի:

## ВОЕННО-ТЕХНИЧЕСКАЯ ПОЛИТИКА ЗАРУБЕЖНЫХ СТРАН

### К ВОПРОСУ О СТРАТЕГИЧЕСКИХ ПРОЕКТАХ ПО МОДЕРНИЗАЦИИ СИСТЕМ ПВО И ПРО ТУРЦИИ

*Л. С. ОВСЕПЯН, ведущий эксперт Института политических исследований  
Аппарата Президента РА, турколог, А. К. ОГАНЕСЯН, капитан,  
командир роты охраны*

#### РЕЗЮМЕ

В 1990-ые годы Турция, сталкиваясь с новыми вызовами и угрозами, в том числе—обусловленными растущей гонкой вооружений в области ракетных технологий и средств, пересмотрела свою оборонную страте-

гию. В соответствии с этим был взят курс на модернизацию ВС с приоритетностью создания современных систем ПВО и ПРО.

С этой целью Турция разработала широкомасштабные проекты по обеспечению своих ВС этими системами и приступила к их реализации с возможно максимальным вовлечением в этот процесс своего военно-промышленного комплекса. И хотя Турция уже достигла заметных успехов, однако нехватка квалифицированных инженерных кадров и отсутствие высоких технологий, а также техническая и технологическая несовместимость стоящих на вооружении и приобретаемых комплексов ПВО и ПРО разных стран, значительно снижают темпы и масштабы выполнения указанных проектов.

В то же время опыт Турции в этой области может быть во многом поучительным для модернизации ВС Республики Армения.

## **MILITARY-TECHNICAL POLICY OF FOREIGN COUNTRIES**

### TO THE ISSUE OF STRATEGIC PROJECTS ON MODERNIZING TURKEY'S AIR DEFENSE AND MISSILE DEFENSE SYSTEMS

*L. S. HOVSEPYAN, Senior Fellow at the Institute of Political Research  
under the RA Administration of the President, Turkologist,*

*A. K. HOVHANNISYAN, Captain, Commander of Guard Company*

#### SUMMARY

In 1990s, faced with new challenges and threats, including those conditioned by the growing arms race in the field of missile technology and equipments, Turkey reviewed its defense strategy. In compliance with this, the modernization of the Armed Forces with the priority to the creation of modern Air Defense and Missile Defense systems was made for.

For this purpose, Turkey has developed large-scale projects on providing its Armed Forces with these systems and taken up their implementation with the maximum mobilization of its military-industrial complex in that process. And although Turkey has already made considerable progress, but the lack of skilled engineering staff and the absence of high technology, as well as technical and technological incompatibility of different countries' Air Defense and Missile Defense complexes both adopted and target ones, significantly reduce the rate and scale of implementing the mentioned projects.

At the same time Turkey's experience in this field can largely be preceptive for the modernization of the Armed Forces of the Republic of Armenia.

**ՀԱՄԱՐԻ ԲԱՌԱՐԱՆ**

*Ն. Ս. ՄԿՐՏՉՅԱՆ, կապիտան, Լ. Հ. ՊԱՊԻԿՅԱՆ, մայոր,  
Դ. Ս. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ, գնդապետ*

**ՀԱՅ-ՌՈՒՄԵՐԵՆ-ԱՆԳԼԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ**

ադրենապաշարիչ—адреноблокатор;  
adrenolytic agent  
ախտաբանություն—патология; patho-  
logy  
ախտածագում—патогенез; pathogene-  
sis, pathogeny  
ախտանշան—симптом; symptom  
ախտորոշում—1. диагностика, 2. диаг-  
ноз; diagnosis  
ածխաջրածնային հումք—углеводород-  
ное сырье; hydrocarbon material  
ամպ—облако, туча; cloud  
—բարձր կույտավոր ամպ—высококу-  
чевое облако; altocumulus cloud  
—բարձր շերտավոր ամպ—высокосло-  
истое облако; altostratus cloud  
—կույտաանձրևային ամպ—кучево-  
дождевое облако; cumulonimbus  
cloud  
—կույտավոր ամպ—кучевое облако;  
cumulus cloud  
—հզոր կույտավոր ամպ—мощно-куче-  
вое облако; deep cumulus cloud  
—շերտաանձրևային ամպ—слоисто-  
дождевое облако; nimbostratus  
cloud  
—շերտակույտավոր ամպ—слоисто-ку-  
чевое облако; stratocumulus cloud  
—փետրավոր ամպ—перистое облако;  
cirrus cloud  
ամպամածություն—облачность; cloudi-  
ness  
անոթների կծկանք—спазм сосудов; va-  
sospasm, angiospasm  
ավիաօդերևութաբանական դիտակետ—

авиаметеорологический наблюда-  
тельный пункт; air meteorological  
observation point  
բազմապատճառական հիվանդություն—  
многопричинная болезнь; multi-  
causal disease  
բացասական հարաբերակցություն—от-  
рицательный баланс; negative  
balance  
բրոնխային շնչահեղձուկ—бронхиаль-  
ная астма; bronchial asthma  
գերտեսականացած կազմ—сверхтеоре-  
тизированный состав; over-theore-  
tical staff  
գիծ—линия; line  
—անրակային գիծ—ключичная линия;  
clavicular line  
—հարկրծնակային գիծ—пригрудин-  
ная линия, парастеральная линия;  
parasternal line  
գոգավորություն—вогнутость; curva-  
ture, concavity  
եղանակագետ—синоптик; weather-  
forecaster  
ենթաբազմություն—подмножество; sub-  
multitude  
ենթաբջջային կառույց—субклеточная  
структура; subcellular structure  
երկրամերձ շերտ—околоземной слой;  
circumterrestrial stratum  
երկփեղկ փակման արտանկում—выпа-  
дение митрального клапана; pro-  
lapse of mitral valve  
զարկերակային հիպերթենզիա—арте-  
риальная гипертензия; arterial

hypertension  
 զորային ստաժավորում—войсковая стажировка; army probation period  
 զուգակցում—сочетание; combination, coupling  
 էլեկտրասրտագրություն—электрокардиография; electrocardiography  
 ընդմիջակայք—интервал; interval  
 ընտրազատում—отбор; selection  
 ընտրանք—выборка; selection  
 բթվահիմնային հաշվեկշիռ—кислотно-щелочной баланс; acid-base balance  
 ինժեներասակրավորային դասակ—инженерно-саперный взвод; field engineer platoon  
 լայնույթ—амплитуда, размах; amplitude  
 լեռնահովտային քամի—горно-долинный ветер; mountain-valley wind  
 ծագումնաբանություն—генеалогия; genealogy  
 ծայրամասային ընկալիչ—периферический рецептор; peripheral receptor  
 կայազոր—гарнизон; garrison  
 կանոնադրություն—положение, устав; 1. regulations, charter, 2. bylaw  
 կանոնակարգում—регламентация; regulation  
 կարգափոխում—инверсия; inversion  
 կետային գնահատական—точечная оценка; point estimate  
 կերպափոխում—трансформация; transformation  
 կշռյալ թիվ—взвешенное число; suspended number  
 կործանիչ—1. истребитель, 2. истребительный; 1. fighter, 2. destructive  
 —կործանիչ ավիացիա— истребительная авиация; fighters  
 —կործանիչ-նւթակոծիչ—истребитель-бомбардировщик; fighter bomber  
 կրծսկր—грудина; breast bone  
 կրծքաեղծուկ—стенокардия; breast pang

համախտանիշ—синдром; syndrome  
 համակարգայնություն—системность; system  
 հայտանրցույթ—тендер; tender  
 հաշվեկշիռ—баланс; balance  
 հարմարեցում—адаптация, приспособление; adaptation  
 հիստագիր—гистограмма; histogram  
 հիվանդաբանական միավոր—нозологическая единица; nosologic unit  
 հոգեծին գործոն—психогенный фактор; psychogenic factor  
 հրամայական—императив; imperative  
 հրետանավոր—артиллерист; artilleryman, gunner  
 մարմնական վարակիչ հիվանդություն—соматическая инфекционная болезнь, соматическая заразная болезнь; somatic infectious disease  
 մեկնակետ—исходная точка; departure point  
 մթնոլորտային ճակատ—атмосферный фронт; atmosphere front  
 միասնականացում—единение; unity, cohesion  
 միջկող—межреберье; intercostal space  
 մոտոհրաձիգ—мотострелок; motorized infantry man  
 մրրկային հոսանք—вихревой поток; turbulent flow  
 մախափորձական տեղեկություն—априорное сведение; a priori information  
 մեյրոհորձնուկ նյութափոխանակային խանգարում—нейрогормональное нарушение обмена веществ; neurohormonal metabolic imbalance  
 ներգործություն—воздействие; impact, effect  
 ներզատիչ գեղձ—железа внутренней секреции; endocrine gland  
 նշիկաբորբ—тонзиллит; tonsillitis, amygdalitis  
 շարան—кортеж; cortege

պահանջմունք—потребность; requirement, need	նետուրս—ресурс; resource
պաշտոնական—официальный; official	—կադրային նետուրս—кадровый ресурс; staffing resource
պաշտոնեական—должностной; official	—վերականգնվող նետուրս—восстанавливаемый ресурс; renewable resource
—պաշտոնեական առաջխաղացում—должностное продвижение; promotion	—փոխարինելի նետուրս—заменяемый ресурс; replaceable resource
պաշտպանական կազմակերպվածք—оборонная организация, оборонная организационная структура; defense organization, defense organizational structure	վարրնթաց—1. нисходящий, 2. минорный; 1. descending, 2. minor
պատճառագիտություն—этиология; aetiology	վարժանք—тренировка; training
պատրաստականություն—готовность; readiness	վերաորակավորում—переквалификация; requalification
պատրաստականություն—выучка; 1. skill, 2. preparedness	վերապատրաստում—переподготовка; intraining
պատրաստվածություն—подготовленность; preparedness	վերգետնյա—надземный; overground
պատրաստություն—готовность; readiness	վերընթաց—1. восходящий, 2. мажорный; 1. rising, 2. major
պատրաստում—подготовка; 1. training, 2. preparation	վրագետնյա—наземный; ground
պտկային մկան—сосочковая мышца; papillary muscles	տարամիտում—расхождение; divergence
ջերմաշրջադասություն—теплоинверсия; thermal inversion	տեղեկատվություն—информирование, 1. informing, 2. information
ջրային—1. водный, 2. водяной; water	տեղեկութվորում—информатизация; informatization
—ջրային հակինթ—водный гиацинт; water hyacinth	տեղեկութացում—информатизация; informatization
—ջրային ճնշում—водяное давление; water pressure	տեղեկութ— информация; information
—ջրային ճնշման քաղաքականություն—политика водного нажима; water pressure policy	տեղեկունակություն—информативность; informativity
—ջրային պարտադրանք—водный диктат; water diktat	տիրույթ—1. диапазон, область, 2. владение, область; 1. range, 2. possession
ռադիոտեղորոշումային կայան—радиолокационная станция; radar station	ուշադիրություն—внимательность; attentiveness
ռազմարշավային առաքելություն—экспедиционная миссия; expeditionary mission	ուշադրություն—внимание; attention
	ուրվապատկեր—конфигурация;
	փականային ախտահարում—клапанное заражение; valvate infection
	փոխակերպում—преобразование; transformation
	փորձառություն—опытность; proficiency, experience
	փորձարարական բաշխում—эмпириче-

ское распределение; empiric distribution  
փոքրաչափի հաճախարստություն—желудочковая тахикардия; ventricular tachycardia

փոփոխակալին շարք—вариационный ряд; variation raw  
փուլային կերպափոխում—позатпное трансформирование; gradual transformation

РУССКО-АРМЯНСКИЙ СЛОВАРЬ

авиаметеорологический наблюдательный пункт—ավիաօդերևութաբանական դիտակետ  
адаптация—հարմարեցում  
адреноблокатор—ադրենապաշարիչ  
амплитуда—լայնույթ  
априорное сведение—նախափորձնական տեղեկություն  
артериальная гипертензия—զարկերակային հիպերթենզիա  
артиллерист—հրետանավոր  
атмосферный фронт—մթնոլորտային ճակատ  
баланс—հաշվեկշիռ  
—кислотно-щелочной баланс—թթվահիմնային հաշվեկշիռ  
—отрицательный баланс—բացասական հարաբերակցություն  
бронхиальная астма—բրոնխային շնչահեղձուկ  
вариационный ряд—փոփոխակալին շարք  
взвешенное число—կշռյալ թիվ  
вихревой поток—մրրկային հոսանք  
владение—1. տիրույթ, կալված, 2. տիրապետում, 3. տիրում  
внимание—ուշադրություն  
внимательность—ուշադիրություն  
вогнутость—գոգավորություն  
водный—ջրային  
—водный гиацинт—ջրային հակինթ  
—водный диктат—ջրային պարտադրանք  
—политика водного нажима—ջրային ճնշման քաղաքականություն

водяной—ջրային  
—водяное давление—ջրային ճնշում  
воздействие—մերգործություն  
войсковая стажировка—զորային ստաժավորում  
восходящий—վերընթաց  
выборка—ընտրանք  
выпадение митрального клапана—երկփեղկ փականի արտանկում  
выучка—պատրաստականություն  
гарнизон—կայազոր  
генеалогия—ծագումնաբանություն  
гистограмма—հիստագր  
горно-долинный ветер—լեռնահովտային քամի  
готовность—1. պատրաստություն, 2. պատրաստականություն  
грудина—կրծուկը  
диагноз—ախտորոշում  
диагностика—1. ախտորոշում, 2. արատորոշում  
диапазон—տիրույթ  
должностной—պաշտոնեական  
—должностное продвижение—պաշտոնեական առաջխաղացում  
единение—միասնականացում, միասնացում  
железа внутренней секреции—ներզատիչ գեղձ  
желудочковая тахикардия—փոքրաչափի հաճախարստություն  
императив—հրամայական  
инверсия—կարգափոխում  
инженерно-саперный взвод—ինժեներասակրավորային դասակ

интервал—ընդմիջակայք  
 информативность—տեղեկունակություն  
 информатизация—1. տեղեկութացում, 2. տեղեկութավորում  
 информация—1. տեղեկույթ, 2. *см. информирование*  
 информирование—տեղեկատվություն  
 истребитель—կործանիչ  
 —истребитель-бомбардировщик—կործանիչ-նմրակոծիչ  
 истребительный—կործանիչ  
 —истребительная авиация—կործանիչ ավիացիա  
 исходная точка—մեկնակետ  
 клапанное заражение—փականային ախտահարում  
 конфигурация—1. փոխադասավորություն, 2. որվապատկեր  
 кортеж—շարան  
 линия—գիծ  
 —ключичная линия—անրակային գիծ  
 —парастернальная линия—*см. пригрудинная линия*  
 —пригрудинная линия—հարկրծուկրային գիծ  
 мажорный—վերընթաց  
 межреберье—միջկող  
 минорный—վարընթաց  
 многопричинная болезнь—բազմապատճառական հիվանդություն  
 мотострелок—մոտոհրաձիգ  
 наземный—վերգետնյա  
 наземный—վրագետնյա  
 нейроромональное нарушение обмена веществ—նեյրոհորմոնալ նյութափոխանակային խանգարում  
 нисходящий—վարընթաց  
 нозологическая единица—հիվանդաբանական միավոր  
 облако—ամպ  
 —высококучевое облако—բարձր կույտավոր ամպ  
 —высокослоистое облако—բարձր շերտավոր ամպ

—кучево-дождевое облако—կույտահանձրևային ամպ  
 —кучевое облако—կույտավոր ամպ  
 —мощно-кучевое облако—հզոր կույտավոր ամպ  
 —перистое облако—փետրավոր ամպ  
 —слоисто-дождевое облако—շերտահանձրևային ամպ  
 —слоисто-кучевое облако—շերտակույտավոր ամպ  
 область—1. *см. диапазон*, 2. *см. впадение* 1, 3. բնագավառ  
 облачность—ամպամածություն  
 оборонная организационная структура—*см. оборонная организация*  
 оборонная организация—պաշտպանական կազմակերպվածք  
 околослойной слой—երկրամերձ շերտ  
 опытность—փորձառություն  
 отбор—ընտրագատում  
 официальный—պաշտոնական  
 патогенез—ախտածագում  
 патология—ախտաբանություն  
 переквалификация—վերաորակավորում  
 переподготовка—վերապատրաստում  
 периферический рецептор—ծայրամասային ընկալիչ  
 подготовка—պատրաստում  
 подготовленность—պատրաստվածություն  
 подмножество—ենթաբազմություն  
 положение—1. դրություն, 2. կանոնադրություն, 3. դրույթ  
 потребность—պահանջմունք  
 поэтапное трансформирование—փուլային կերպափոխում  
 преобразование—փոխակերպում  
 приспособление—1. հարմարանք, 2. *см. адаптация*  
 психогенный фактор—հոգեծին գործոն  
 радиолокационная станция—ռադիոտեղորոշումային կայան

размах—см. *амплитуда*  
 расхождение—տարամիտում  
 регламентация—կանոնակարգում  
 ресурс—նետուրս  
 —восстанавливаемый ресурс—վերականգնվող նետուրս  
 —заменяемый ресурс—փոխարինելի նետուրս  
 —кадровый ресурс—կադրային նետուրս  
 сверхтеоретизированный состав—գերտեսականացած կազմ  
 симптом—ախտանշան  
 синдром—համախտանիշ  
 синоптик—եղանակագետ  
 системность—համակարգայնություն  
 соматическая заразная болезнь—см. *соматическая инфекционная болезнь*  
 соматическая инфекционная болезнь—մարմնական վարակիչ հիվանդություն  
 сосочковая мышца—ստկային մկան  
 сочетание—զուգակցում

спазм сосудов—անոթների կծկանք  
 стенокардия—կրծքահեղձուկ  
 субклеточная структура—ենթաբջջային կառույց  
 тендер—հայտամրցույթ  
 теплоинверсия—ջերմաշրջադասություն  
 тонзиллит—նշիկաբորբ  
 точечная оценка—կետային գնահատական  
 трансформация—կերպափոխում  
 тренировка—վարժանք  
 туча—см. *облако*  
 углеводородное сырье—ածխաջրածնային հումք  
 устав—см. *положение 2*  
 экспедиционная миссия—նազմարշավային առաքելություն  
 электрокардиография—էլեկտրասրտագրություն  
 эмпирическое распределение—փորձարարական բաշխում  
 этиология—պատճառագիտություն

ENGLISH-ARMENIAN DICTIONARY

adaptation—հարմարեցում  
 adrenolytic agent—ադրենապաշարիչ  
 aetiology—պատճառագիտություն  
 air meteorological observation point—ավիաօդերևութաբանական դիտակետ  
 amplitude—լայնույթ  
 amygdalitis—see *tonsillitis*  
 angiospasm—see *vasospasm*  
 a priori information—նախափորձնական տեղեկություն  
 army probation period—գորային ստաժավորում  
 arterial hypertension—զարկերակային հիպերթենզիա  
 artilleryman—հրետանավոր  
 atmosphere front—մթնոլորտային ճակատ  
 attention—ուշադրություն

attentiveness—ուշադիրություն  
 balance—հաշվեկշիռ  
 —acid-base balance—թթվահիմնային հաշվեկշիռ  
 —negative balance—բացասական հարաբերակցություն  
 breast bone—կրծոսկր  
 breast pang—կրծքահեղձուկ  
 bronchial asthma—բրոնխային շնչահեղձուկ  
 bylaw—կանոնադրություն  
 charter—see *regulations*  
 circumterrestrial stratum—երկրամերձ շերտ  
 cloud—ամպ  
 —altocumulus cloud—բարձր կույտավոր ամպ  
 —altostratus cloud—բարձր շերտավոր

- ամպ  
 —cirrus cloud—փետրավոր ամպ  
 —cumulonimbus cloud—կույտաանձրեկային ամպ  
 —cumulus cloud—կույտավոր ամպ  
 —deep cumulus cloud—հզոր կույտավոր ամպ  
 —nimbostratus cloud—շերտաանձրեկային ամպ  
 —stratocumulus cloud—շերտակույտավոր ամպ  
 cloudiness—ամպամածություն  
 cohesion—1. համախմբվածություն, 2. see *unity 2*  
 combination—գուգակցում  
 concavity—see *curvature*  
 configuration—1. փոխդասավորություն, 2. ուրվապատկեր  
 cortege—շարան  
 coupling—see *combination*  
 curvature—գոգավորություն  
 defense organization—պաշտպանական կազմակերպվածք  
 defense organizational structure—see *defense organization*  
 departure point—մեկնակետ  
 descending—վարընթաց  
 destructive—կործանիչ  
 diagnosis—ախտորոշում  
 divergence—տարամիտում  
 effect—1. ազդեցություն, 2. see *impact*  
 electrocardiography—էլեկտրասրտագրություն  
 empiric distribution—փորձաբարական բաշխում  
 endocrine gland—ներզատիչ գեղձ  
 expeditionary mission—ռազմարշավային առաքելություն  
 experience—1. փորձ, 2. see *proficiency 2*  
 field engineer platoon—ինժեներասակրավորային դասակ  
 fighter—1. մարտիկ, 2. կործանիչ  
 —fighter bomber—կործանիչ-ռմբակործիչ  
 —fighters—կործանիչ ավիացիա  
 garrison—կայազոր  
 genealogy—ծագումնաբանություն  
 gradual transformation—փուլային կերպափոխում  
 ground—վրագետնյա  
 gunner—see *artilleryman*  
 histogram—հիստագիր  
 hydrocarbon material—ածխաջրածնային հումք  
 impact—ներգործություն  
 imperative—հրամայական  
 information—1. տեղեկույթ, 2. տեղեկատվություն  
 informativity—տեղեկունակություն  
 informatization—1. տեղեկութվորում, 2. տեղեկութացում  
 informing—տեղեկատվություն  
 intercostal space—միջկող  
 interval—ընդմիջակայք  
 inversion—կարգափոխում  
 line—գիծ  
 —clavicular line—անրակային գիծ  
 —parasternal line—հարկրծոսկրային գիծ  
 major—վերընթաց  
 minor—վարընթաց  
 motorized infantry man—մոտոհրաձիգ  
 mountain-valley wind—լեռնահովտային քամի  
 multicausal disease—բազմապատճառական հիվանդություն  
 need—1. անհրաժեշտություն, 2. see *requirement*  
 neurohormonal metabolic imbalance—նեյրոհորմոնալ նյութափոխանակային խանգարում  
 nosologic unit—հիվանդաբանական միավոր  
 official—1. պաշտոնական, 2. պաշտոնեական  
 overground—վերգետնյա  
 over-theoretical staff—գերտեսականացած կազմ

papillary muscles—պտկային մկան  
 pathogenesis—ախտածագում  
 pathogeny—see *pathogenesis*  
 pathology—ախտաբանություն  
 peripheral receptor—ծայրամասային ընկալիչ  
 point estimate—կետային գնահատական  
 possession—1. տիրույթ, 2. տիրում, 3. տիրապետում, 4. ունեցվածք  
 preparation—պատրաստում  
 preparedness—1. պատրաստականություն, 2. պատրաստվածություն  
 proficiency—1. հմտություն, ձեռնահասություն, 2. փորձառություն  
 prolapse of mitral valve—երկփեղկ փականի արտանկում  
 promotion—պաշտոնեական առաջխաղացում  
 psychogenic factor—հոգեծին գործոն  
 radar station—ռադիոտեղորոշումային կայան  
 range—1. տիրույթ, 2. շարք, 3. շղթա, 4. հրաձգարան  
 readiness—1. պատրաստականություն, 2. պատրաստություն  
 regulation—կանոնակարգում  
 regulations—կանոնադրություն  
 requalification—վերաորակավորում  
 requirement—պահանջում  
 resource—ռեսուրս  
 —renewable resource—վերականգնվող ռեսուրս  
 —replaceable resource—փոխարինելի ռեսուրս  
 —staffing resource—կադրային ռեսուրս  
 retraining—վերապատրաստում  
 rising—վերընթաց

selection—1. ընտրանք, 2. ընտրագատում  
 skill—պատրաստականություն  
 somatic infectious disease—մարմնական վարակիչ հիվանդություն  
 subcellular structure—ենթաբջջային կառույց  
 submultitude—ենթաբազմություն  
 suspended number—կշռյալ թիվ  
 symptom—ախտանշան  
 syndrome—համախտանիշ  
 system—1. համակարգ, 2. համակարգանություն  
 tender—1. առաջարկություն, 2. հայտամրցույթ  
 thermal inversion—ջերմաշրջադասություն  
 tonsillitis—նշիկաբորբ  
 training—1. պատրաստում, 2. վարժանք  
 transformation—1. կերպավորում, 2. փոխակերպում  
 turbulent flow—մրրկային հոսանք  
 unity—1. միասնություն, 2. միասնականացում, 3. միասնացում  
 valvate infection—փականային ախտահարում  
 variation raw—փոփոխակային շարք  
 vasospasm—անոթների կծկանք  
 ventricular tachycardia—փորոքային հաճախասրտություն  
 water—1. ջուր, 2. ջրային  
 —water diktat—ջրային պարտադրանք  
 —water hyacinth—ջրային հակիինք  
 —water pressure—ջրային ճնշում  
 —water pressure policy—ջրային ճնշման քաղաքականություն  
 weather-forecaster—եղանակագետ

### **Ի գիտություն հեղինակների և ընթերցողների**

ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսն ընդգրկված է ԲՈՒՀ-ի կողմից հաստատված «Դոկտորական և թեկնածուական առենախոսությունների արդյունքների հրապարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Հոդվածները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, երկու օրինակով՝ շարված 1,5 ինտերվալով, մինչև 10 համակարգչային էջ ծավալով, հոդվածին կից պետք է լինեն նրա ռուսերեն և անգլերեն ամփոփումները մինչև 2 էջ ծավալով:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարևոր աղբյուրները:

Հեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիության և գաղտնիության պահանջների պահպանման համար:

Հեղինակների դիրքորոշումը պարտադիր չէ, որ համընկնի խմբագրության դիրքորոշման հետ:

Դիագրամները, սխեմաները, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող ռազմամասնագիտական հասկացումները:

Ձեռագրերը հետ չեն վերադարձվում:

Հոդվածները հրապարակվում են պարտադիր գիտական փորձաքննություն անցնելուց հետո:

Նյութերի մասամբ կամ ամբողջությամբ արտատպումը թույլատրվում է միայն խմբագրության գրավոր համաձայնությամբ:

### **К сведению авторов и читателей**

Военно-научный журнал Института национальных стратегических исследований им. Д. Канаяна МО РА «Айкакан банак» включен в утвержденный ВАК-ом «Список приемлемых журналов для публикации результатов докторских и кандидатских диссертаций».

Статьи следует представлять на армянском языке, в двух экземплярах, в пределах 10 компьютерных страниц, напечатанных в 1,5 интервала, с приложением резюме на русском и английском языках объемом до 2-х страниц.

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях.

Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

В статьях должны быть раскрыты употребляемые военно-специальные аббревиатуры.

Рукописи не возвращаются.

Статьи публикуются после прохождения обязательной научной экспертизы.

Перепечатка частично или полностью материалов допускается только с письменного разрешения редакции.

### **For the information of the authors and readers**

Defense-academic journal «Haikakan banak» of Drastamat Kanayan Institute for National Strategic Studies of the Defense Ministry of the Republic of Armenia is included into «The list of acceptable magazines for the publication of the results of doctors and candidates' dissertations», affirmed by the Superior Attesting Commission.

The articles should be submitted in Armenian. Please, supply two copies. Articles are to be 1,5 spaced and should not exceed 10 computer pages in length. Provide Russian and English summaries (2 pages maximum).

Authors should give footnotes for the sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinions expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures and photos should be of clear print quality.

Please explain special military acronyms.

Manuscripts are not returned.

Articles get published after obligatory scientific examination.

Partially or fully re-printing of materials is allowed only by written permission of the editorial staff.

**ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԲԱՆԱԿ**

Պատասխանատու քարտուղար՝ Ա. Զ. Պեպրոսյան  
Ռազմագիտական խմբագրման բաժնի պետ՝ Զ. Դ. Ասատրյան  
Թարգմանչության և խմբագրման բաժնի պետ՝ Ա. Մ. Մովսիսյան  
Տեխնիկական բաժնի պետ՝ Ա. Պ. Նազարեթյան

Հայերեն տեքստերի խմբագիր՝ Ա. Կ. Շահբազյան  
Ռուսերեն և անգլերեն տեքստերի խմբագիր՝ Լ. Հ. Պասիկյան  
Ձևավորող նկարիչներ՝ Հ. Գ. Սահակյան, Դ. Ա. Փարվանյան  
Լուսանկարիչ՝ Ա. Դ. Ներսիսյան

Տեխնիկական և գեղարվեստական խմբագրումը՝ Ա. Պ. Նազարեթյանի  
Տեքստերի թարգմանությունը՝ Ա. Հ. Հակոբյանի, Ն. Ս. Մկրտչյանի, Ա. Զ. Պեպրոսյանի  
Համակարգչային ապահովումը՝ Գ. Ս. Դադայանի, Վ. Ռ. Խալաֆյանի  
Սրբագրիչներ՝ Ն. Հ. Բաղդասարյան, Ա. Հ. Սարուխանյան

Խորհրդատվություն անգլերեն տեքստերի վերաբերյալ՝ Ա. Հ. Հակոբյանի, Ա. Ա. Մարտիրոսյանի

Լուսանկարչական ապահովումը՝  
ՀՀ ՊՆ Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության

Խմբագրության հասցեն՝ Երևան, Կ. ՈՒՂԻՆԵՐՈՒ ՖՈՂՈՑ, 56/6, հեռ. 28-12-94, 23-29-71:

URL: <http://www.mil.am/arm/index.php?page=105>

Էլ. փոստ՝ haykakanbanak@mail.ru


© ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների  
ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2010 թ.

Ստորագրվել է տպագրության 12.06.2010: Թուղթը՝ օֆսեթային: Ձևաչափը՝ 70x100 1/16:  
Տեքստը՝ 132 էջ + 4 էջ ներդիր: Պայմանական տպագրական 10,5 մամուլ: Տպաքանակը՝ 500:  
Տառատեսակը՝ «Թայմս» և «Բայբիկա»: Տպագրությունը՝ օֆսեթ:  
Վկայական՝ 523: Դասիչ՝ 69263: ISSN 1829-0108:

Տպագրվել է «Լիմուշ» տպարանում:



ՀՀ ՉՈՒ-ի շարասյունը  
Մեծ Հաղթանակի 65-ամյակին նվիրված հանդիսավոր շքերթում.  
Մոսկվա, 2010 թ. մայիսի 9



# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ